- է) ԱՓԾ 28-ի (ՋԱՌ-ՖՍԼ 3 «Բժշկական օմնիբուս») հիման վրա ԲԵՄ ՖՍԼ 3.095(գ) (գ) (5)-ի «ԲԶԻԼԱ բժշկական զննման մասին տեղեկանքը լրացնելու կարգը» վերնագրով աղյուսակի փոփոխություն:
- ը) ԱՓԾ 28-ի (ՋԱՌ-ՖՍԼ 3 «Բժշկական օմնիբուս») հիման վրա ԲԵՄ ՖՍԼ 3.095 (գ) (6)-ի «Ակնաբուժական զննման մասին տեղեկանք» վերնագրով աղյուսակի փոփոխություն:
- թ) ԱՓԾ 28-ի (ՋԱՌ-ՖՍԼ 3 «Բժշկական օմնիբուս») հիման վրա ԲԵՄ ՖՍԼ 3.095(գ) (7)-ի «Ակնաբուժական զննման մասին տեղեկանքը լրացնելու կարգը» վերնագրով աղյուսակի փոփոխություն:
- ժ) ԱՓԾ 28-ի (ՋԱՌ-ՖՍԼ 3 «Բժշկական օմնիբուս») հիման վրա ԲԵՄ ՖՍԼ 3.095 (գ) (8)-ի «Օտորինոլարինգոլոգիական զննման մասին տեղեկանք» վերնագրով աղյուսակի փոփոխություն:
- ժա) ԱՓԾ 28-ի (ՋԱՌ-ՖՍԼ 3 «Բժշկական օմնիբուս») հիման վրա ԲԵՄ ՖՍԼ 3.095(գ) (9)-ի «Օտորինոլարինգոլոգիական զննման մասին տեղեկանքը լրացնելու ցուցումներ» վերնագրով աղյուսակի փոփոխություն:

ժբ) ԱՓԾ 28-ի (ՋԱՌ-ՖՍԼ 3 «Բժշկական օմնիբուս») հիման վրա ԲԵՄ ՖՍԼ 3.100 (ա)-ի «1-ին/2-րդ դասի բժշկական սերտիֆիկատ»-ի փոփոխություն:

ժգ) ԱՓԾ 28-ի (ՋԱՌ-ՖՍԼ 3 «Բժշկական օմնիբուս») հիման վրա ԲԵՄ ՖՍԼ 3.100 (բ)-ի «2-րդ դասի բժշկական սերտիֆիկատ»-ի փոփոխություն:

ժդ) ԱՓԾ 28-ի (ՋԱՌ-ՖՍԼ 3 «Բժշկական օմնիբուս») հիման վրա ԲԵՄ ՖՍԼ 3.100(գ)-ի փոփոխություն, «Սահմանափակումներ, պայմաններ և փոփոխություններ» վերնագրով աղյուսակի վերանվանում՝ «Սահմանափակումներ»-ի և աղյուսակի բովանդակության փոփոխություն:

ԲԵՄ ՖՍԼ-ի Ա, Բ և Գ ենթամասեր. ՄԱԻ «Քաղաքացիական ավիացիայի բժշկական ձեռնարկ»

ա) ՋԱՌ-ՖՍԼ 3-ի 2-րդ բաժնից հանված «Քաղաքացիական ավիացիայի բժշկական ձեռնարկ»-ը «JIP»-ի կազմում հրապարակվելու է որպես առանձին փաստաթուղթ: Ձեռնարկը կարող էք ձեռք բերել տպագիր տարբերակով՝ այն հրատարակող կազմակերպությունից կամ «pdf» ֆորմատով՝ www.jaa.nl -> Licensing -> JAA Manual of Civil Aviation Medicine»
ինտերնետային կայքից:]

ՄԻՏՈՒՄՆԱՎՈՐ ԴԱՏԱՐԿ ԹՈՂՆՎԱԾ ՏԱՐԱԾՔ

ՄԻՏՈՒՄՆԱՎՈՐ ԴԱՏԱՐԿ ԹՈՂՆՎԱԾ ՏԱՐԱԾՔ

ԲԱԺԻՆ 1. ՊԱՀԱՆՁՆԵՐ

1. Ընդհանուր

Սույն բաժինը պարունակում է Թոփչբային անձնակազմի վկայագրմանը ներկայացվող բժշկական պահանջները:

2. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

2.1 ՋԱՌ–ՏՄԼ–ին ներկայացվող բժշկական պահանջները ներկայացված են երկու պունակով՝ առանձին էջերի վրա, ընդ որում, յուրաքանչյուր էջում նշված է հրապարակման ամսաթիվը կամ այն փոփոխության համարը, որի ներքո այն փոփոխվում է կամ վերահրապարակվում:

2.2 Ենթավերնագրերը տրված են շեղատառով:

2.3 Բացատրական ծանոթագրությունները, որոնք պահանջների մաս չեն կազմում, տրված են ավելի փոքր տառատեսակով:

2.4 Նոր, փոփոխված և ուղղված տեքստը կներառվի ուղղանկյուն փակագծերում՝ մինչև հաջորդ «փոփոխության» լույս տեսնելը:

ՄԻՏՈՒՄՆԱՎՈՐ ԴԱՏԱՐԿ ԹՈՂՆՎԱԾ ՏԱՐԱԾՔ

ԵՆԹԱՄԱՍ Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐ

ՋԱՌ ՖՍԼ 3.015 Վկայականների, կարգերի, թույլտվությունների, հավաստագրերի կամ սերտիֆիկատների ընդունումը

(տե՛ս 1-ին հավելվածից մինչև ՋԱՌ-ՖՍԼ 1.015-ը)

(տե՛ս ՊԲԹԵ ՖՍԼ 1.005 և 1.015)

ա) ՄԱԻ անդամ պետությունների կողմից տրվող վկայականներ, կարգեր, թույլտվություններ կամ սերտիֆիկատներ

1) Եթե անձը, կազմակերպությունը կամ ծառայությունը վկայագրվում, ստանում է կարգ, թույլտվություն, հավաստագիր կամ սերտիֆիկատ ՄԱԻ անդամ պետության ավիացիոն մարմնի կողմից՝ ՋԱՌ-ՖՍԼ-ի պահանջներին և հարակից ընթացակարգերին համապատասխան, ապա այդ վկայականները, կարգերը, թույլտվությունները, հավաստագրերը կամ սերտիֆիկատները ՄԱԻ անդամ պետությունների կողմից պետք է ընդունվեն առանց ձևականությունների:

[Փոփոխություն 2, 2002 թվականի հունիսի 1, փոփոխություն 3, 2003 թվականի հունիսի 1, փոփոխություն 4, 2005 թվականի օգոստոսի 1]

ՋԱՌ-ՖՍԼ 3.025 Վկայականների և կարգերի վավերականությունը

2006 թվականի դեկտեմբերի 1

ա) Վկայականի վավերականությունը և կարգերի նորացումը

1) Վկայականի վավերականությունը որոշվում է դրանով տրված կարգերի և բժշկական սերտիֆիկատի վավերականության հիման վրա:

2) Կարգը տալու, այն նորացնելու կամ դրա գործողության ժամկետը երկարաձգելու ժամանակ ավիացիոն մարմինը կարող է երկարաձգել վավերականության ժամկետը մինչև այն ամսվա ավարտը, որի ընթացքում լրանում է վավերականությունը: Այդ ամսաթիվը շարունակում է համարվել կարգի գործողության ժամկետը լրանալու ամսաթիվը:

[Փոփոխություն 2, 2002 թվականի հունիսի 1, փոփոխություն 3, 2003 թվականի հունիսի 1, փոփոխություն 4, 2005 թվականի օգոստոսի 1]

ՋԱՌ-ՖՍԼ 3.035 Առողջական վիճակի պիտանիությունը

(Տե՛ս ԲԵՄ ՖՍԼ 3.035)

ա) *Պիտանիությունը.* բժշկական սերտիֆիկատ ունեցողը պետք է հոգեպես և ֆիզիկապես պիտանի լինի՝ անվտանգ կատարելու համար տվյալ վկայականով

նախատեսվող մասնագիտական պարտականությունները:

բ) Բժշկական սերտիֆիկատ ունենալու պահանջը. վկայական ստանալու կամ դրանով նախատեսված մասնագիտական պարտականություններն իրականացնելու նպատակով դիմելու համար դիմողը կամ վկայական ունեցողը պետք է ունենա ՋԱՌ-ՖՍԼ 3-րդ մասի դրույթներին (բժշկական) և վկայականով նախատեսված մասնագիտական պարտականություններին համապատասխան տրված բժշկական սերտիֆիկատ:

գ) Ավիաբժշկական գնությունը. քննությունից հետո դիմողը պետք է համարվի թռիչքային աշխատանքի համար պիտանի կամ ոչ պիտանի, կամ էլ այդ որոշումը պետք է կայացնի ավիացիոն մարմինը: Բժշկական գնում իրականացնելու համար լիազորված անձը (ԲԶԻԼԱ) պետք է դիմողին տեղեկացնի առողջական վիճակի մասին (բժշկական, աշխատանքային և այլն), որը կարող է արգելք հանդիսանալ՝ թռիչքային դասընթացներ անցնելու և (կամ) տրված վկայականով նախատեսված մասնագիտական պարտականությունները կատարելու համար:

դ) Բազմանդամ անձնակազմում օդաչուի աշխատանքային ներգրավվածության սահմանափակումը (ԲԱԱՆՍ՝ միայն 1-ին դասի համար):

1) Եթե առևտրային օդային փոխադրումներում ներգրավված օդաչուի կամ տրանսպորտային ավիացիայի օդաչուի վկայական ունեցող անձը լիովին չի համապատասխանում 1-ին դասի բժշկական սերտիֆիկատի պահանջներին, սակայն անաշխատունակության ռիսկի ընդունելի սահմաններում է, ապա պետք է կիրառվի «վավեր է միայն երկրորդ օդաչուի համար կամ նրա հետ» սահմանափակումը (տե՛ս ՋԱՌ-ՖՍԼ 3 (Բժշկական), ԲԵՄ ՖՍԼ Ա, Բ և Գ): Բազմանդամ անձնակազմի դեպքում սահմանափակումը կիրառում է ավիացիոն մարմինը: «Վավեր է միայն երկրորդ օդաչուի համար կամ նրա հետ» սահմանափակումը կարող է կիրառել կամ հանել միայն ավիացիոն մարմինը:

2) Մյուս օդաչուն պետք է ունենա համապատասխան որակավորում, չլինի 60 տարեկանից բարձր և ենթարկված չլինի օդաչուի աշխատանքային ներգրավվածության սահմանափակումներին:

ե) Բազմանդամ անձնակազմում բորտինժեների աշխատանքային ներգրավվածության սահմանափակում (ԲԱԱՆՍ՝ միայն 1-ին դասի բորտինժեների համար)

1) Եթե բորտինժեների վկայական ունեցող անձը լիովին չի համապատասխանում առաջին դասի բժշկական սերտիֆիկատի պահանջներին,

սակայն անաշխատունակության ռիսկի ընդունելի սահմաններում է, ապա պետք է կիրառվի բազմաճյուղյա անձնակազմում 1-ին դասի բորտինժեների աշխատանքային ներգրավվածության սահմանափակումը (տե՛ս ՋԱՌ-ՖՍԼ 3 (Բժշկական), ԲԵՄ ՖՍԼ Ա, Բ և Գ): Սույն սահմանափակումը կիրառվում է և կարող է հանվել միայն ավիացիոն մարմնի կողմից:

2) Թռիչքային անձնակազմի մյուս անդամները չպետք է ենթարկվեն որևէ ԲԱԱՆՍ-ի:

զ) Փոխարինող օդաչուի աշխատանքային ներգրավվածության սահմանափակում («ՓՈԱՆՍ»՝ միայն 2-րդ դասի համար). փոխարինող օդաչուն այն օդաչուն է, ով մասնագիտացած է այնպիսի դասի/տեսակի օդանավում որպես երկու դեկոլ (դեկավարման վահանակով) օդանավի հրամանատար աշխատելու և այդ օդանավում գտնվելու համար՝ բժշկական սերտիֆիկատով որոշակի սահմանափակումներ ունեցող օդանավի դեկավարի անաշխատունակության դեպքում օդանավի դեկավարումն ստանձնելու նպատակով (տե՛ս ԲԵՄ ՖՍԼ 3.035): Փոխարինող օդաչուի ներգրավմամբ սահմանափակումը կարող է կիրառել կամ հանել միայն ավիացիոն մարմինը:

[Փոփոխություն 1, 2000 թվականի դեկտեմբերի 1, փոփոխություն 2, 2006 թվականի դեկտեմբերի 1]

**ՋԱՌ-ՖՍԼ 3.040 Առողջական վիճակով
պայմանավորված սահմանափակում**

ա) *Բժշկական սերտիֆիկատ ունեցողները* չպետք է կատարեն իրենց վկայականներով, դրանցով սահմանված կարգերով կամ թույլտվություններով նախատեսված մասնագիտական պարտականություններն այն պահից, երբ նրանք տեղեկանում են իրենց առողջական վիճակով պայմանավորված սահմանափակման մասին, որը կարող է խոչընդոտել իրենց մասնագիտական պարտականությունների անվտանգ իրականացումը:

բ) *Բժշկական սերտիֆիկատ ունեցողները* չպետք է ընդունեն որևէ դեղամիջոց կամ դեղանյութ, լինի դա դեղատոմսով, թե առանց դրա, կամ որևէ բուժում ստանան, եթե լիովին համոզված չեն, որ տվյալ դեղորայքը կամ բուժումը բացասական ազդեցություն չի ունենա իրենց պարտականություններն անվտանգ կատարելու ունակության վրա: Ցանկացած կասկածի դեպքում նրանք պետք է դիմեն ԱԲԲ-ին, ԱԲԿ-ին կամ ԲԶԻԼԱ-ին՝ խորհրդատվություն ստանալու համար: Լրացուցիչ խորհրդատվությունը տրված է ԲԵՄ ՖՍԼ 3.040-ում:

գ) Բժշկական սերտիֆիկատ ունեցողները պետք է առանց անհարկի ուշացման դիմեն ԱԲԲ-ին, ԱԲԿ-ին կամ ԲԶԻԼԱ-ին՝

1) հիվանդանոցում կամ կլինիկայում 12 ժամից ավելի տևած հետազոտության,

2) վիրահատության կամ ինվազիվ միջամտության, կամ

3) դեղամիջոցի պարբերաբար ընդունման, կամ

4) շտկիչ լինզաներ պարբերաբար կրելու կարիքի դեպքում:

դ)[1)] Բժշկական սերտիֆիկատ ունեցողները, որոնք տեղեկանում են՝

[[(i)] որպես թոխչային անձնակազմի անդամ գործելու անկարողության հանգեցնող մարմնական լուրջ վնասվածքի մասին, կամ

[[(ii)] որպես թոխչային անձնակազմի անդամ 21 օր կամ ավելի ժամկետով գործելու անկարողության հանգեցնող լուրջ վնասվածքի մասին, կամ

[[(iii)] իրենց հղիության մասին, ավիացիոն մարմնին [կամ ԲԶԻԼԱ-ին, որն իր հերթին պետք է տեղեկացնի ավիացիոն մարմնին] պետք է գրավոր տեղեկացնի այդ վնասվածքի կամ հղիության մասին, իսկ հիվանդության դեպքում՝ 21 օրյա ժամանակահատվածը լրանալուն պես: Բժշկական սերտիֆիկատը պետք է համարվի կասեցված՝ նշված վնասվածքի առաջացման պահին կամ հիվանդության ժամանակահատվածի ավարտին կամ հղիության հաստատման դեպքում:

[[(2)] [] Վնասվածքի կամ հիվանդության դեպքում բժշկական սերտիֆիկատի գործողության կասեցումը

պետք է դադարեցվի [ԲԶԻԼԱ-ի կողմից՝
ավիացիոն մարմնի հետ խորհրդակցելուց
հետո] դրա այն կրողի համար, ում
առողջական վիճակի [] գնահատումը
[կատարում է ԲԶԻԼԱ-ն] կամ ավիացիոն
մարմինը, և ով հայտարարվում է պիտանի՝
աշխատելու որպես թռիչքային
անձնակազմի անդամ. բժշկական
սերտիֆիկատի գործողության կասեցումը
պետք է դադարեցվի նաև այն դեպքում, երբ
ավիացիոն մարմինը, իր []
[[հայեցողությամբ], սերտիֆիկատ
ունեցողին ազատում է բժշկական
գնությունն անցնելու պարտավորությունից
[] [.]:

[] [(3)] [] [] Հղիության դեպքում,
կասեցումը կարող է դադարեցվել []
[[ԲԶԻԼԱ-ի կողմից՝ ավիացիոն մարմնի
հետ խորհրդակցելուց հետո], ԲԶԻԼԱ-ի []
[[հայեցողությամբ] սահմանված
ժամկետով և պայմաններով, (տե՛ս ԶԱՌ-
ՖՍԼ 3.195(գ) և 3.315(գ)) []: [Եթե ԲԶԻԼԱ-ն
1-ին դասի օդաչուին գնահատում է որպես
1-ին դասի համար պիտանի, ապա պետք է
կիրառվի բազմանդամ անձնակազմում
օդաչուի աշխատանքային
ներգրավվածության սահմանափակում (1-
ին դասին ներկայացվող «ԲԱԱՆՍ»):
Սահմանափակումը պետք է վերացվի, երբ
սերտիֆիկատ ունեցողը, հղիության
ավարտից հետո ԲԶԻԼԱ-ի կողմից
անցնում է առողջական վիճակի
գնահատում և պիտանի է ճանաչվում:

Հղիության ավարտին պիտանիության
գնահատման արդյունքում ԲԶԻԼԱ-ն
կարող է հանել բազմանդամ
անձնակազմում օդաչուի աշխատանքային
ներգրավվածության սահմանափակումը
(1-ին դասին ներկայացվող «ԲԱԱՆՍ»)
այդ մասին տեղեկացնելով ավիացիոն
մարմնին:

[Փոփոխություն 1, 2000 թվականի դեկտեմբերի 1,
փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ԶԱՌ-ՖՍԼ 3.045 Հատուկ հանգամանքներ (Տե՛ս ՊԲԹԵ ՖՍԼ 3.045)

[]

[Փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ԶԱՌ-ՖՍԼ 3.046 Հատուկ բժշկական հանգամանքներ

Բժշկական նոր տեխնոլոգիայի,
դեղորայքի կամ միջամտության երևան
գալու դեպքում, որը կարող է արդարացնել
այն դիմողների պիտանիության
գնահատումը, ովքեր մինչ այդ չէին
բավարարում պահանջները, ավիացիոն
մարմինը կարող է, խորհրդակցելով
առնվազն մեկ այլ ավիացիոն մարմնի հետ,
ստեղծել Հետազոտության և զարգացման
աշխատանքային խումբ (ՀԶԱԽ՝)
առողջական վիճակի գնահատման նոր
ձևաթուղթ մշակելու և գնահատելու
համար: Ձևաթուղթը պետք է ներառի
ռիսկի գնահատում: Ձևաթուղթը պետք է
հավանություն ստանա Վկայագրման

ուրրտային թիմի կողմից՝ Վկայագրման ենթաուրրտային թիմի (բժշկական) առաջարկությամբ: Լրացուցիչ ցուցումները տրվում են համապատասխան նյութերում և հարակից ընթացակարգերում: Ձևաթղթի հիման վրա վկայականով նախատեսվող մասնագիտական պարտականությունները թռիչքների ժամանակ կիրականացվեն այն պետությունների օդանավերով, որոնք թույլատրում են այդ ձևաթղթի հիման վրա զննում անցած անձնակազմի թռիչքները: Համապատասխան վկայականը և, հարկ եղած դեպքում, բժշկական սերտիֆիկատը, պետք է հաստատվեն XIII կետի համաձայն և ուղեկցվեն հետևյալ հայտարարությամբ՝ «Տրված է վերապահումներով՝ ՋԱՌ-ՖՍԼ 3.046–ի համաձայն»:

[Փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ԶԱՌ ՖՍԼ 3.060 Վաթառն տարեկան և ավելի բարձր տարիքի վկայագրված անձանց արտոնությունների կրճատում (տե՛ս ԶԱՌ-ՖՍԼ 1.060-ի 1-ին հավելվածը)

ա) *60-64 տարեկան անձինք*. օդաչուի վկայական ունեցող այն անձը, ում 60 տարին լրացել է, չպետք է որպես օդաչու աշխատի առևտրային օդային փոխադրումներում ներգրավված օդանավում, բացառությամբ եթե՝

1) նա գործում է որպես բազմանդամ անձնակազմի անդամ և պայմանով, որ

2) նա այդ թռիչքային անձնակազմում միակ օդաչուն է, ում 60 տարին լրացել է:

բ) *65 տարեկան անձինք*. օդաչուի վկայական ունեցող այն անձը, ում 65 տարին լրացել է, չպետք է որպես օդաչու աշխատի առևտրային օդային փոխադրումներում ներգրավված օդանավում:

գ) (ա)-ում և (բ)-ում նշված պահանջներից շեղումներն ըստ երկրների տրված են ԶԱՌ-ՖՍԼ 1.060-ի 1-ին հավելվածում:

[Փոփոխություն 1, 2000 թվականի դեկտեմբերի 1, փոփոխություն 3, 2003 թվականի հունիսի 1, փոփոխություն 4, 2005 թվականի օգոստոսի 1]

ԶԱՌ-ՖՍԼ 3.065 Վկայական տրամադրող պետությունը

ա) Դիմողը պետք է «վկայական տրամադրող պետության» ավիացիոն մարմինն ապացուցի, որ բավարարում է 2006 թվականի դեկտեմբերի 1

վկայական տալու համար անհրաժեշտ բոլոր պահանջները (տե՛ս ԶԱՌ-ՖՍԼ 3.010(գ)):

բ) Երկու ավիացիոն մարմինների միջև համաձայնեցված հանգամանքներում այն դիմողին, ով մեկ մարմնի պատասխանատվության ներքո սկսել է թռիչքային դասընթացը, կարող է թույլատրվել մյուս մարմնի պատասխանատվության ներքո բավարարելու բոլոր ներկայացվող պահանջները:

Այս համաձայնությունը պետք է տարածվի.

1) տեսական գիտելիքների մասով պարապմունքների և քննությունների,

2) բժշկական զննության և առողջական վիճակի գնահատման,

3) թռիչքային դասընթացների և ստուգումների վրա:

Ավիացիոն մարմինները պետք է համաձայնություն ձեռք բերեն վկայական տրամադրող պետության վերաբերյալ:

գ) Հետագա կարգերը, ԶԱՌ-ՖՍԼ-ի պահանջներին համապատասխան, կարելի է ձեռք բերել ՄԱԻ անդամ ցանկացած պետությունից. դրանք վկայականի մեջ կավելացվեն այն տրամադրող պետության կողմից:

դ) Վարչարարության հարմարա-վետության տեսանկյունից, օրինակ, բժշկական սերտիֆիկատի նորացման դեպքում, վկայական ունեցողը կարող է

հետագայում համապատասխան պետության կողմից տրամադրված վկայականը վերափոխել այլ՝ ՄԱԻ անդամ պետության վկայականի՝ պայմանով, որ նա այդ պետությունում գործունեություն է ծավալում կամ մշտական բնակություն է հաստատել: Վերջին պետությունն այդ պահից դառնում է վկայական տրամադրող պետություն և ստանձնում վերը նշված (ա)–ում սահմանված վկայականի տրամադրման պատասխանատվությունը:

ե) Դիմողը պետք է միաժամանակ ունենա ՋԱՌ–ՖՍԼ (օդանավի) միայն մեկ վկայական և մեկ բժշկական սերտիֆիկատ: [Փոփոխություն 2, 2002 թվականի հունիսի 1, փոփոխություն 4, 2005 թվականի օգոստոսի 1]

ՋԱՌ–ՖՍԼ 3.080 Ավիացիոն բժշկության բաժին (ԱԲԲ)

ա) *Ստեղծումը.* յուրաքանչյուր ՄԱԻ անդամ պետություն իր ավիացիոն մարմնի կազմում կրնդգրկի մեկ կամ ավելի բժիշկներ, ովքեր ավիացիոն բժշկության բնագավառում փորձառություն ունեն: Այդ բժիշկները կամ պետք է գործեն որպես ավիացիոն մարմնի աշխատակից, կամ պետք է պատշաճ կերպով լիազորված լինեն գործելու ավիացիոն մարմնի անունից: Ցանկացած դեպքում դրանք պետք է կոչվեն Ավիացիոն բժշկության բաժին (ԱԲԲ):

բ) *Բժշկական գաղտնիքը.* Բժշկական գաղտնիքը պետք է մշտապես հարգվի: Ավիացիոն մարմինը կապահովի, որ վկայական ունեցող անձանց/դիմողների առողջական վիճակի մասին բոլոր բանավոր և գրավոր եզրակացություններն ու էլեկտրոնային տարբերակով պահվող տվյալները տրամադրվեն [միայն] [] դիմումը քննող ԱԲԲ–ին, [ԱԲԿ–ին կամ ԲԶԻԼԱ–ին և [] առողջական վիճակի գնահատումն իրականացնելու [նպատակով]: Նշված փաստաթղթերը պետք է մատչելի լինեն դիմողի կամ իր բժշկի համար՝ ազգային իրավունքի պահանջներին համապատասխան:

[Փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ–ՖՍԼ 3.085 Ավիացիոն բժշկության կենտրոններ (ԱԲԿ–ներ)

Ավիացիոն բժշկության կենտրոնները (ԱԲԿ–ները) կնշանակվեն, թույլտվություն կստանան և վերստին թույլտվություն կստանան ավիացիոն մարմնի հայեցողությամբ՝ 3 տարին չգերազանցող ժամկետով: ԱԲԿ–ն պետք է՝

ա) գործի անդամ պետության պետական սահմանների ներսում և կցված լինի նախապես որոշված հիվանդանոցին կամ բժշկական ինստիտուտին կամ համագործակցի դրանց հետ.

բ) զբաղվի կլինիկական ավիացիոն բժշկությամբ կամ դրան առնչվող աշխատանքներով.

գ) ղեկավարվի Բժշկական գնումն իրականացնելու համար լիազորված անձի (ԲԶԻԼԱ) կողմից, որը պատասխանատու է առողջական վիճակի գնահատման արդյունքների համակարգման և եզրակացություններն ու սերտիֆիկատները ստորագրելու համար, և որը պետք է իր անձնակազմում ունենա ավիացիոն բժշկության ոլորտում մասնագիտացած և փորձառություն ունեցող բժիշկներ.

դ) զինված լինի ավիաբժշկական գնության համար անհրաժեշտ բժշկատեխնիկական սարքավորումներով:

Ավիացիոն մարմինը կորոշի իրեն անհրաժեշտ ԱԲԿ-ների թիվը:

ՋԱՌ ՖՍԼ 3.090 **Բժշկական**
գննությունն իրականացնելու համար
լիազորված անձինք (ԲԶԻԼԱ-ներ)
(Տե՛ս ՊԲԹԵ ՖՍԼ 3.090)

ա) *Նշանակումը.* ավիացիոն մարմինը կնշանակի և թույլտվություն կտա բժշկական գննություն իրականացնող այն անձանց (ԲԶԻԼԱ), ովքեր գործում են տվյալ պետության սահմանների ներսում, որակավորված և վկայագրված են բժշկության բնագավառում: ՄԱԻ ոչ անդամ պետությունում բնակվող այն բժիշկները, ովքեր ցանկանում են դառնալ ԲԶԻԼԱ՝ Միացյալ ավիացիոն պահանջների հիման վրա թռիչքային անձնակազմի վկայագրում իրականացնելու համար, կարող են դիմել ՄԱԻ անդամ պետության համապատասխան ավիացիոն մարմնին: Նշանակումից հետո ԲԶԻԼԱ-ն պետք է հաշվետու լինի այդ պետության ավիացիոն մարմնին և վերահսկվի դրա կողմից: Նման ԲԶԻԼԱ-ներին պետք է արգելվի իրականացնել 1-ին դասի դիմողների առողջական վիճակի գնահատում՝ վկայականի նորացման (գործողության ժամկետի երկարաձգման) նպատակով:

բ) *Բժշկական գննում իրականացնողների թիվը և գործունեության վայրը.* ավիացիոն մարմինը կորոշի իրեն անհրաժեշտ բժշկական գննում իրականացնողների

թիվն ու գործունեության վայրը՝ հաշվի առնելով իր թռիչքային անձնակազմի թիվն ու աշխարհագրական տեղաբաշխումը:

գ) *Փաստաթղթերի մատչելիությունը.* ԲԶԻԼԱ-ն, որը պատասխանատու է առողջական վիճակի գնահատման արդյունքների համակարգման և եզրակացություններն ստորագրելու համար, պետք է կարողանա ծանոթանալ ԱԲԲ-ում պահվող և իր կողմից իրականացվող գննությանն առնչվող ցանկացած ավիաբժշկական փաստաթղթի հետ:

դ) *Մասնագիտական պատրաստ-վածությունը.* ԲԶԻԼԱ-ները պետք է որակավորված և վկայագրված լինեն բժշկության բնագավառում և [ավիացիոն մարմնի ներկայացված պահանջներին համապատասխան] կրթություն ունենան ավիացիոն բժշկության ոլորտում: Առաջարկվում է, որ նրանք ունենան գիտելիքներ և աշխատանքային փորձ այն միջավայրի վերաբերյալ, որտեղ վկայական և կարգ ունեցող անձինք կատարում են իրենց պարտականությունները:

1) *Ավիացիոն բժշկության հիմնական դասընթաց* (տե՛ս ԱԲԿ ՖՍԼ 3.090)

i) Առողջական վիճակի հիման վրա 2-րդ դասի թռիչքային անձնակազմի ընտրության և վերահսկողության համար պատասխանատու բժիշկների հիմնական դասընթացը պետք է բաղկացած լինի

առնվազն 60 դասաժամից՝ ներառյալ գործնական աշխատանքը (զննություն անցկացնելու տեխնիկա): [Ավիացիոն բժշկության հիմնական դասընթացն անցած անձինք պետք է համապատասխանեն ավիացիոն մարմնի կողմից ներկայացվող պահանջներին:

ii) Ավիացիոն բժշկության հիմնական դասընթացը պետք է ավարտվի վերջնական քննության հանձնմամբ: Հաջողությամբ հանձնած թեկնածուն կստանա սերտիֆիկատ:

iii) Ավիացիոն բժշկության հիմնական դասընթացի սերտիֆիկատ ունենալը հիմք չէ՝ ԱԲԲ-ի կողմից 2-րդ դասի անձնակազմի ԲԶԻԼԱ-ի վկայական ստանալու համար:

2) *Ավիացիոն բժշկության խորացված դասընթաց*

i) Առաջարկվում է, որ 1-ին դասի թռիչքային անձնակազմի բժշկական զննության և առողջական վիճակի գնահատման ու վերահսկողության համար պատասխանատու բժիշկների խորացված դասընթացը բաղկացած լինի առնվազն 120 դասաժամից (հիմնական դասընթացին գումարած 60 լրացուցիչ դասաժամ)՝ ներառյալ գործնական աշխատանքը, սեմինարները և ավիաբժշկական կենտրոններ, կլինիկաներ, հետազոտության ինստիտուտներ, օդային երթևեկության հսկողության բաժին, վարժասարքերի գործարկման սենյակ,

օդանավակայան և արտադրական բաժիններ այցերը: [Ավիացիոն բժշկության հիմնական դասընթացն անցած անձինք պետք է համապատասխանեն ավիացիոն մարմնի կողմից ներկայացվող պահանջներին:]

Սեմինարները և ուսումնական այցերը կարող են իրականացվել երեք տարվա ընթացքում: Ավիացիոն բժշկության հիմնական դասընթացը պետք է պարտադիր լինի ԲԶԻԼԱ-ի համար (տե՛ս ԱԲԿ ՖՍԼ 3.090):

ii) Ավիացիոն բժշկության խորացված դասընթացը պետք է ավարտվի վերջնական քննությամբ և այն հաջողությամբ անցած թեկնածուն պետք է սերտիֆիկատ ստանա:

iii) Ավիացիոն բժշկության խորացված դասընթացի սերտիֆիկատ ունենալը հիմք չէ՝ ԱԲԲ-ի կողմից 1-ին կամ 2-րդ դասի անձնակազմի ԲԶԻԼԱ-ի վկայական ստանալու համար:

3) *Ավիացիոն բժշկության վերապատրաստման դասընթաց*. Թույլտվություն տրամադրելու գործընթացի ընթացքում ԲԶԻԼԱ-ն պետք է հաճախի առնվազն 20 դասաժամ տևողությամբ վերապատրաստման դասընթաց, որը համապատասխանում է ավիացիոն մարմնի կողմից ներկայացվող պահանջներին: Վերապատրաստման դասընթացի առնվազն 6 դասաժամ պետք է անցկացվի ԱԲԲ-ի անմիջական

վերահսկողությամբ: Այս նպատակով, գիտական հարցերով հանդիպումները, համաժողովներն ու անձնակազմի խցիկում փորձառության դասերը որոշակի ժամաքանակով կարող են հաստատվել ԱԲԲ-ի կողմից (տե՛ս ԱԲԿ ՖՍԼ 3.090):

ե) *Թույլտվությունը*. ԲԶԻԼԱ-ն թույլտվություն կստանա առավելագույնը երեք տարի ժամկետով: Թույլտվությամբ կարող է նախատեսվել 1-ին կամ 2-րդ դասի անձնակազմի բժշկական զննության իրականացում կամ, ավիացիոն մարմնի որոշմամբ՝ երկու դասերի համար: Մասնագիտական հմտությունները և թույլտվությունը պահպանելու համար առաջարկվում է, որ ԲԶԻԼԱ-ն տարեկան կտրվածքով իրականացնի առնվազն 10 ավիաբժշկական զննություն: Վերստին թույլտվություն ստանալու համար ԲԶԻԼԱ-ն պետք է իրականացնի համապատասխան թվով ավիաբժշկական զննություններ՝ բավարարելու համար ԱԲԲ-ի պահանջները, ինչպես նաև ԲԶԻԼԱ-ն պետք է անցնի նաև համապատասխան դասընթացներ թույլտվության գործողության ընթացքում (տե՛ս ԱԲԿ ՖՍԼ 3.090):

զ) Պահանջների կատարման ապահովումը. ՄԱԻ անդամ պետությունը կարող է, ազգային ընթացակարգերին համապատասխան, ցանկացած պահի դադարեցնել իր կողմից տրված ցանկացած

թույլտվության գործողությունը՝ ՋԱՌ-ՖՍԼ-ի պահանջներին համապատասխան, եթե հաստատվում է, որ ԲԶԻԼԱ-ն չի բավարարել, կամ այլևս չի բավարարում ՋԱՌ-ՖՍԼ-ի կամ վկայականի տրամադրման անդամ պետության ազգային իրավունքի պահանջները:

[է) Անցումային միջոցներ. բժշկական զննություն իրականացնելու համար լիազորված անձինք (ԲԶԻԼԱ-ները), որոնք նշանակվել են նախքան ՋԱՌ-ՖՍԼ 3-ի իրականացումը, պարտավոր են հաճախել ՋԱՌ ՖՍԼ 3-րդ մասով (բժշկական) նախատեսված պահանջներում և փաստաթղթերում նշված դասընթացները, սակայն, միաժամանակ, ավիացիոն մարմնի հայեցողությամբ, կարող են շարունակել իրենց թույլտվությամբ նախատեսված մասնագիտական պարտականությունների իրականացումը՝ առանց կատարելու ՋԱՌ-ՖՍԼ 3.090(դ)(1) և (2)-ով նախատեսված պահանջները:

[Փոփոխություն 2, 2002 թվականի հունիսի 1, փոփոխություն 4, 2005 թվականի օգոստոսի 1, փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

[ՋԱՌ-ՖՍԼ 3.091 Ավիաբժշկական զննություն և առողջական վիճակի գնահատում. ընդհանուր դրույթներ

ա) Ավիացիայում միասնական պահանջները կատարելը Ավիաբժշկական զննությունները և առողջական վիճակի 2006 թվականի դեկտեմբերի 1

գնահատումները պետք է իրականացվեն ՋԱՌ-ՖՍԼ 3-ի և հարակից ընթացակարգերի պահանջներին համապատասխան:

բ) *Օժանդակ նյութեր*. Բ և Գ ենթամասերը համապատասխանաբար պարունակում են 1-ին և 2-րդ դասի դիմողներին ներկայացվող պահանջները: Բ և Գ ենթամասերի հավելվածները համապատասխանաբար պարունակում են այն դիմողներին ներկայացվող պահանջները, որոնց գործունեությունը չի կարգավորվում 1-ին և 2-րդ դասի դիմողների գործունեությունը կարգավորող Բ և Գ ենթամասերով: ՄԱԻ «Քաղաքացիական ավիացիայի բժշկական ձեռնարկ»-ը [] պարունակում է բժշկության և ավիաբժշկական լավագույն փորձի նկարագրությունը և այնպիսի ընթացակարգեր, որոնք կարելի է կիրառել ավիաբժշկական զննության և առողջական վիճակի գնահատման ընթացքում:]

[Փոփոխություն, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ ՖՍԼ 3.095 Ավիացիոն բժշկական զննումները

(տե՛ս ԲԵՄ ՖՍԼ 3.095(ա) և (բ))

(տե՛ս ԲԵՄ ՖՍԼ 3.095 (գ))

ա) *1-ին դասի բժշկական սերտիֆիկատներ*. 1-ին դասի բժշկական սերտիֆիկատն առաջին անգամ ստացող դիմողների բժշկական զննությունը պետք է

իրականացնի ԱԲԿ-ն: Բժշկական սերտիֆիկատի նորացման կամ գործողության ժամկետի երկարաձգման նպատակով զննությունը կարող է հանձնարարվել ԲԶԻԼԱ-ին:

բ) *2-րդ դասի բժշկական սերտիֆիկատներ*. 2-րդ դասի բժշկական սերտիֆիկատն առաջին անգամ ստանալու, այն նորացնելու կամ դրա գործողության ժամկետի երկարաձգման նպատակով զննությունները պետք է իրականացվեն ԱԲԿ-ի կամ ԲԶԻԼԱ-ի կողմից:

գ) Դիմողը պետք է լրացնի ԲԵՄ ՖՍԼ 3.095 (գ)-ում նկարագրված բժշկական զննում անցնելու դիմումի ձևը: Բժշկական զննումն անցկացնելուց հետո ԲԶԻԼԱ-ն դրա ստորագրված ամբողջական եզրակացությունը պետք է անհապաղ հանձնի ԱԲԲ-ին՝ 1-ին և 2-րդ դասի բոլոր զննությունների դեպքում, բացառությամբ ԱԲԿ-ին ներկայացվող եզրակացությունների դեպքում, երբ եզրակացությունները և սերտիֆիկատները կարող են ստորագրվել ԱԲԿ-ի ղեկավարի կողմից՝ ԱԲԿ-ի բժիշկների կողմից առողջական վիճակի գնահատման արդյունքների հիման վրա:

դ) *Պարբերական զննության պահանջը*. Բժշկական սերտիֆիկատն առաջին անգամ ստանալու, այն նորացնելու կամ դրա գործողության ժամկետը երկարաձգելու համար հատուկ հետազոտությունների,

ինչպես նաև բժշկական սերտիֆիկատի նորացման և դրա գործողության ժամկետի երկարաձգման կրկնակի զննության ամփոփ նկարագրության համար տե՛ս ԲԵՄ ՖՍԼ 3.095(ա) և (բ):

[Փոփոխություն 1, 2000 թվականի դեկտեմբերի 1]

ԶԱՌ-ՖՍԼ 3.100 Բժշկական սերտիֆիկատները

(Տե՛ս ԲԵՄ ՖՍԼ 3.100)

ա) *Սերտիֆիկատի բովանդակությունը*. Բժշկական սերտիֆիկատում պետք է նշվեն հետևյալ տեղեկությունները.

- 1) հաշվառման համարը (տրված ավիացիոն մարմնի կողմից),
- 2) սերտիֆիկատի դասը,
- 3) լրիվ անունը,
- 4) ծննդյան ամսաթիվը,
- 5) քաղաքացիությունը,
- 6) [] [բժշկական սերտիֆիկատի գործողության ժամկետի ավարտը:

ա) 1-ին դասի համար.

i) գործողության ժամկետի ավարտը (մեկ օդաչուից բաղկացած անձնակազմ՝ առևտրային օդային ուղևորափոխադրումների մասով),

ii) գործողության ժամկետի ավարտը (այլ առևտրային փոխադրումների մասով),

iii) նախորդ բժշկական սերտիֆիկատի գործողության ժամկետի ավարտը:

բ) 2-րդ դասի համար.

i) բժշկական սերտիֆիկատի գործողության ժամկետի ավարտը,

ii) նախորդ բժշկական սերտիֆիկատի գործողության ժամկետի ավարտը,

7) [նախորդ] բժշկական զննության ամսաթիվը,

8) վերջին էլեկտրասրտագրության ամսաթիվը,

9) վերջին լսաչափության ամսաթիվը,

10) նախատեսված սահմանափակումները, պայմանները և (կամ) գործառույթների տեսակը,

11) ԲԶԻԼԱ-ի (ԱԲԿ, ԱԲԲ) անվանումը, գրանցման համարը և ստորագրությունը,

12) բժշկական զննության ամսաթիվը,

13) դիմողի ստորագրությունը:

բ) Բժշկական սերտիֆիկատն առաջին անգամ տրամադրելը. 1-ին դասի բժշկական սերտիֆիկատն առաջին անգամ պետք է տրամադրվի ԱԲԲ-ի կողմից: 2-րդ դասի սերտիֆիկատն առաջին անգամ պետք է տրամադրվի ԱԲԲ-ի կողմից, կամ այդ գործառույթը կարող է վերապահվել ԱԲԿ-ին կամ ԲԶԻԼԱ-ին:

գ) Բժշկական սերտիֆիկատի նորացումը և դրա գործողության ժամկետի երկարաձգումը. 1-ին կամ 2-րդ դասի բժշկական սերտիֆիկատները կարող է կրկին տրվել ԱԲԲ-ի կողմից. այդ գործառույթի իրականացումը կարող է փոխանցվել ԱԲԿ-ին կամ ԲԶԻԼԱ-ին:

դ) *Բժշկական սերտիֆիկատի տնօրինումը.*

1) զննություն անցնողին բժշկական սերտիֆիկատը պետք է տրվի, անհրաժեշտության դեպքում, երկու օրինակից՝ զննության ավարտին և առողջական վիճակի պիտանիության զնահատումից հետո:

2) Բժշկական սերտիֆիկատ ունեցողն այն պետք է ներկայացնի ԱԲԲ՝ անհրաժեշտ հետագա քայլերն իրականացնելու նպատակով (տե՛ս ԲԵՄ ՖՍԼ 3.100):

3) Բժշկական սերտիֆիկատ ունեցողը այն պետք է ներկայացնի ԲԶԻԼԱ՝ այն նորացնելու կամ դրա գործողության

ժամկետը երկարաձգելու համար (տե՛ս ԲԵՄ ՖՍԼ 3.100):

ե) *Բժշկական սերտիֆիկատի գրանցումը, սահմանափակումը կամ գործողության դադարեցումը.*

1) Բժշկական հետազոտությունից և [[ԶԱՌ ՖՍԼ 3.125 պարբերությանը համապատասխան բժշկական սերտիֆիկատ տրամադրելուց] հետո [[ցանկացած սահմանափակում, որ կարող է պահանջվել] պետք է նշվի բժշկական սերտիֆիկատում (տե՛ս ԲԵՄ ՖՍԼ 3.100)[]:

2) Բժշկական սերտիֆիկատի գործողության ժամկետի երկարաձգման նպատակով զննությունից հետո ԱԲԲ-ն կարող է, պատշաճ կերպով հիմնավորված և դիմողին ու ԱԲԿ-ին կամ ԲԶԻԼԱ-ին ծանուցված բժշկական նպատակներով, սահմանափակել կամ կասեցնել ԱԲԿ-ի կամ ԲԶԻԼԱ-ի կողմից տրված բժշկական սերտիֆիկատի գործողությունը:

զ) *Բժշկական սերտիֆիկատի տրամադրումը մերժելը.*

1) Եթե դիմողին մերժվում է բժշկական սերտիֆիկատի տրամադրումը, ապա նա այդ մասին կստանա գրավոր ծանուցում՝ ԲԵՄ ՖՍԼ 3.100-ի պահանջներին և ավիացիոն մարմնի կողմից իր դիմումի վերանայման իրավունքին համապատասխան:

2) Բժշկական սերտիֆիկատի տրամադրումը մերժելու մասին տվյալները

ձեռք կբերվեն ավիացիոն մարմնի կողմից 5 աշխատանքային օրվա ընթացքում և կտրամադրվեն մյուս ավիացիոն մարմիններին: Մերժման հիմք հանդիսացող բժշկական տեղեկությունները չեն բացահայտվի առանց դիմողի նախնական համաձայնության:

[Փոփոխություն 1, 2000 թվականի դեկտեմբերի 1, փոփոխություն 2, 2002 թվականի հունիսի 1, փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՄԻՏՈՒՄՆԱՎՈՐ ԴԱՏԱՐԿ ԹՈՂՆՎԱԾ ՏԱՐԱԾՔ

ՋԱՌ–ՖՍԼ 3.105 Բժշկական սերտիֆիկատի վավերականության ժամկետը

(տե՛ս ՋԱՌ–ՖՍԼ 3.105–ի 1–ին հավելվածը)

ա) *Վավերականության ժամկետը.* բժշկական սերտիֆիկատը պետք է վավերական լինի ընդհանուր բժշկական զննության օրվանից սկսած՝

1) 12 ամիս ժամկետով՝ 1–ին դասի բժշկական սերտիֆիկատի դեպքում, բացառությամբ եթե՝

i) դիմողը գործում է որպես մեկ օդաչուից բաղկացած անձնակազմի անդամ և կատարում առևտրային օդային փոխադրումներ, և եթե լրացել է նրա 40 տարեկանը, կամ

ii) լրացել է դիմողի 60 տարեկանը, ապա]

[] [բժշկական սերտիֆիկատի վավերականության ժամկետը պետք է նվազեցվի մինչև 6 ամիս: Բժշկական սերտիֆիկատի վավերականության ժամկետը չի նվազեցվում 40 տարին լրացած բորտինժեններների դեպքում:

2) 60 ամիս ժամկետով՝ մինչև 40 տարին լրանալը, 24 ամիս ժամկետով՝ մինչև 50 տարին լրանալը և 12 ամիս ժամկետով՝ այդ տարիքից բարձր դիմողի դեպքում՝ 2–րդ դասի բժշկական սերտիֆիկատի մասով:

3) Բժշկական սերտիֆիկատի գործողության ժամկետի ավարտը հաշվարկվում է (1)–ում և (2)–ում նշված տվյալների հիման վրա: Բժշկական

սերտիֆիկատի վավերականության (ներառյալ որևէ մանրամասն զննության կամ հատուկ հետազոտության անցկացում) ժամկետը պետք է որոշվի բժշկական զննություն անցնելու ժամանակ՝ դիմողի տարիքի հիման վրա:

4) Չնայած վերը նշված (2)-ի՝ բժշկական սերտիֆիկատ կրողի 40 տարին լրանալուց առաջ տրված բժշկական սերտիֆիկատի վավերականության ժամկետը կդադարի 2-րդ դասի սերտիֆիկատով նախատեսված մասնագիտական պարտականությունների իրականացման մասով, երբ լրանում է նրա 42 տարին:

5) Ըստ կլինիկական ցուցումների՝ բժշկական սերտիֆիկատի վավերականության ժամկետը կարող է նվազեցվել:

բ) *Բժշկական սերտիֆիկատի նորացումը.*

[1)] Եթե բժշկական սերտիֆիկատի նորացման համար զննությունն անց է կացվում (ա)-ի համաձայն հաշվարկվող գործողության ժամկետի ավարտից 45 օր առաջ, ապա նոր բժշկական սերտիֆիկատի գործողության ժամկետի [ավարտը] [] [հաշվարկվում է՝ հին բժշկական սերտիֆիկատի գործողության ժամկետին] ավելացնելով (ա)(1) կամ (2)-ով սահմանված ժամկետը:

[2) Բժշկական սերտիֆիկատի գործողության ժամկետի ավարտից առաջ

նորացված սերտիֆիկատը դառնում է անվավեր նոր սերտիֆիկատ տալու պահից:]

գ) *Բժշկական սերտիֆիկատի գործողության ժամկետի երկարաձգումը.* եթե բժշկական զննությունը չի անցկացվել վերը՝ (բ)-ում նշված 45-օրյա ժամկետում,

ապա գործողության ժամկետի ավարտը կհաշվարկվի (ա) պարբերությանը համապատասխան և կավարտվի հաջորդ ընդհանուր բժշկական զննության ամսաթվին:

դ) *Բժշկական սերտիֆիկատի նորացմանը և դրա գործողության ժամկետի երկարաձգմանը ներկայացվող պահանջները*. բժշկական սերտիֆիկատի նորացմանը և դրա գործողության ժամկետի երկարաձգմանը ներկայացվող պահանջները նույնն են, ինչ բժշկական սերտիֆիկատն առաջին անգամ տալու դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ:

ե) *Վավերականության ժամկետի նվազեցումը*. բժշկական սերտիֆիկատի վավերականության ժամկետը կարող է նվազեցվել ԲԶԻԼԱ-ի կողմից՝ ԱԲԲ-ի հետ խորհրդակցելով՝ կլինիկական ցուցումների հիման վրա:

զ) *Լրացուցիչ զննություն*. եթե ավիացիոն մարմինը բժշկական սերտիֆիկատ ունեցողի առողջական վիճակի պիտանիության մասին հիմնավոր կասկածներ ունի, ԱԲԲ-ն կարող է նրանից պահանջել անցնել կրկնակի զննում, հետազոտություն և ստուգումներ: Բժշկական եզրակացությունները պետք է ներկայացվի ԱԲԲ:

(լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ԶԱՌ-ՖՍԼ 3.105-ի 1-ին հավելվածը)

[Փոփոխություն 3, 2003 թվականի հունիսի 1, փոփոխություն 4, 2005 թվականի օգոստոսի 1, փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ԶԱՌ-ՖՍԼ 3.110 Առողջական վիճակի գնահատմանը ներկայացվող պահանջներ

ա) ԶԱՌ-ՖՍԼ 3-րդ մասին (բժշկական) համապատասխան տրված բժշկական սերտիֆիկատի համար դիմողը կամ այն կրողը չպետք է ունենա՝

1) բնածին կամ ձեռքբերովի որևէ արատ,

2) ակտիվ, գաղտնի, սուր կամ քրոնիկ որևէ ֆիզիկական արատ,

3) վիրահատական միջամտության հետևանքով առաջացած վերք, վնասվածք կամ հետվիրահատական բարդություն, որը կարող է հանգեցնել այնպիսի ֆունկցիոնալ անկարողության, որը կարող է խանգարել օդանավի անվտանգ շահագործմանը կամ պարտականությունների անվտանգ կատարմանը:

բ) ԶԱՌ-ՖՍԼ 3-րդ մասին (բժշկական) համապատասխան տրված բժշկական սերտիֆիկատի համար դիմողը կամ այն կրողը չպետք է տառապի որևէ հիվանդությամբ կամ ֆունկցիոնալ խանգարմամբ, որի պատճառով հնարավոր է, որ նա հանկարծակի ի վիճակի չլինի օդանավն անվտանգ շահագործել կամ անվտանգ կերպով կատարել իր պարտականությունները:

ԶԱՌ–ՖՍԼ 3.115 Դեղորայքի

օգտագործումը և բուժման մյուս միջոցները

ա) Բժշկական սերտիֆիկատ ունեցողը, ով ընդունում է դեղատոմսով կամ առանց դրա նշանակված դեղորայք, կամ ով անցնում է բժշկական, վիրաբուժական կամ այլ բուժում, պետք է համապատասխանի ԶԱՌ–ՖՍԼ 3.040–ի պահանջներին:

Լրացուցիչ

խորհրդատվությունը տրված է ԲԵՄ ՖՍԼ 3.040–ում:

բ) Ընդհանուր կամ ողնաշարի անզգայացուցիչների օգտագործում պահանջող բոլոր պրոցեդուրաների դեպքում անձնակազմի անդամը պետք է որակագրված համարվի 48 ժամով:

գ) Տեղային և ռեգիոնալ անզգայացման պրոցեդուրաների դեպքում անձնակազմի անդամը պետք է որակագրված համարվի 12 ժամով:

[Փոփոխություն 1, 2000 թվականի դեկտեմբերի 1, փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ԶԱՌ–ՖՍԼ 3.120 Դիմողի

պարտականությունները

ա) *Տրամադրման ենթակա տեղեկությունները.* բժշկական սերտիֆիկատի համար դիմողը կամ այն կրողը պետք է ներկայացնի անձը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև ԲԶԻԼԱ ներկայացնի անձնական, ընտանեկան և ժառանգական հիվանդությունների պատմության մասին

բժշկական փաստերի ստորագրված հայտարարություն:

Հայտարարության մեջ պետք է նաև նշվի, թե արդյոք դիմողն անցյալում անցել է նման զննություն, և եթե այո, ապա ինչ հետևանքներով: ԲԶԻԼԱ–ն պետք է դիմողին տեղեկացնի, որ վերջինս պարտավոր է ներկայացնել իր գիտությամբ առավել ամբողջական և ճշգրիտ հայտարարություն:

բ) *Կեղծ տեղեկություններ ներկայացնելը.*

կեղծ տեղեկություններ ներկայացնելու դեպքում պետք է ծանուցվի այն պետության ԱԲԲ–ն, որտեղ ներկայացվել կամ ներկայացվելու է վկայական ստանալու դիմումը: Նման տեղեկություն ստանալու դեպքում ԱԲԲ–ն պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցառումներ՝ ներառյալ այդ տեղեկության փոխանցումն ՄԱԻ այլ մարմինների (տե՛ս ԶԱՌ–ՖՍԼ 3.080(բ))՝ «Բժշկական գաղտնիք»):

ԶԱՌ–ՖՍԼ 3.125 Առողջական վիճակի

պիտանիության գնահատման գործառույթի փոխանցումը, հետազոտության անցկացման քաղաքականությունը և կրկնակի հետազոտությունը

ա) []/Առողջական վիճակի պիտանիության գնահատման գործառույթի փոխանցումը/

[1)] Եթե դիմողը լիովին չի բավարարում որոշակի վկայականի

համար ՋԱՌ-ՖՍԼ 3-րդ մասով (բժշկական) սահմանված պահանջները, ԱԲԿ-ն կամ ԲԶԻԼԱ-ն չպետք է տրամադրի տվյալ բժշկական սերտիֆիկատը, կամ նորացնի այն կամ երկարաձգի դրա գործողության ժամկետը. այդ դեպքում որոշումը պետք է կայացնի ավիացիոն մարմինը: Եթե ՋԱՌ ՖՍԼ 3-րդ մասի (բժշկական) դրույթներով նախատեսվում է, որ որոշակի առողջական վիճակում գտնվող [դիմողը] ([Բ և Գ ենթամասերի հավելվածներին համապատասխան]) [կարող է] [գնահատվել] թոնչքային աշխատանքի համար պիտանի, ապա [ավիացիոն մարմինը կարող է դրական գնահատական տալ:

Այդ դեպքում դիմողի առողջական վիճակի գնահատումը կարող է իրականացնել ԱԲԿ-ն կամ ԲԶԻԼԱ-ն՝ խորհրդակցելով ավիացիոն մարմնի հետ]:

[2) ԱԲԿ-ն կամ ԲԶԻԼԱ-ն, որը ավիացիոն մարմնի որոշմամբ գնահատում է դիմողի առողջական վիճակն այնպես, ինչպես (ա)(1)-ում, պետք է ավիացիոն մարմին ներկայացնի գնահատման մանրամասները:

[բ) *Հետազոտության անցկացման քաղաքականությունը*]

Ավիացիոն մարմինը կարող է տրամադրել բժշկական սերտիֆիկատ, նորացնել այն կամ երկարաձգել դրա գործողության ժամկետը՝ հաշվի առնելով պահանջների պահպանումը, համապատասխանության ընդունելի միջոցները, ցուցումները, փորձագիտական ավիաբժշկական եզրակացությունը և, հարկ եղած դեպքում, աշխատանքային միջավայրին ծանոթ համապատասխան փորձագետների կարծիքը, ինչպես նաև՝

1) աշխատանքային միջավայրին առնչվող առողջական խնդիրները.

2) դիմողի կարողությունները, հմտությունները և տվյալ աշխատանքային միջավայրում ունեցած փորձը.

3) հարկ եղած դեպքում՝ ավիաբժշկական ստուգման նպատակով թռիչքը,

և

4) բժշկական սերտիֆիկատում և վկայականում որևէ սահմանափակման կիրառման պահանջը [(տե՛ս ՋԱՌ-ՖՍԼ 3.100 (ե)(1) և ԲԵՄ 3.100 (զ))]:

Եթե բժշկական սերտիֆիկատը տրվում է մեկ կամ ավելի սահմանափակումներով, ապա նախքան այն տրամադրելը, ավիացիոն մարմինը պետք է գնահատի այդ սահմանափակումների գումարային և փոխկապակցված ազդեցությունը թռիչքային անվտանգության վրա:

[] [զ) *Կրկնակի հետազոտությունը*. վիճահարույց դեպքերի վերաբերյալ որոշում կայացնելու և դրանք գնահատելու նպատակով յուրաքանչյուր ավիացիոն մարմին կնախաձեռնի կրկնակի հետազոտություն, որի մեջ կներգրավվեն ավիացիոն բժշկության ոլորտում փորձ ունեցող անկախ բժիշկ-խորհրդատուներ:

[Փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

**ՄԻՏՈՒՄՆԱՎՈՐ ԴՍԱՐԿ ԹՈՂՎԱԾ
ՏԱՐԱԾՔ**

ԲԱԺԻՆ 1

ՋԱՌ–ՖՍԼ 3.105–ի 1–ին հավելված

Բժշկական եզրակացության վավերականության ժամկետը [Բժշկական եզրակացությունը տալու գործառույթի փոխանցումը] [1–ին և 2–րդ դասի բժշկական սերտիֆիկատների գործողության ժամկետի երկարաձգման համար]

(տե՛ս ՋԱՌ–ՖՍԼ 3.105)

1. 1–ին դաս

ա) Եթե վկայական ունեցողի բժշկական սերտիֆիկատի գործողության ժամկետի ավարտից անցնում է ավելի քան հինգ տարի, դրա գործողության ժամկետի երկարաձգման համար ԱԲԲ–ի որոշմամբ պետք է իրականացվի սերտիֆիկատն առաջին անգամ տրամադրելու ժամանակ պահանջվող կամ մանրամասն ավիաբժշկական զննություն, որն իրականացվում զննություն անցնողի բժշկական փաստաթղթերը ձեռք բերած ԱԲԿ–ի կողմից: []

բ) Եթե վկայական ունեցողի բժշկական սերտիֆիկատի գործողության ժամկետի ավարտից անցնում է ավելի քան երկու, բայց ոչ ավելի, քան հինգ տարի, ապա դրա գործողության ժամկետի երկարաձգման համար զննություն անցնողի բժշկական փաստաթղթերը ձեռք բերած ԱԲԿ–ն պետք է իրականացնի հերթական կամ մանրամասն ավիաբժշկական զննություն. ավիաբժշկական զննությունը կարող է, ԱԲԲ–ի որոշմամբ, իրականացնել նաև ԲԶԻԼԱ–ն՝ պայմանով, որ այն ստացել է թռիչքային անձնակազմին տրվող վկայականի համար անցկացվող բժշկական զննության փաստաթղթերը:

գ) Եթե վկայական ունեցողի բժշկական սերտիֆիկատի գործողության ժամկետի ավարտից անցնում է ավելի քան 90 օր, բայց ոչ ավելի, քան երկու տարի, դրա գործողության ժամկետի երկարաձգման համար զննվողը պետք է անցնի հերթական կամ մանրամասն ավիաբժշկական զննություն, որն անցկացնում է ԱԲԿ–ն կամ, ԱԲԲ–ի որոշմամբ՝ ԲԶԻԼԱ–ն:

դ) Եթե վկայական ունեցողի բժշկական սերտիֆիկատի գործողության ժամկետի ավարտից անցնում է ոչ ավելի, քան 90 օր, դրա գործողության ժամկետի երկարաձգման համար զննություն անցնողը պետք է անցնի ավիացիոն մարմնի կողմից նշանակված հերթական կամ մանրամասն ավիաբժշկական զննություն:

2. 2–րդ դաս

ա) Եթե վկայականով նախատեսվում է սարքերով թռիչքների իրականացում, ապա 39 տարեկան կամ ավելի երիտասարդ տարիքի վկայական ունեցողը պետք է վերջին 60 ամիսների ընթացքում անցած լինի տոնային լսաչափություն, մինչդեռ 40 և ավելի տարեկան վկայական ունեցողը՝ վերջին 24 ամիսների ընթացքում:

բ) Եթե վկայական ունեցողի բժշկական սերտիֆիկատի գործողության ժամկետի ավարտից անցնում է ավելի, քան հինգ տարի, ապա դրա գործողության ժամկետի երկարաձգման համար դիմողը պետք է անցնի սերտիֆիկատն առաջին անգամ տրամադրելու ժամանակ պահանջվող ավիաբժշկական գնություն: Նախքան սերտիֆիկատ տրամադրելը՝ ԲԶԻԼԱ-ն պետք է ստանա համապատասխան բժշկական փաստաթղթերը:

գ) Եթե վկայական ունեցողի բժշկական սերտիֆիկատի գործողության ժամկետի ավարտից անցնում է ավելի, քան երկու, բայց ոչ ավելի, քան հինգ տարի, դրա գործողության ժամկետի երկարաձգման համար գնություն անցնողը պետք է անցնի ավիացիոն մարմնի կողմից նշանակված ավիաբժշկական գնություն: Նախքան բժշկական գնությունը՝ ԲԶԻԼԱ-ն պետք է ստանա համապատասխան բժշկական փաստաթղթերը:

դ) Եթե վկայական ունեցողի բժշկական սերտիֆիկատի գործողության ժամկետի ավարտից անցնում է ոչ ավելի, քան երկու տարի, դրա գործողության ժամկետի երկարաձգման համար գնվողը պետք է անցնի ավիացիոն մարմնի կողմից նշանակված ավիաբժշկական գնություն:

Մանրամասն ավիաբժշկական գնությունն իր մեջ պետք է ներառի պարբերական ավիաբժշկական գնության շրջանակը, ուստի այն պետք է համարվի պարբերական և մանրամասն ավիաբժշկական գնություն:

[Փոփոխություն 3, 2003 թվականի հունիսի 1, փոփոխություն 4, 2005 թվականի օգոստոսի 1, փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

Միտումնավոր դատարկ թողնված տարածք

Միտումնավոր դատարկ թողնված տարածք

ԲԱԺԻՆ 1

**ԵՆԹԱՄԱՍ Բ. ԱՌԱՋԻՆ ԴԱՄԻ
ՍԵՐՏԻՖԻԿԱՏ ՌԻՆԵՅՈՂՆԵՐԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ
ՊԱՀԱՆՁՆԵՐ**

ՋԱՌ-ՖՍԼ 3.130 Սրտանոթային

համակարգ. հետազոտություն

ա) 1-ին դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա սրտանոթային համակարգի որևէ խանգարում՝ բնածին կամ ձեռքբերովի, ինչը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Բժշկական սերտիֆիկատի առաջին անգամ տրամադրման նպատակով անցկացվող զննության ժամանակ պահանջվում է ստանդարտ 12-արտածումով հանգստի վիճակում էլեկտրասրտագրության (ԷԿԳ) կատարում և համապատասխան եզրակացություն. դրանք անհրաժեշտ է անցկացնել նաև յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ՝ մինչև 30 տարին լրանալը, յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ՝ մինչև 40 տարին լրանալը և ամեն տարի՝ մինչև 50 տարին լրանալը, իսկ 50 տարին լրանալուց հետո՝ [[բժշկական սերտիֆիկատի նորացման

կամ դրա գործողության ժամկետի երկարաձգման համար անցկացվող յուրաքանչյուր բժշկական զննության ժամանակ] և ըստ համապատասխան կլինիկական ցուցումների:

գ) Ֆիզիկական վարժության ժամանակ էլեկտրասրտագրության անցկացումը պահանջվում է միայն ըստ կլինիկական ցուցումների՝ Բ ենթամասի 1-ին հավելվածի 1-ին պարբերությանը համապատասխան:

դ) Հանգստի և ֆիզիկական վարժությունների ժամանակ էլեկտրասրտագրառումների մասին եզրակացությունները պետք է տրամադրի ԲԶԻԼԱ-ն կամ ԱԲԲ-ի կողմից ներկայացված՝ պահանջները բավարարող այլ մասնագետ:

ե) Բժշկական սերտիֆիկատի առաջին տրամադրման համար զննության, ինչպես նաև 40 տարեկանը լրանալուց հետո առաջին բժշկական զննության ժամանակ պահանջվում է իրականացնել արյան շիճուկի լիպիդների և շիճուկային խոլեստերինի գնահատում (տե՛ս Բ ենթամասի 1-ին հավելվածի 2-րդ պարբերությունը)]՝ սրտանոթային ռիսկը գնահատելու նպատակով:

զ) 65 տարին լրանալուց հետո անցկացվող բժշկական սերտիֆիկատի գործողության ժամկետի երկարաձգման (նորացման) համար առաջին բժշկական զննության ժամանակ 1-ին դասի

սերտիֆիկատ ունեցողը պետք է հետազոտվի ԱԲԿ-ի կողմից. ԱԲԲ-ի որոշմամբ՝ հետազոտության իրականացումը կարող է հանձնարարվել ԱԲԲ-ի կողմից ներկայացված՝ պահանջները բավարարող սրտաբանին:

[Փոփոխություն 1, 2000 թվականի դեկտեմբերի 1, փոփոխություն 4, 2005 թվականի օգոստոսի 1, փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ -ՖՍԼ 3.135 Սրտանոթային

համակարգ. արյան ճնշում

ա) Արյան ճնշումը պետք է արձանագրվի Բ ենթամասի 1-ին հավելվածի 3-րդ պարբերությունում տրված մեթոդի կիրառմամբ [յուրաքանչյուր հետազոտության ժամանակ]:

բ) Եթե արյան ճնշումը գննելու ժամանակ սիստոլիկ զարկերակային ճնշումն անընդհատ գերազանցում է 160 մմ սնդիկի սյունը և (կամ) դիաստոլիկ զարկերակային ճնշումը՝ 95 մմ սնդիկի սյունը՝ բուժում ստանալու կամ չստանալու հանգամանքից, ապա դիմողը պետք է ճանաչվի թոնոլոգիայի աշխատանքի համար ոչ պիտանի:

գ) Արյան ճնշման կարգավորման համար բուժումը պետք է համատեղելի լինի վկայականով նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարմանը և կատարվի Բ ենթամասի 1-ին հավելվածի 4-րդ պարբերության պահանջներին համապատասխան: Դեղորայքային

2006 թվականի դեկտեմբերի 1

բուժման նշանակման դեպքում բժշկական սերտիֆիկատի գործողությունը պետք է ժամանակավորապես կասեցվի՝ կողմնակի լուրջ ազդեցությունների բացակայության մեջ համոզվելու նպատակով:

դ) Միմպտոմատիկ հիպոտենզիայով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոնոլոգիային աշխատանքի համար ոչ պիտանի:

[Փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ -ՖՍԼ 3.140 Սրտանոթային

համակարգ. կորոնար զարկերակի հիվանդություն

ա) Այն դիմողները, ում մոտ կասկածում են սրտի իշեմիա, պետք է պարտադիր հետազոտվեն: Բուժում չպահանջող ասիմպտոմատիկ, թեթև կորոնար զարկերակի հիվանդությամբ տառապող անձինք կարող են [] [ճանաչվել թոնոլոգիային աշխատանքի համար] պիտանի ԱԲԲ-ի կողմից, եթե բավարար կերպով են կատարվել Բ ենթամասի 1-ին հավելվածի 5-րդ պարբերությունում նշված հետազոտությունները:

բ) Կորոնար զարկերակի սիմպտոմատիկ հիվանդությամբ կամ դեղորայքով կարգավորվող սրտային համախտանիշներով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոնոլոգիային աշխատանքի համար ոչ պիտանի:

գ) Սրտի իշեմիկ նոպայից հետո (սահմանվում է որպես միոկարդի ինֆարկտ, ստենոկարդիա, սուր առիթմիա կամ իշեմիայի հետևանքով սրտի անբավարարվածություն կամ ցանկացած տեսակի սրտի ռեվասկուլյարիզացիա) 1-ին դասի բժշկական սերտիֆիկատի համար [] [ղիմոդներ] [պիտանիության գնահատում հնարավոր չէ իրականացնել: [] [] Բժշկական սերտիֆիկատի նորացման կամ դրա գործողության ժամկետի երկարաձգման նպատակով բժշկական գնումների ընթացքում պիտանիության գնահատման հարցը] կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից, եթե Բ ենթամասի 1-ին հավելվածի 6-րդ պարբերության մեջ նշված հետազոտությունները բավարարողունքներ են տվել:

[Փոփոխություն 1, 2000 թվականի դեկտեմբերի 1, փոփոխություն 4, 2005 թվականի օգոստոսի 1, փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ-ՏՍԼ 3.145 Սրտանոթային համակարգ. սրտի ռիթմի (անոթների հաղորդականության) խանգարումներ

ա) Վերփորոքային ռիթմի խանգարմամբ, այդ թվում՝ սինուսային ռիթմի կայուն և ոչ կայուն դիսֆունկցիա ունեցող բոլոր դիմողները պետք է ճանաչվեն թոռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից՝ Բ 2006 թվականի դեկտեմբերի 1

ենթամասի 1-ին հավելվածի 7-րդ պարբերությանը համապատասխան:

բ) Ասիմպտոմատիկ սինուսային բրադիկարդիայով կամ սինուսային տախիկարդիայով տառապող դիմողները կարող են ճանաչվել թոռիչքային աշխատանքի համար պիտանի կոնկրետ խանգարման բացակայության դեպքում:

գ) Ասիմպտոմատիկ առանձնացված ընդհանուր վերփորոքային կամ փորոքային էկտոպիկ համալիր հիվանդություններով տառապող դիմողները չպետք է ճանաչվեն թոռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Հաճախակի կրկնվող կամ բարդ ձևերը պահանջում են սրտի առողջական վիճակի ամբողջական հետազոտում՝ Բ ենթամասի 1-ին հավելվածի 7-րդ պարբերությանը համապատասխան:

դ) Ցանկացած այլ ախտահարումների բացակայության դեպքում հիսի խրձի ոտիկների ոչ լրիվ բլոկադայով կամ աջ առանցքի կայուն շեղմամբ տառապող դիմողները կարող են ճանաչվել թոխչքային աշխատանքի համար պիտանի:

ե) Հիսի խրձի աջ ոտիկների լրիվ բլոկադայով տառապող դիմողները պետք է առաջին իսկ այցելության ժամանակ և դրանից հետո անցնեն սրտի հետազոտություն՝ Բ ենթամասի 1-ին հավելվածի 7-րդ պարբերության դրույթներին համապատասխան:

զ) Հիսի խրձի ձախ ոտիկների լրիվ բլոկադայով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից՝ Բ ենթամասի 1-ին հավելվածի 7-րդ պարբերությանը համապատասխան:

է) Առաջին աստիճանի և Մոբիցի 1 ԱՎ տեսակի բլոկադայով տառապող դիմողները կարող են ճանաչվել թոխչքային աշխատանքի համար պիտանի՝ կոնկրետ խանգարման բացակայության դեպքում:

Մոբից 2 տեսակի կամ լրիվ ԱՎ բլոկադայով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից՝ Բ ենթամասի 1-ին

հավելվածի 7-րդ պարբերությանը համապատասխան:

ը) Լայն և (կամ) նեղ կոմպլեքս տախիկարդիայով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից՝ Բ ենթամասի 1-ին հավելվածի 7-րդ պարբերությանը համապատասխան:

թ) Փորոքների նախադրմամբ տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից՝ Բ ենթամասի 1-ին հավելվածի 7-րդ պարբերությանը համապատասխան:

ժ) Էնդոկարդիալ կարդիոմիոպաթիայով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից՝ Բ ենթամասի 1-ին հավելվածի 7-րդ պարբերությանը համապատասխան:

ժա) Աբլացիայի մեթոդով բուժում անցած դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից՝ Բ ենթամասի 1-ին հավելվածի 7-րդ պարբերությանը համապատասխան:

[Փոփոխություն 4, 2005 թվականի օգոստոսի 1]

համակարգ. ընդհանուր

ա) Վիրահատությունից առաջ կամ դրանից հետո պերիֆերիկ զարկերակների հիվանդություններով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Եթե չկա որևէ զգալի ֆունկցիոնալ խանգարում, ապա պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից՝ Բ ենթամասի 1-ին հավելվածի 5-րդ և 6-րդ պարբերություններին համապատասխան:

բ) Վիրահատությունից առաջ կամ հետո կրծքային կամ որովայնային աորտայի անևրիզմով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Ինֆրարենալ որովայնային աորտայի անևրիզմով տառապող դիմողները կարող են, բժշկական սերտիֆիկատի գործողության ժամկետի երկարաձգման կամ նորացման նպատակով բժշկական գննումների ընթացքում, ԱԲԲ-ի կողմից [] [ճանաչվել թոխչքային աշխատանքի համար պիտանի]՝ Բ ենթամասի 1-ին հավելվածի [] [8-րդ] պարբերության համաձայն:

գ) Սրտի փականներից որևէ մեկի զգալի ախտահարմամբ դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի:

1) Սրտի փականների թեթև ախտահարմամբ տառապող դիմողները կարող են ԱԲԲ-ի կողմից ճանաչվել

թոխչքային աշխատանքի համար պիտանի՝ Բ ենթամասի 1-ին հավելվածի [] [9] (ա) և (բ) պարբերություններին համապատասխան:

2) Սրտի փականի փոխարինմամբ/ վերականգնմամբ դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից՝ Բ ենթամասի 1-ին հավելվածի [] [9] (գ) պարբերությանը համապատասխան:

դ) Հակամակարդիչներով սիստեմավորված ձևով բուժում անցնող դիմողը ճանաչվում է թոխչքային աշխատանքների համար ոչ պիտանի: Կոնկրետ տևողությամբ բուժում ստացած դիմողների պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից՝ Բ ենթամասի 1-ին հավելվածի [] [10]-րդ պարբերությանը համապատասխան:

ե) Պերիկարդի, միոկարդի կամ էնդոկարդի ախտահարմամբ այն դիմողները, ովքեր վերը չեն նշվել, պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից ամբողջական եզրակացության և սրտի գնահատման բավարար արդյունքների հիման վրա՝ Բ ենթամասի 1-ին հավելվածի [] [11-րդ] պարբերությանը համապատասխան:

զ) Սրտի բնածին արատ ունեցող դիմողները պետք է, ռեկոնստրուկտիվ

վիրահատությունից հետո կամ առաջ, ճանաչվեն թռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Սրտաբանական հետազոտություն անցնելուց հետո թեթև ախտահարումներ ունեցող դիմողները կարող են ԱԲԲ-ի կողմից ճանաչվել թռիչքային աշխատանքի համար պիտանի՝ Բ ենթամասի 1-ին հավելվածի [][12-րդ] պարբերությանը համապատասխան:

է) Սրտի կամ սրտի/թոքերի փոխպատվաստումից հետո դիմողը ճանաչվում է թռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի:

ը) Պերիտոնիկ սինոկարոտիդային ուշագնացություն ունեցող դիմողները պետք է ճանաչվեն թռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Կասկածելի անամնեզով դիմողների շրջանում պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից՝ Բ ենթամասի 1-ին հավելվածի [][13-րդ] պարբերությանը համապատասխան:

[Փոփոխություն 1, 2000 թվականի դեկտեմբերի 1, փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

**ՋԱՌ -ՖՍԼ 3.155 Շնչառական համակարգ.
ընդհանուր**

ա) 1-ին դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա շնչառական համակարգի որևէ

խանգարում՝ լինի այն բնածին, թե ձեռքբերովի, որը կարող է խոչընդոտել սովյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) []Բժշկական ցուցումների կամ համաձայնակի դեպքերում բժշկական սերտիֆիկատն []առաջին անգամ ստանալու[, այն նորացնելու կամ դրա գործողության ժամկետը երկարաձգելու համար] անցկացվող զննման [զննումների] []ժամանակ [կարող է] պահանջվել կրծքավանդակի դիմացի (հետևի) պրոյեկցիաներում օրգանների ռենտգենոսկոպիա (ֆյուորոգրաֆիա):

գ) Թոքերի ֆունկցիաների հետազոտություններ (տե՛ս Բ ենթամասի 2-րդ հավելվածի 1-ին պարբերությունը) կարող են նշանակվել բժշկական սերտիֆիկատն առաջին անգամ ստանալու ժամանակ կամ համաձայն կլինիկական ցուցումների:[] Թոքերի ֆունկցիաների սուր խանգարումներով դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի (տե՛ս Բ ենթամասի 2-րդ հավելվածի 1-ին պարբերությունը):

[Փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ -ՖՄԼ 3.160 Ծնչառական համակարգ. խանգարումներ

ա) Ծնչուղիների քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությամբ տառապող դիմողները

պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: [Ծնչուղիների ֆունկցիաների միայն թեթև խանգարմամբ դիմողները կարող են ճանաչվել թոխչքային աշխատանքի համար պիտանի:]

բ) Դեղորայքային բուժում պահանջող՝ [] [ապթոմայով] տառապող դիմողները պետք է գնահատվեն Բ ենթամասի 2-րդ հավելվածի 2-րդ պարբերությանը համապատասխան:

գ) Ծնչառական համակարգի սուր բորբոքային հիվանդությամբ տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ժամանակավորապես ոչ պիտանի:

դ) Սուր սարկոիդոզով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի (տե՛ս Բ ենթամասի 2-րդ հավելվածի 3-րդ պարբերությունը):

ե) Սպոնտան պնևմոթորաքսով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի մինչև հետազոտման ավարտը՝ Բ ենթամասի 2-րդ հավելվածի 4-րդ պարբերությանը համապատասխան:

զ) Կրծքավանդակի արմատական վիրահատության կարիք ունեցող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի՝ վիրահատությունից հետո առնվազն երեք ամիս ժամկետով և մինչև այն

ժամանակահատվածը, երբ հետվիրահատական հետևանքներն այլևս չեն կարող խոչընդոտել սովյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը (տե՛ս Բ ենթամասի 2-րդ հավելվածի 5-րդ պարբերությունը):

ե) Քնի շնչառական խանգարումներից (ապնոէից) ամբողջությամբ չապաքինված դիմողները պետք է ճանաչվեն թոփչքային աշխատանքի համար ոչ պիտանի:

[Փոփոխություն 1, 2000 թվականի դեկտեմբերի 1, փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՁԱՌ -ՖՍԼ 3.165 Մարտողական

համակարգ. ընդհանուր

1-ին դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա ստամոքս-աղիքային տրակտի կամ դրա հավելումների ֆունկցիոնալ կամ կառուցվածքային որևէ խանգարում, որը կարող է խոչընդոտել սովյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

ՁԱՌ -ՖՍԼ 3.170 Մարտողական

համակարգ. խանգարումներ

ա) Դեղորայքային բուժում պահանջող՝ կրկնվող (ռեցիդիվող) դիսպեպտիկ

խանգարումներով կամ պանկրեատիտով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոփչքային աշխատանքի համար ոչ պիտանի մինչև հետազոտումը՝ Բ ենթամասի 3-րդ հավելվածի 1-ին պարբերության համաձայն:

բ) Պատահաբար հայտնաբերված ասիմպտոմատիկ լեղապարկի քարեր ունեցող դիմողները պետք է գնահատվեն Բ ենթամասի 3-րդ հավելվածի 2-րդ պարբերությանը համապատասխան:

գ) Հաստատված ախտորոշմամբ կամ ստամոքսի քրոնիկ բորբոքային հիվանդությամբ տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոփչքային աշխատանքի համար ոչ պիտանի (տե՛ս Բ ենթամասի 3-րդ հավելվածի 3-րդ պարբերությունը):

դ) Դիմողները չպետք է [ձողվածք [յունենան, որը կարող է հանգեցնել անաշխատունակության համախտանիշների:

ե) Այն դիմողները, ովքեր տառապում են մարտողական տրակտի որևէ հատվածի կամ դրա հավելումների որևէ հիվանդությամբ [յմնացորդային երևույթ] կամ ովքեր ենթարկվել են վիրահատական միջամտության, մասնավորապես, ցանկացած օբստրուկցիա՝ կծկման կամ ճնշման հետևանքով, որոնք թոփչքային աշխատանքում կարող են հանգեցնել անաշխատունակության, պետք է

ճանաչվեն թռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի:

զ) Մարսողական տրակտի կամ դրա հավելումների վիրահատության, այդ թվում՝ այդ օրգաններից որևէ մեկի ամբողջական կամ մասնակի հեռացման կամ առանձնացման վիրահատության ենթարկված դիմողները պետք է ճանաչվեն թռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի առնվազն երեք ամիս ժամկետով կամ մինչև այն ժամանակահատվածը, երբ հետվիրահատական հետևանքներն այլևս չեն կարող խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը (տե՛ս Բ ենթամասի 3-րդ հավելվածի 4-րդ պարբերությունը):

[Փոփոխություն 1, 2000 թվականի դեկտեմբերի 1, փոփոխություն 4, 2005 թվականի օգոստոսի 1, փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ -ՖՍԼ 3.175 Նյութափոխանակության, մարսողական և էնդոկրին [][համակարգեր]

ա) 1-ին դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա նյութափոխանակության, մարսողական կամ էնդոկրին համակարգի ֆունկցիոնալ կամ կառուցվածքային որևէ խանգարում, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) 2006 թվականի դեկտեմբերի 1

նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Նյութափոխանակության, մարսողական կամ էնդոկրին դիսֆունկցիաներով դիմողները կարող են ճանաչվել թռիչքային աշխատանքի համար պիտանի՝ Բ ենթամասի 4-րդ հավելվածի 1-ին [և 4-րդ] պարբերության համաձայն:

զ) Շաքարախտով տառապող դիմողները կարող են ճանաչվել թոփչքային աշխատանքի համար պիտանի միայն Բ ենթամասի 4-րդ հավելվածի 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն:

դ) Ինսուլին պահանջող շաքարախտով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոփչքային աշխատանքի համար ոչ պիտանի:

ե) > 35 մարմնի զանգվածի չափանիշով (քաշի ինդեքս) դիմողները կարող են ճանաչվել թոփչքային աշխատանքի համար պիտանի միայն այն դեպքում, եթե ավելորդ քաշը չի խոչընդոտում տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը, և եթե կատարվել է սրտանոթային ռիսկի բավարար գնահատում (տե՛ս Գ ենթամասի 9-րդ հավելվածի 1-ին պարբերությունը):

[Փոփոխություն 2, 2002 թվականի հունիսի 1, փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՁԱՌ–ՖՍԼ 3.180 Հեմատոլոգիա

ա) 1-ին դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա հեմատոլոգիական ախտահարումներ, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Հեմոգլոբինը պետք է ստուգվի յուրաքանչյուր բժշկական զննության ժամանակ: Պաթոլոգիական հեմոգլոբին ունեցող դիմողները պետք է հետազոտվեն: 32%-ից ցածր հեմատոկրիտ ունեցող դիմողները] պետք է ճանաչվեն թոփչքային աշխատանքի համար ոչ պիտանի (տե՛ս Բ ենթամասի 5-րդ հավելվածի 1-ին պարբերությունը):

գ) Էրիտրոցիտների մանգաղաձև փոփոխման հիվանդությամբ տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոփչքային աշխատանքի համար ոչ պիտանի (տե՛ս Բ ենթամասի 5-րդ հավելվածի 1-ին պարբերությունը):

դ) Լիմֆատիկ գեղձերի տեղայնացված և ընդհանուր զգալի մեծացմամբ ու արյան հիվանդություններով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոփչքային աշխատանքի համար ոչ պիտանի (տե՛ս Բ ենթամասի 5-րդ հավելվածի 2-րդ պարբերությունը):

ե) Սուր լեյկեմիայով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոփչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Հաստատված ռեմիսիայից հետո [][դիմողները] կարող են ԱԲԲ-ի կողմից [][ճանաչվել թոփչքային աշխատանքի համար պիտանի]: Քրոնիկ լեյկեմիայով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոփչքային աշխատանքի համար ոչ պիտանի: [][Ակնհայտ կայուն վիճակից հետո ԱԲԲ-ն կարող է քննարկել

պիտանիության գնահատման հարցը: Տե՛ս] Բ ենթամասի 5-րդ հավելվածի 3-րդ պարբերությունը:

զ) Փայծաղի զգալի մեծացմամբ դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի (տե՛ս Բ ենթամասի 5-րդ հավելվածի 4-րդ պարբերությունը):

է) Սուր պոլիցիտեմիայով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի (տե՛ս Բ ենթամասի 5-րդ հավելվածի 5-րդ պարբերությունը):

ը) Կոագուլյացիայի խանգարմամբ դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի (տե՛ս Բ ենթամասի 5-րդ հավելվածի 6-րդ պարբերությունը):

[Փոփոխություն 1, 2000 թվականի դեկտեմբերի 1, փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ-ՖՍԼ 3.185 Միզային համակարգ

ա) 1-ին դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա միզային համակարգի օրգանների կամ դրանց հավելումների որևէ ֆունկցիոնալ կամ կառուցվածքային խանգարում, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական

պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Երիկամների օրգանական ախտահարման որևէ ախտանիշ ունեցող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Մեզի անալիզը պետք է կազմի յուրաքանչյուր բժշկական հետազոտման անբաժանելի մասը: Մեզի մեջ չպետք է լինի որևէ ախտածին տարր: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել միզուղիների և սեռական օրգանների վրա ազդող հիվանդություններին: (տե՛ս Բ ենթամասի 6-րդ հավելվածի 1-ին պարբերությունը):

գ) Միզաքարային հիվանդությամբ տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի (տե՛ս Բ ենթամասի 6-րդ հավելվածի 2-րդ պարբերությունը):

դ) Այն դիմողները, ում մոտ առկա են երիկամների և միզային տրակտի հիվանդության մնացորդային երևույթներ կամ ուլքեր անցել են վիրահատական պրոցեդուրա, մասնավորապես, միզուկի նեղացման կամ ճնշման պատճառով ցանկացած օբստրուկցիա, որոնք կարող են հանգեցնել անաշխատունակության, պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Առանց հիպերտենզիայի կամ միզարյունության (ուրեմիայի) փոխհատուցվող երիկամի հեռացմամբ (նեֆրեկտոմիայով) դիմողները

կարող են ճանաչվել թռիչքային աշխատանքի համար պիտանի (տե՛ս Բ ենթամասի 6-րդ հավելվածի 3-րդ պարբերությունը):

զ) Միգային տրակտի կամ միգային օրգանների արմատական վիրահատության, այդ թվում՝ այդ օրգաններից որևէ մեկի ամբողջական կամ մասնակի հեռացման կամ առանձնացման վիրահատության ենթարկված դիմողները պետք է ճանաչվեն թռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի առնվազն երեք ամիս ժամկետով կամ մինչև այն ժամանակահատվածը, երբ հետվիրահատական հետևանքներն այլևս չեն կարող խոչընդոտել թռիչքի ընթացքում մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը (տե՛ս Բ ենթամասի 6-րդ հավելվածի 3-րդ և 4-րդ պարբերությունը):

[Փոփոխություն 1, 2000 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ-ՖՍԼ 3.190 Սեռական ճանապարհով փոխանցվող և վարակիչ այլ հիվանդություններ

ա) 1-ին դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդության կամ այլ վարակիչ հիվանդության հաստատված անամնեզ կամ կլինիկական

հետազոտության արդյունքում հայտնաբերված ախտորոշում, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Առանձնակի ուշադրություն պետք է դարձնել (տե՛ս սույն ենթամասի 7-րդ հավելվածը) հիվանդության պատմությանը կամ կլինիկական նշաններին, որոնք ցույց են տալիս՝

- 1) ՄԻԱՎ-ի դրական կարգավիճակը, ՋԱՌ ՖՍԼ 3.190 (շարունակություն)
- 2) իմունային համակարգի թուլացումը,

3) վարակիչ հեպատիտը,

4) սիֆիլիսը:

ՋԱՌ--ՖՍԼ 3.195 Գինեկոլոգիա և մանկաբարձություն

ա) 1-ին դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա որևէ մանկաբարձագինեկոլոգիական ֆունկցիոնալ կամ կառուցվածքային խանգարում, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Դաշտանային ցիկլի անբուժելի սուր խանգարումներ ունեցող դիմողը պետք է ճանաչվի թոնոլոգիային աշխատանքի համար ոչ պիտանի:

գ) Հղիության շրջանում դիմողը համարվում է աշխատանքի համար ոչ պիտանի: Եթե մանկաբարձական հետազոտության արդյունքում հաստատվում է ամբողջությամբ կանոնավոր ընթացող հղիություն, դիմողը կարող է ճանաչվել թոնոլոգիային աշխատանքի համար պիտանի մինչև հղիության 26-րդ շաբաթվա վերջը՝ Բ ենթամասի 8-րդ հավելվածի 1-ին պարբերության համաձայն [ԱԲԲ-ի, ԱԲԿ-ի կամ ԲԶԻԱ-ի կողմից]: Վկայականներով մասնագիտական

պարտականությունների կատարումը կարող է վերականգնվել լիարժեք ապաքինումը հիմնավորապես հաստատվելուց հետո՝ հղիությունը պահպանելուց կամ այն ընդհատելուց հետո:

դ) ռադիկալ գինեկոլոգիական վիրահատության ենթարկված դիմողը պետք է ճանաչվի թոնոլոգիային աշխատանքի համար ոչ պիտանի [] երեք ամիս ժամանակահատվածով [] [կամ] մինչև այն ժամանակահատվածը, երբ հետվիրահատական հետևանքներն այլևս չեն կարող խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը (տե՛ս Բ ենթամասի 8-րդ հավելվածի 2-րդ պարբերությունը):

[Փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ--ՖՍԼ 3.200 Հենաշարժական ապարատին ներկայացվող պահանջներ

ա) 1-ին դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա ոսկորների, հոդերի, մկանների և ջլերի բնածին կամ ձեռքբերովի արատ, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Դիմողը պետք է ունենա բավականաչափ հասակ՝ նստած վիճակում, ձեռքերի և ոտքերի երկարություն և մկանային ուժ՝ տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականություններն անվտանգ կատարելու նպատակով (տե՛ս Բ ենթամասի 9-րդ հավելվածի 1-ին պարբերությունը):

գ) Դիմողը պետք է ունենա բավականաչափ զարգացած հենաշարժական ապարատ: Ախտահարման, վնասվածքի կամ ոսկրերի, հոդերի, մկանների կամ ջլերի զգալի բարդություններով վիրահատության ենթարկված կամ չենթարկված դիմողների պիտանիությունը պետք է գնահատվի Բ ենթամասի 9-րդ հավելվածի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն:

ՋԱՌ-ՖՍԼ 3.205 Հոգեկան վիճակին ներկայացվող պահանջներ

ա) 1-ին դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա սուր կամ քրոնիկ, բնածին կամ ձեռքբերովի որևէ հոգեկան հիվանդության կամ ֆունկցիոնալ խանգարումների, համախտանիշների կամ խախտումների վերաբերյալ հավաքված անամնեզ կամ կլինիկական հետազոտության

արդյունքում կայացված ախտորոշում, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ստորև նշվածին (տե՛ս Բ ենթամասի 10-րդ հավելվածը)՝

1) շիզոֆրենիա, շիզոիդային բնույթի և գառանցանքներով ուղեկցվող խանգարումներ,

2) տրամադրության խանգարումներ,

3) ներոտիկ և սթրեսների հետ կապված ու սոմատոֆորմ խանգարումներ,

4) անձի և վարքի խանգարումներ,

5) օրգանական հոգեկան խանգարումներ,

6) ալկոհոլիզմի հետևանքով հոգեկան խանգարումներ և վարքի խանգարումներ,

7) հոգեմետ նյութերի օգտագործում կամ չարաշահում:

[Փոփոխություն 3, 2003 թվականի հունիսի 1]

ՋԱՌ-ՖՍԼ 3.210 Նյարդաբանական համակարգին ներկայացվող պահանջներ

ա) 1-ին դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա նյարդաբանական վիճակի մասին հաստատված անամնեզ կամ կլինիկական հետազոտության արդյունքում կայացված ախտորոշում, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով)

նախատեսված մասնագիտական
պարտականությունների անվտանգ
կատարումը:

բ) Առանձնահատուկ ուշադրություն
պետք է դարձնել ստորև նշվածին (տե՛ս Բ
ենթամասի 11-րդ հավելվածը)՝

1) նյարդային համակարգի պրոգրեսիվ
զարգացող հիվանդություն,

2) էպիլեպսիա և գիտակցության
խանգարման այլ պատճառներ,

3) ցերեքրալ դիսֆունկցիա՝
խանգարման նախատրամադրվածությամբ
վիճակներ,

4) գլխի վնասվածք,

5) ողնուղեղային կամ պերիֆերիկ
նյարդի վնասվածք:

գ) Անհրաժեշտ է կատարել
էլեկտրասրտագրություն []՝ էլնելով
դիմողի անամնեզից կամ ըստ կլինիկական
ցուցումների [(տե՛ս Բ ենթամասի 11-րդ
հավելվածը)]:

[Փոփոխություն 2, 2002 թվականի հունիսի 1,
փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ-ՏՄԼ 3.215 Ակնաբուժական պահանջներ

(տե՛ս Բ ենթամասի 12-րդ հավելվածը)

ա) 1-ին դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա աչքերի կամ դրանց հավելումների ֆունկցիոնալ որևէ խանգարում կամ որևէ ակտիվ ախտաբանական վիճակ՝ բնածին կամ ձեռքբերովի, սուր կամ քրոնիկ, կամ էլ աչքի հետվիրահատական բարդություն կամ տրավմա, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Պահանջվում է [ԱԲԲ-ի պահանջները բավարարող ակնաբույժի կամ մասնագետ ակնաբույժի կողմից (Բոլոր տեսակի խանգարումները և կասկածելի դեպքերը պետք է ներկայացվեն ԱԲԲ-ի պահանջները բավարարող ակնաբույժին)] ակնաբուժական հետազոտություն՝ նախնական զննության ժամանակ [] և այն պետք է ներառի՝

1) հիվանդության պատմությունը,

2) տեսողության սրությունը, հեռու, մոտ և միջին տարածության վրա տեսողություն՝ չչտկված, անհրաժեշտության դեպքում, լավագույն օպտիկական շտկմամբ,

3) հետազոտման օբյեկտիվ մեթոդով ռեֆրակցիան. մինչև 25 տարեկան գերմետրոպիայով տառապող դիմողներ:

4) աչքի շարժունակությունն ու բինոկուլյար տեսողությունը,

5) գունային տեսողությունը,

6) տեսողական դաշտը,

7) աչքի ճնշումաչափությունը՝ ըստ կլինիկական ցուցումների և [40 տարեկանը լրանալուց հետո],

8) արտաքին աչքի, դրա կառուցվածքի, միջավայրի [(բիոմիկրոսկոպիկ հետազոտությունը՝ ճեղքային լուսավորման պայմաններում [ճեղքային լամպ]) և աչքի հատակի հետազոտությունը:[]

գ) Աչքի պարբերական հետազոտություն [կարող է կատարվել ԲՁԻԼԱ-ի կողմից: Այն] պետք է կազմի բժշկական սերտիֆիկատի նորացման կամ դրա գործողության ժամկետի երկարաձգման նպատակով բոլոր բժշկական զննումների մի մասը (տե՛ս Բ ենթամասի 12-րդ հավելվածի 2-րդ պարբերությունը) և պետք է ներառի՝

1) հիվանդության պատմությունը,

2) տեսողության սրությունը, հեռու, մոտ և միջին տարածության վրա տեսողություն՝ չչտկված, անհրաժեշտության դեպքում՝ լավագույն օպտիկական շտկմամբ,

3) [] [արտաքին աչքի, դրա կառուցվածքի, միջավայրի և աչքի հատակի հետազոտությունը],

4) լրացուցիչ հետազոտություն՝ ըստ կլինիկական ցուցումների [(տե՛ս Բ ենթամասի 12-րդ հավելվածի 4-րդ պարբերությունը)]:

դ) Եթե բժշկական սերտիֆիկատ ունեցող ավիացիոն մասնագետների մոտ ֆունկցիոնալ կարողությունների նորմերը (6/9 [(0,7)], [] 6/6 [(1,0)], N14, N5) կարող են բավարարվել միայն շտկիչ լինզաների օգնությամբ [] [նեֆրակցիայի անոմալիան գերազանցում է ± 3 դիօպտրիան], բժշկական զննում իրականացնելու համար դիմողը պետք է լիազորված անձին ներկայացնի ԱԲԿ-ի պահանջները բավարարող ակնաբույժի կամ աչքի խնամքի մասնագետի կողմից տրամադրված բժշկական եզրակացությունը (տե՛ս Բ ենթամասի 12-րդ հավելվածի 3-րդ պարբերությունը):

[] [Եթե ռեֆրակցիայի անոմալիան գտնվում է +5-ից -6 դիօպտրիայի միջակայքում, ապա [այս] հետազոտությունը պետք է իրականացվեր 60 ամսվա ընթացքում՝ մինչև ընդհանուր բժշկական զննումը: Եթե ռեֆրակցիայի անոմալիան գերազանցում է այս սահմանաչափը, ապա այս հետազոտությունը պետք է կատարվեր 24 ամսվա ընթացքում՝ մինչ

հետազոտությունը:] Հետազոտությունն իր մեջ պետք է ներառի՝

1) հիվանդության պատմությունը,

2) տեսողության սրությունը, հեռու, մոտ և միջին տարածության վրա տեսողություն՝ չշտկված, անհրաժեշտության դեպքում, լավագույն օպտիկական շտկմամբ,

3) ռեֆրակցիան,

4) աչքի շարժունակությունն ու բինոկուլյար տեսողությունը,

[] [5] տեսողական դաշտը,

[] [6] աչքի ճնշումաչափությունը՝ [] [40 տարեկանը լրանալուց հետո],

[] 7) արտաքին աչքի, կառուցվածքի, միջավայրի հետազոտությունը, [(ճեղքային լամպ)] և աչքի հատակի հետազոտությունը: []

Բժշկական եզրակացությունը պետք է ներկայացվի ԱԲԲ: Որևէ շեղում հայտնաբերելու դեպքում, ինչպես օրինակ՝ եթե դիմողի աչքի հետ կապված կան առողջական խնդիրներ, կպահանջվեն լրացուցիչ ակնաբուժական հետազոտություններ (տե՛ս Բ ենթամասի 12-րդ հավելվածի 4-րդ պարբերությունը):

[Ե) Առաջարկվում է, որ 40 տարեկանը լրանալուց հետո 1-ին դասի բժշկական սերտիֆիկատ ունեցող ավիացիոն մասնագետները յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ անցնեն ճնշումաչափություն կամ ներկայացնեն ճնշումաչափության արդյունքները, որը

պետք է կատարվեր 24 ամսվա ընթացքում՝
մինչև հետազոտությունը:]

[](զ) Եթե [](մասնագետի կողմից) որևէ
[կարևոր] պատճառով պահանջվում են
ակնաբուժական հետազոտություններ,
բժշկական սերտիֆիկատում պետք է նշվի
հնարավորությունների սահմանը
«Պահանջվում է մասնագետի կողմից
ակնաբուժական հետազոտություն – RXO»:
Նման սահմանափակումը կարող է
կիրառվել ԲԶԻԼԱ-ի կողմից, սակայն
կարող է հանվել միայն ԱԲԲ-ի կողմից:

[Փոփոխություն 3, 2003 թվականի հունիսի 1,
փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1,.]

**ՋԱՌ-ՖՍԼ 3.220 Տեսողությանը
ներկայացվող պահանջներ**

ա) *Հեռատեսության սրություն.*
տեսողության շտկմամբ կամ առանց
շտկելու՝ յուրաքանչյուր աչքի
հեռատեսության սրությունը պետք է լինի
6/9 (0,7) և երկու աչքի տեսողության

սրությունը պետք է լինի 6/6 (1,0) կամ ավելին (տե՛ս ստորև ՋԱՌ-ՖՍԼ 3.220(է)):
Ոչ մի սահմանափակում չի կիրառվում չշտկված տեսողության սրության նկատմամբ:

բ) *Ռեֆրակցիայի անոմալիաներ.*
ռեֆրակցիայի անոմալիան սահմանվում է որպես ամենամետրոպիկ միջօրեականում դիօպտրիաներով չափվող նորմալ տեսողությունից շեղում: Ռեֆրակցիան չափվում է ստանդարտ մեթոդներով (տե՛ս Գ ենթամասի 13-րդ հավելվածի 1-ին պարբերությունը): Դիմողները պետք է [] [ճանաչվեն թոփչքային աշխատանքի համար] պիտանի ռեֆրակցիայի անոմալիայի մասով, եթե նրանք բավարարում են հետևյալ պահանջները՝

1) *Ռեֆրակցիայի անոմալիաներ*

i) Առաջին անգամ բժշկական սերտիֆիկատ ստանալիս ռեֆրակցիայի անոմալիան պետք է լինի [] [+5-ից -6] դիօպտրիայի միջակայքում (տե՛ս Բ ենթամասի 13-րդ հավելվածի 2 (ա) պարբերությունը):

ii) Բժշկական սերտիֆիկատի նորացման կամ դրա գործողության ժամկետի երկարաձգման նպատակով բոլոր բժշկական զննումների ժամանակ այն դիմողը, ով արդեն բավարարել է ավիացիոն մարմնի կողմից սահմանված [] [+5] դիօպտրիան չգերազանցող [ա] ռեֆրակտիվ [] [անոմալիայով [կամ -6

դիօպտրիան գերազանցող ռեֆրակտիվ անոմալիայի բարձր կարճատեսությամբ] պահանջը, ԱԲԲ-ի կողմից կարող է [] [ճանաչվել] թոփչքային աշխատանքի համար պիտանի (տե՛ս Բ ենթամասի 13-րդ հավելվածի 2 (բ) պարբերությունը):

[] iii) Բարձր ռեֆրակտիվ անոմալիայով տառապող դիմողները պետք է կրեն կոնտակտային լինզաներ կամ բեկման բարձր գործակցով ակնոցներ:]

2) Աստիգմատիզմ

i) աստիգմատիզմի բաղադրիչով ռեֆրակցիայի անոմալիայով տառապող՝ առաջին անգամ բժշկական զննում անցնող դիմողի մոտ աստիգմատիզմը չպետք է գերազանցի [] [2,0] դիօպտրիան:

ii) Բժշկական սերտիֆիկատի [] [նորացման] կամ գործողության ժամկետի երկարաձգման նպատակով բժշկական զննումների ժամանակ այն դիմողը, ով արդեն բավարարել է ավիացիոն մարմնի կողմից սահմանված [] [3.0] դիօպտրիան չգերազանցող [ա] ռեֆրակտիվ [] [անոմալիայով պահանջը, կարող է ԱԲԲ-ի կողմից [] [ճանաչվել] թոփչքային աշխատանքի համար պիտանի [(տե՛ս Բ ենթամասի 13-րդ հավելվածի 3-րդ պարբերությունը)]:

3) Կոնաձև եղջերաթաղանթը հիմք է՝ թոփչքային աշխատանքի համար ոչ պիտանի ճանաչելու համար: ԱԲԲ-ն կարող է քննարկել [] [բժշկական

սերտիֆիկատի նորացման կամ դրա գործողության ժամկետի երկարաձգման նպատակով բժշկական գննումների հարցը], եթե դիմողը բավարարում է առողջական վիճակի պիտանիության [] պահանջները [տեսողության սրության նկատմամբ ներկայացվող պահանջները] (տե՛ս Բ ենթամասի 13-րդ հավելվածի 3-րդ պարբերությունը):

4) Անիզոմետրոպիա

i) Նախնական բժշկական հետազոտության ժամանակ ռեֆրակցիայի անոմալիաների տարբերությունը երկու աչքի միջև (անիզոմետրոպիա) չպետք է գերազանցի [][2.0] դիօպտրիան:

ii) Բժշկական սերտիֆիկատի [] [նորացման] կամ գործողության ժամկետի երկարաձգման նպատակով բժշկական գննումների ժամանակ այն դիմողը, ով արդեն բավարարել է ավիացիոն մարմնի կողմից սահմանված երկու աչքի միջև [][3.0] դիօպտրիան [գերազանցող] [(անիզոմետրոպիա)][] ռեֆրակտիվ անոմալիայի տարբերությամբ պահանջները, կարող է ԱԲԲ-ի կողմից [][ճանաչվել] թռիչքային աշխատանքի համար պիտանի: [Պետք է կրել կոնտակտային լինզաներ, եթե անիզոմետրոպիան գերազանցում է 3,0 դիօպտրիան (տե՛ս Բ ենթամասի 13-րդ հավելվածի 5-րդ պարբերությունը):]

5) Ծերունական հեռատեսության զարգացմանը պետք է հետևել բժշկական

սերտիֆիկատի գործողության ժամկետը երկարաձգելու նպատակով՝ ավիաբժշկական գննումների ամբողջ ընթացքում:

6) Դիմողը պետք է կարողանա ընթերցել տեսողության ստուգման թիվ 5 աղյուսակը (կամ դրան համարժեքը) 30-50 [][սանտիմետր] հեռավորության վրա և թիվ 14 աղյուսակը (կամ դրան համարժեքը) 100 [][սանտիմետր] հեռավորության վրա շտկմամբ, եթե այն նշանակված է (տե՛ս ստորև ՋԱՌ-ՖՍՆ 3.220(է)):

գ) Բինոկուլյար տեսողության զգալի արատներով դիմողը պետք է ճանաչվի թռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի [] (տե՛ս Բ ենթամասի 13-րդ հավելվածի 4-րդ պարբերությունը):

դ) Դիպլոպիայով տառապող դիմողը պետք է ճանաչվի թռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի:

ե) Այն դիմողը, ում աչքի մկանների անհավասարակշռությունը (թաքնված շլություն կամ հետերոֆորիա), գերազանցում է (ավանդական եղանակով շտկմամբ չափելիս՝ եթե նշանակված են)՝

[][2,0] 6 մետր հեռավորության վրա հիպերֆորիայում պրիզմայական դիօպտրիան.

[][10,0] 6 մետր հեռավորության վրա էզոֆորիայի դեպքում պրիզմայական դիօպտրիան.

[] [8.0] 6 մետր հեռավորության վրա էկզոֆորիայի դեպքում պրիզմայական դիօպտրիան.

և

[] [1.0] 33 սանտիմետր հեռավորության վրա հիպերֆորիայի դեպքում պրիզմայական դիօպտրիան.

[] [8.0] 33 սանտիմետր հեռավորության վրա էզոֆորիայի դեպքում պրիզմայական դիօպտրիան.

[] [12.0] 33 սանտիմետր հեռավորության վրա պրիզմայական դիօպտրիան, պետք է ճանաչվի թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Եթե ֆուզիոն պահեստային հնարավորությունները բավարար են՝ ասթենոպիան և դիպլոպիան կանխելու համար, ԱԲԲ-ն կարող է քննարկել առողջական վիճակի պիտանիության գնահատման հարցը (տե՛ս Բ ենթամասի 13-րդ հավելվածի 5-րդ պարբերությունը):

զ) Տեսողական դաշտի [խանգարումներով] դիմողը պետք է ճանաչվի թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի (տե՛ս Բ ենթամասի 13-րդ հավելվածի 4-րդ պարբերությունը):

է) 1) Եթե տեսողության նկատմամբ ներկայացվող պահանջը բավարարվում է միայն շտկման կիրառմամբ, ապա ակնոցները կամ կոնտակտային լինզաները պետք է ապահովեն օպտիմալ տեսողական ֆունկցիա և ավիացիոն նպատակների համար [անհարմարություն չառաջացնեն և] հարմար լինեն:

[Կոնտակտային լինզաներ կրելու դեպքում դրանք պետք է լինեն մոնոֆոկալ և հեռատեսության համար: Եղջերաթաղանթի ձևափոխմամբ տեսողության շտկման լինզաներ չպետք է կիրառվեն:]

2) Ավիացիոն նպատակներով կրելու դեպքում շտկիչ լինզաները պետք է թույլ տան վկայական ունեցողին բոլոր

հեռավորությունների վրա բավարարել տեսողության նկատմամբ ներկայացվող պահանջները: Տվյալ պահանջը բավարարելու համար պետք է օգտագործվի ոչ ավելի, քան մեկ ակնոց:

[3] Ավիացիոն նպատակներով կրելու դեպքում կոնտակտային լինզաները պետք է լինեն մոնոֆոկալ և չմգեցված:]

[][4] Տեսողության շտկման ևս մեկ ակնոց պետք է ունենալ՝ վկայականով իրեն ընձեռոված իրավունքներն իրականացնելու համար:

ը) աչքի վիրահատություն՝

1) Վիրաբուժական միջամտությամբ տեսողության շտկումից հետո դիմողը ճանաչվում է թռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի: [][Պիտանիության գնահատման հարցը] կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից (տե՛ս Բ ենթամասի 13-րդ հավելվածի 6-րդ պարբերությունը):

2) Կատարակտայի (ոսպնյակի պղտորում), ցանցաթաղանթի և գլաուկոմայի վիրահատությունից հետո դիմողը ճանաչվում է թռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի: [][Բժշկական սերտիֆիկատի նորացման կամ դրա գործողության ժամկետի երկարաձգման նպատակով բժշկական զննումների ընթացքում պիտանիության գնահատման հարցը] կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից (տե՛ս Գ ենթամասի 13-րդ հավելվածի 7-րդ պարբերությունը):

[Փոփոխություն 3, 2003 թվականի հունիսի 1. փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ-ՖՍԼ 3.225 Գունազգացողություն

ա) Նորմալ գունազգացողությունը սահմանվում է որպես Իշիհարա թեստը հաջողությամբ հանձնելուց կամ Նագելի՝ գունային տեսողության հետազոտման սարքով հետազոտվելուց հետո նորմալ եռաքրոմատ տեսողության բժշկական եզրակացության կայացում (տե՛ս Բ ենթամասի 14-րդ հավելվածի 1-ին պարբերությունը):

բ) Դիմողը պետք է ունենա նորմալ գունազգացողություն կամ գունաճանաչություն: [Նախնական զննության ժամանակ դիմողները պետք է անցնեն Իշիհարա թեստը:] Այն դիմողները, ովքեր ձախողում են Իշիհարա թեստը, պետք է ճանաչվեն որպես նորմալ գունաճանաչություն ունեցող, եթե նրանք ԱԲԲ-ի կողմից ընդունելի մեթոդներով բազմակողմանի հետազոտություն են անցնում (անումալոսկոպիա կամ տեսողության ստուգման համար լապտերիկ (տե՛ս Բ ենթամասի 14-րդ հավելվածի 2-րդ պարբերությունը) [Բժշկական սերտիֆիկատի նորացման կամ դրա գործողության ժամկետի երկարաձգման նպատակով բժշկական զննումների ժամանակ գունային տեսողությունը պետք է ստուգվի միայն ըստ կլինիկական ցուցումների:]

զ) Այն դիմողի մոտ, ով ձախողում է ընդունված գունազգացողության թեստերը, պետք է ախտորոշվի գունային տեսողության խախտում, և նա պետք է ճանաչվի թոնոչքային աշխատանքի համար ոչ պիտանի:

[Փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ-ՏՍԼ 3.230 Օտորինոլարինգոլոգիական պահանջներ

ա) 1-ին դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա ականջների, քթի խոռոչի կամ կոկորդի (այդ թվում՝ բերանի խոռոչի, ատամների և ըմպանի) ֆունկցիոնալ խանգարում կամ որևէ ակտիվ ախտաբանական վիճակ՝ ձեռքբերովի կամ բնածին, սուր կամ խրոնիկ, կամ հետվիրահատական բարդություն կամ տրավմայի, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Պահանջվում է օտորինոլարինգոլոգիական ամբողջական հետազոտություն առաջին անգամ բժշկական սերտիֆիկատ ստանալիս և հետագայում [ըստ կլինիկական ցուցումների] [] ([] [համապարփակ] հետազոտություն. տե՛ս Բ ենթամասի 15-

րդ հավելվածի 1-ին և 2-րդ պարբերությունները) [և պետք է ներառի՝

- 1) հիվանդության պատմությունը,
- 2) կլինիկական հետազոտությունը՝ ներառյալ օտոսկոպիան, հետին ռինոսկոպիան և բերանի խոռոչի ու կոկորդի զննումը,

3) տիմպանոմետրիան կամ դրա համարժեքը,

4) անդաստակային (վեստիբուլյար) համակարգի կլինիկական գնահատումը:

Օտորինոլարինգոլոգիական շրջանում բոլոր շեղումները և կասկածելի դեպքերը պետք է ներկայացվեն ԱԲԲ-ի կողմից սահմանվող պահանջները բավարարող ավիացիոն օտորինոլարինգոլոգին:

զ) Քիթ-կոկորդ-ականջի հերթական հետազոտությունը պետք է կազմի բժշկական սերտիֆիկատի նորացման կամ գործողության ժամկետի երկարաձգման նպատակով բժշկական զննումների մի մասը (տե՛ս Բ ենթամասի 15-րդ հավելվածը):

դ) Դիմողը պետք է ճանաչվի թոնոչքային աշխատանքի համար ոչ պիտանի, եթե նրա մոտ առկա են հետևյալ խանգարումները՝

1) ներքին կամ միջին ականջի սուր կամ քրոնիկ ակտիվ ախտաբանական գործընթաց.

2) թմբկաթաղանթների չբուժված պերֆորացիա կամ դիսֆունկցիա (տե՛ս Բ

ենթամասի 15-րդ հավելվածի 3-րդ պարբերությունը).

3) վեստիֆուլյար ապարատի ֆունկցիոնալ խանգարումներ (տե՛ս Գ ենթամասի 15-րդ հավելվածի 4-րդ պարբերությունը).

4) դեպի երկու քթանցք օդի մուտքի զգալի սահմանափակում կամ քթի խոռոչի դիսֆունկցիա.

(5) բերանի խոռոչի կամ վերին շնչուղիների խոշոր արատ կամ խոշոր, սուր կամ քրոնիկ ինֆեկցիա.

6) խոսքի և ձայնի զգալի խանգարում:
[Փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ-ՏՄԼ 3.235 Լսողությանը ներկայացվող պահանջներ

ա) Լսողությունը պետք է հետազոտել բժշկական բոլոր զննումների ժամանակ: Դիմողը պետք է ճիշտ ընկալի բանավոր խոսքը միմյանց հետ զրույցի տեսքով թեստի ժամանակ՝ երկու մետր հեռավորության վրա և մեջքով կանգնած ԲԶԻԼԱ-ին:

բ) Լսողությունը պետք է ստուգվի խոսքային աուդիոմետրիայի միջոցով՝ առաջին անգամ բժշկական սերտիֆիկատ ստանալիս և հերթական՝ բժշկական սերտիֆիկատի նորացման կամ դրա գործողության ժամկետի երկարաձգման նպատակով բժշկական գննումների ժամանակ յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ՝ մինչև 40 տարին լրանալը և դրանից հետո՝ յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ (տե՛ս Բ ենթամասի 16-րդ հավելվածի 1-ին պարբերությունը):

գ) Յուրաքանչյուր ականջն առանձին հետազոտելիս [] [չպետք է] լինի երկու ականջի լսողության կորուստ ավելի քան [] [35 դբ(HL) 500, 1 000, և 2 000 հերց հաճախականությունների դեպքում կամ ավելի քան 50 դբ(HL) 3 000 հերց հաճախականության դեպքում:] []

[] [դ)] Բժշկական սերտիֆիկատի նորացման կամ դրա գործողության ժամկետի երկարաձգման նպատակով բժշկական գննումների ժամանակ մասնակի խլությամբ տառապող դիմողները ԱԲԲ-ի կողմից կարող են ճանաչվել թռիչքային աշխատանքի համար պիտանի, եթե բանավոր խոսքի տարբերակման թեստի արդյունքում պարզվում է, որ դիմողն ունի բավարար լսողություն (տե՛ս Բ ենթամասի 16-րդ հավելվածի 2-րդ պարբերությունը):

[Փոփոխություն 4, 2005 թվականի օգոստոսի 1, փոփոխություն 4, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ-ՖՍԼ 3.240 Հոգեբանական վիճակին ներկայացվող պահանջներ

ա) 1-ին դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա կայուն հոգեբանական արատներ (տե՛ս Բ ենթամասի 17-րդ հավելվածի 1-ին պարբերությունը), որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը: Հոգեբանական գնահատումը կարող է պահանջվել ԱԲԲ-ի կողմից, եթե այն նշված է որպես մասնագետ հոգեբույժի կամ նյարդաբանական հետազոտման մի մաս կամ լրացում (տե՛ս Բ ենթամասի 17-րդ հավելվածի 2-րդ պարբերությունը):

բ) Եթե նշանակվում է հոգեբանական գնահատում, ապա պետք է դիմել ԱԲԲ-ի կողմից ներկայացվող պահանջները բավարարող հոգեբանի ծառայություններին:

գ) Հոգեբանը պետք է ԱԲԲ ներկայացնի գրավոր հաշվետվություն՝ մանրամասն ներկայացնելով իր եզրակացությունը և առաջարկությունը:

ՋԱՌ-ՖՍԼ 3.245 Մաշկաբանական պահանջներ

ա) 1-ին դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է

ունենա կայուն ախտորոշված դերմատոլոգիական խնդիր, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը: Հոգեբանական գնահատումը կարող է պահանջվել ԱԲԲ-ի կողմից, եթե այն նշված է որպես մասնագետ հոգեբույժի կամ նյարդաբանական հետազոտման մի մաս կամ լրացում (տե՛ս Բ ենթամասի 17-րդ հավելվածի 2-րդ պարբերությունը):

ՋԱՌ-ՖՍԼ 3.245 (շարունակություն)

բ) Առաջարկվում է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ստորև նշված խանգարումներին (տե՛ս Բ ենթամասի 18-րդ հավելվածը)՝

- 1) էկզեմա (էկզոզեմ և էնդոզեմ),
- 2) ծանր փսորիազ,
- 3) բակտերիալ ինֆեկցիաներ,
- 4) դեղորայքային ցանավորում,
- 5) բույրոգային ցան,
- 6) մաշկի չարորակ նորագոյացություններ,
- 7) եղջերատենդ:

Դիմողը պետք է ուղեգրվի ԱԲԲ-ի մոտ՝ առողջական վիճակի հետ կապված որևէ խնդրի առաջացման դեպքում:

ՋԱՌ-ՖՍԼ 3.246 Ուռուցքաբանություն

ա) 1-ին դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա առաջին կամ երկրորդ շրջանի հաստատված չարորակ հիվանդություն, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Չարորակ հիվանդությունից բուժվելուց հետո դիմողները կարող են ճանաչվել թոփչքային աշխատանքի համար պիտանի՝ համաձայն Գ ենթամասի 19-րդ հավելվածի:

[Փոփոխություն 2, 2002 թվականի հունիսի 1]

ՄԻՏՈՒՄՆԱՎՈՐ ԴԱՏԱՐԿ ԹՈՂՆՎԱԾ ՏԱՐԱԾՔ

ԲԱԺԻՆ 1

**ԵՆԹԱԲԱԺԻՆ Գ. 2-ԴՂ ԴԱՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ**

**ՋԱՌ-ՖՍԼ 3.250 Սրտանոթային
համակարգ. հետազոտություն**

ա) 2-րդ դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա սրտանոթային համակարգի որևէ խանգարում՝ բնածին կամ ձեռքբերովի, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Պահանջվում են ստանդարտ 12-արտածումով հանգստի վիճակում էլեկտրասրտագրություն (ԷԿԳ) և գննման արդյունքներ՝ առաջին հետազոտության ժամանակ բժշկական սերտիֆիկատն առաջին անգամ տրամադրելու համար՝ 40 տարին լրանալուց հետո և դրանից հետո յուրաքանչյուր ավիաբժշկական գննման ժամանակ:

գ) Ֆիզիկական վարժության ժամանակ էլեկտրասրտագրության անցկացումը պահանջվում է միայն ըստ կլինիկական ցուցումների՝ Գ ենթամասի 1-ին հավելվածի 1-ին պարբերությանը համապատասխան:

դ) Հանգստի և ֆիզիկական վարժությունների ժամանակ

էլեկտրասրտագրառումների մասին եզրակացությունները պետք է տրամադրի ԲԶԻԼԱ-ն կամ ԱԲԲ-ի կողմից ներկայացված՝ պահանջները բավարարող այլ մասնագետ:

ե) Եթե դիմողի մոտ առկա է երկու կամ ավելի հիմնական ռիսկային գործոն (ծխելը, գերլարվածություն, շաքարային դիաբետ, ճարպակալում և այլն), բժշկական սերտիֆիկատն առաջին անգամ տրամադրելու համար հետազոտության ժամանակ պահանջվում է արյան շիճուկի լիպիդների և շիճուկային խոլեստերինի գնահատում՝ [] [40 տարեկանը լրանալուց հետո և ըստ կլինիկական ցուցումների (տե՛ս Գ ենթամասի 1-ին հավելվածի 2-րդ պարբերությունը)]:

[Փոփոխություն 4, 2005 թվականի օգոստոսի 1. փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

**ՋԱՌ-ՖՍԼ 3.255 Սրտանոթային
համակարգ. արյան ճնշում**

ա) Արյան ճնշումը պետք է արձանագրվի Գ ենթամասի 1-ին հավելվածի 3-րդ պարբերությունում տրված մեթոդի կիրառմամբ [յուրաքանչյուր հետազոտության ժամանակ]:

բ) Եթե արյան ճնշումը գննելու ժամանակ սիստոլիկ զարկերակային ճնշումն

անընդհատ գերազանցում է 160 մմ սնդիկի սյունը և (կամ) դիաստոլիկ զարկերակային ճնշումը՝ 95 մմ սնդիկի սյունը՝ անկախ բուժում ստանալու կամ չստանալու հանգամանքից, դիմողը պետք է ճանաչվի թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի:

գ) Արյան ճնշման կարգավորման համար բուժումը պետք է համատեղելի լինի վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարմանը և այդ բուժումը պետք է կատարվի Գ ենթամասի 1-ին հավելվածի 4-րդ պարբերության պահանջներին [] [համապատասխան]: [] [Դեղորայքային բուժման] ընթացքում պահանջվում է զգալի կողմնակի ազդեցություններից խուսափելու համար բժշկական սերտիֆիկատի գործողության ժամանակավոր կասեցում:

դ) Միմպտոմատիկ հիպոտենզիայով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի:

[Փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ--ՖՍԼ 3.260 Սրտանոթային համակարգ. կորոնար զարկերակի հիվանդություն

ա) Այն դիմողները, ում մոտ կասկածում են սրտի իշեմիա, պետք է պարտադիր հետազոտվեն: Բուժում չպահանջող ասիմպտոմատիկ, թեթև կորոնար զարկերակի հիվանդությամբ տառապող անձինք կարող են [] [ճանաչվել թոխչքային աշխատանքի համար] պիտանի ԱԲԲ-ի կողմից, եթե բավարար կերպով են կատարվել Գ ենթամասի 1-ին հավելվածի 5-րդ պարբերությունում նշված հետազոտությունները:

բ) Կորոնար զարկերակի սիմպտոմատիկ հիվանդությամբ կամ դեղորայքով կարգավորվող սրտային համախտանիշներով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի:

գ) Սրտի իշեմիկ նոսրացումը հետո (սահմանվում է որպես միոկարդի ինֆարկտ, ստենոկարդիա, սուր առիթմիա կամ իշեմիայի հետևանքով սրտի անբավարարվածություն կամ ցանկացած տեսակի սրտի ռեվասկուլյարիզացիա) 2-րդ դասի բժշկական սերտիֆիկատի համար [] [դիմողների] [պիտանիության գնահատման] հարցը կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից, եթե Գ ենթամասի 1-ին հավելվածի 6-րդ պարբերությունում նշված հետազոտությունները բավարար մակարդակով են կատարվում:

[Փոփոխություն 1, 2000 թվականի դեկտեմբերի 1, փոփոխություն 4, 2005 թվականի օգոստոսի 1, փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ-ՏՄԼ 3.265 Սրտանոթային համակարգ. սրտի ռիթմի (անոթների հաղորդականության) խանգարումներ

ա) Վերփորոքային ռիթմի խանգարմամբ, այդ թվում՝ սինուսային ռիթմի կայուն և ոչ կայուն դիսֆունկցիա ունեցող բոլոր դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Առողջական վիճակի պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից՝ Գ ենթամասի 1-ին հավելվածի 7-րդ պարբերությանը համապատասխան:

բ) Ասիմպտոմատիկ սինուսային բրադիկարդիայով կամ սինուսային տախիկարդիայով տառապող դիմողները կարող են ճանաչվել թոխչքային աշխատանքի համար պիտանի կոնկրետ խանգարման բացակայության դեպքում:

գ) Ասիմպտոմատիկ առանձնացված ընդհանուր վերփորոքային կամ փորոքային էկտոպիկ համալիր հիվանդություններով տառապող դիմողները չպետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Հաճախակի կրկնվող կամ բարդ ձևերը պահանջում են սրտի առողջական վիճակի ամբողջական հետազոտում՝ Գ ենթամասի 1-ին հավելվածի 7-րդ պարբերությանը համապատասխան:

դ) Ցանկացած այլ ախտահարումների բացակայության դեպքում հիսի խրձի ոտիկների ոչ լրիվ բլոկադայով կամ աջ

առանցքի կայուն շեղմամբ տառապող դիմողները կարող են ճանաչվել թոխչքային աշխատանքի համար պիտանի:

ե) Հիսի խրձի աջ ոտիկների լրիվ բլոկադայով տառապող դիմողները պետք է առաջին իսկ այցելության ժամանակ և դրանից հետո անցնեն սրտի հետազոտություն՝ Գ ենթամասի 1-ին հավելվածի 7-րդ պարբերությանը համապատասխան:

զ) Հիսի խրձի ձախ ոտիկների լրիվ բլոկադայով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Առողջական վիճակի պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից՝ Գ ենթամասի 1-ին հավելվածի 7-րդ պարբերությանը համապատասխան:

է) Կոնկրետ խանգարման բացակայության դեպքում առաջին աստիճանի և Մոբիցի 1 ԱՎ տեսակի բլոկադայով տառապող դիմողները կարող են ճանաչվել թոխչքային աշխատանքի համար պիտանի: Մոբից 2 տեսակի կամ լրիվ ԱՎ բլոկադայով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Առողջական վիճակի պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից՝ Գ ենթամասի 1-ին հավելվածի 7-րդ պարբերությանը համապատասխան:

ը) Լայն և (կամ) նեղ կոմպլեքս տախիկարդիայով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Առողջական վիճակի պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից՝ Գ ենթամասի 1-ին հավելվածի 7-րդ պարբերությանը համապատասխան:

թ) Փորոքների նախադրմամբ տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Առողջական վիճակի պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից՝ Գ ենթամասի 1-ին հավելվածի 7-րդ պարբերությանը համապատասխան:

ժ) Էնդոկարդիալ կարդիոմիոպաթիայով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ

պիտանի: Առողջական վիճակի պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից՝ Գ ենթամասի 1-ին հավելվածի 7-րդ պարբերությանը համապատասխան:

ժա) Աբլացիայի մեթոդով բուժում անցած դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Առողջական վիճակի պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից՝ Գ ենթամասի 1-ին հավելվածի 7-րդ պարբերությանը համապատասխան:

[Փոփոխություն 4, 2005 թվականի օգոստոսի 1]

ՋԱՌ-ՖՍԼ 3.270 Սրտանոթային համակարգ. ընդհանուր

ա) Վիրահատությունից առաջ կամ դրանից հետո պերիֆերիկ զարկերակների հիվանդություններով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Եթե չկա ոչ մի զգալի ֆունկցիոնալ խանգարում, ապա պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից՝ Գ ենթամասի 1-ին հավելվածի 5-րդ և 6-րդ պարբերություններին համապատասխան:

բ) Վիրահատությունից առաջ կամ հետո կրծքային կամ որովայնային աորտայի անևրիզմով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Ինֆրարենալ որովայնային աորտայի անևրիզմով

տառապող դիմողները կարող են ԱԲԲ–ի կողմից [] [ճանաչվել թոփչբային աշխատանքի համար] պիտանի՝ Գ ենթամասի 1-ին հավելվածի [] [8]-րդ պարբերության համաձայն:

զ) Սրտի փականներից որևէ մեկի զգալի ախտահարմամբ դիմողները պետք է ճանաչվեն թոփչբային աշխատանքի համար ոչ պիտանի:

1) Սրտի փականների թեթև ախտահարմամբ տառապող դիմողները կարող են ճանաչվել թոփչբային աշխատանքի համար պիտանի ԱԲԲ–ի կողմից՝ Գ ենթամասի 1-ին հավելվածի [] [9](ա) և (բ) պարբերություններին համապատասխան:

2) Սրտի փականի փոխարինմամբ/վերականգնմամբ դիմողները պետք է ճանաչվեն թոփչբային աշխատանքի համար ոչ պիտանի: Պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ–ի կողմից՝ Գ ենթամասի 1-ին հավելվածի [] [9](գ) պարբերությանը համապատասխան:

դ) Հակամակարդիչներով սիստեմավորված ձևով բուժում անցնող դիմողը ճանաչվում է թոփչբային աշխատանքների համար ոչ պիտանի: Կոնկրետ տևողությամբ բուժում ստացած դիմողների պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ–ի կողմից՝ Գ ենթամասի 1-ին հավելվածի [] [10–րդ] պարբերությանը համապատասխան:

ե) Պերիկարդի, միոկարդի կամ էնդոկարդի ախտահարմամբ այն դիմողները, ովքեր վերը չեն նշվել, պետք է ճանաչվեն թոփչբային աշխատանքի համար ոչ պիտանի: Պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ–ի կողմից՝ Գ ենթամասի 1-ին հավելվածի [] [11–րդ] պարբերությանը համապատասխան՝ ամբողջական եզրակացության և սրտի բավարար գնահատումից հետո:

զ) Սրտի բնածին արատ ունեցող դիմողները պետք է, ռեկոնստրուկտիվ վիրահատությունից հետո կամ առաջ, ճանաչվեն թոփչբային աշխատանքի համար ոչ պիտանի: Առողջական վիճակի պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ–ի կողմից՝ Գ ենթամասի 1-ին հավելվածի [] [12–րդ] պարբերությանը համապատասխան:

է) Սրտի կամ սրտի/թոքերի փոխպատվաստումից հետո դիմողը ճանաչվում է թոփչբային աշխատանքի համար ոչ պիտանի:

ը) Պերիոդիկ սինկարոտիդային ուշագնացություն ունեցող դիմողները պետք է ճանաչվեն թոփչբային աշխատանքի համար ոչ պիտանի: Կասկածելի անամնեզով դիմողների շրջանում պիտանիության գնահատման հարցը կարող է քննարկվել ԱԲԲ–ի կողմից՝ Գ ենթամասի 1-ին հավելվածի [] [13–րդ] պարբերությանը համապատասխան:

**ՋԱՌ-ՏՄԼ 3.275 Շնչառական համակարգ.
ընդհանուր**

ա) 2-րդ դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա շնչառական համակարգի որևէ խանգարում՝ լինի այն բնածին, թե ձեռքբերովի, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Պահանջվում է կրծքավանդակի դիմացի և հետևի պրոյեկցիաներում օրգանների ռենտգենոսկոպիա (ֆլյուորոգրաֆիա)՝ միայն ըստ բժշկական ցուցումների կամ համաճարակի դեպքերում:

գ) [] [Արտաքին շնչառական ֆունկցիաների հետազոտություններ (տե՛ս Գ ենթամասի 2-րդ հավելվածի 1-ին պարբերությունը) պահանջվում են միայն ըստ կլինիկական ցուցումների:]
Արտաքին շնչառական ֆունկցիաների սուր խանգարումներով դիմողները պետք է ճանաչվեն թռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի (տե՛ս Գ [] [ենթամասի] 2-րդ հավելվածի 1-ին պարբերությունը):
[Փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ-ՖՍԼ 3.280 Շնչառական համակարգ. խանգարումներ

ա) Շնչուղիների քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությամբ տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոնոցային աշխատանքի համար ոչ պիտանի: [Շնչուղիների ֆունկցիաների միայն թեթև խանգարմամբ դիմողները կարող են ճանաչվել թոնոցային աշխատանքի համար պիտանի:]

բ) Դեղորայքային բուժում պահանջող՝ [[ասթմայով] տառապող դիմողները պետք է գնահատվեն Գ ենթամասի 2-րդ հավելվածի 2-րդ պարբերությանը համապատասխան:

գ) Շնչառական համակարգի սուր բորբոքային հիվանդությամբ տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոնոցային աշխատանքի համար ժամանակավորապես ոչ պիտանի:

դ) Սուր սարկոիդոզով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոնոցային աշխատանքի համար ոչ պիտանի (տե՛ս Գ ենթամասի 2-րդ հավելվածի 3-րդ պարբերությունը):

ե) Սպոնտան պնևմոթորաքսով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոնոցային աշխատանքի համար ոչ պիտանի մինչև ամբողջական հետազոտումը՝ Գ ենթամասի 2-րդ հավելվածի 4-րդ պարբերությանը համապատասխան:

զ) Կրծքավանդակի արմատական վիրահատության կարիք ունեցող դիմողները պետք է ճանաչվեն թոնոցային աշխատանքի համար ոչ պիտանի՝ վիրահատությունից հետո առնվազն երեք ամիս ժամկետով և մինչև այն ժամանակահատվածը, երբ հետվիրահատական հետևանքներն այլևս չեն կարող խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը (տե՛ս Գ ենթամասի 2-րդ հավելվածի 5-րդ պարբերությունը):

է) Քնի շնչառական խանգարումներից (ապնոէից) ամբողջությամբ չապաքինված դիմողները պետք է ճանաչվեն թոնոցային աշխատանքի համար ոչ պիտանի:

[Փոփոխություն 1, 2000 թվականի դեկտեմբերի 1, փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ-ՖՍԼ 3.285 Մարսողական համակարգ. ընդհանուր

ա) 2-րդ դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա ստամոքս-աղիքային տրակտի կամ դրա հավելումների ֆունկցիոնալ կամ կառուցվածքային որևէ խանգարում, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

ՋԱՌ-ՖՄԼ 3.290 Մարտողական համակարգ. խանգարումներ

ա) Դեղորայքային բուժում պահանջող՝ [կրկնվող/ռեցիդիվող] դիսպեպտիկ խանգարումներով կամ պանկրեատիտով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի մինչև հետազոտման ավարտը՝ Գ ենթամասի 3-րդ հավելվածի 1-ին պարբերության համաձայն:

բ) Պատահաբար հայտնաբերված ասիմպտոմատիկ լեղապարկի քարեր ունեցող դիմողները պետք է գնահատվեն Բ և Գ ենթամասերի 3-րդ հավելվածի 2-րդ պարբերությանը համապատասխան:

գ) Հաստատված ախտորոշմամբ կամ ստամոքսի քրոնիկ բորբոքային հիվանդությամբ տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի (տե՛ս Գ ենթամասի 3-րդ հավելվածի 3-րդ պարբերությունը):

դ) Դիմողները չպետք է [] ունենան [] [ճողվածք], որը կարող է հանգեցնել անաշխատունակության համախտանիշների:

ե) Այն դիմողները, ովքեր տառապում են մարտողական տրակտի որևէ հատվածի կամ դրա հավելումների որևէ հիվանդությամբ [] [մնացորդային երևույթ] կամ ովքեր ենթարկվել են վիրահատական միջամտության, մասնավորապես, ցանկացած օբստրուկցիա՝ կծկման կամ

ճնշման հետևանքով, որոնք թոխչքային աշխատանքում կարող են հանգեցնել անաշխատունակության, պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի:

զ) Մարտողական տրակտի կամ դրա հավելումների վիրահատության, այդ թվում՝ այդ օրգաններից որևէ մեկի ամբողջական կամ մասնակի հեռացման կամ առանձնացման վիրահատության ենթարկված դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի առնվազն երեք ամիս ժամկետով կամ մինչև այն ժամանակահատվածը, երբ հետվիրահատական հետևանքներն այլևս չեն կարող խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը (տե՛ս Գ ենթամասի 3-րդ հավելվածի 4-րդ պարբերությունը):

[Փոփոխություն 4, 2005 թվականի օգոստոսի 1, փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ-ՖՄԼ 3.295 Նյութափոխանակության, մարտողական և էնդոկրին [] [համակարգեր]

ա) 2-րդ դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա նյութափոխանակության, մարտողական կամ էնդոկրին համակարգի

ֆունկցիոնալ կամ կառուցվածքային որևէ
խանգարում, որը կարող է խոչընդոտել
տվյալ վկայականով (վկայականներով)
նախատեսված մասնագիտական
պարտականությունների անվտանգ
կատարումը:

բ) Նյութափոխանակության,
մարսողական կամ էնդոկրին
դիսֆունկցիաներով դիմողները կարող են
ճանաչվել թոփչքային աշխատանքի համար
պիտանի՝ Գ ենթամասի 4-րդ հավելվածի 1-
ին [և 4-րդ] պարբերության համաձայն:

գ) Շաքարախտով տառապող դիմողները
կարող են ճանաչվել թոփչքային
աշխատանքի համար պիտանի միայն Գ
ենթամասի 4-րդ հավելվածի 2-րդ և 3-րդ
պարբերությունների համաձայն:

դ) Ինսուլին պահանջող շաքարախտով
տառապող դիմողները պետք է ճանաչվեն
թոփչքային աշխատանքի համար ոչ
պիտանի:

ե) > 35 մարմնի զանգվածի չափանիշով
(քաշի ինդեքս) դիմողները կարող են
ճանաչվել թոփչքային աշխատանքի համար
պիտանի, միայն եթե ավելորդ քաշը չի
կարող խոչընդոտել տվյալ վկայականով
(վկայականներով) նախատեսված
մասնագիտական պարտականությունների
անվտանգ կատարումը և եթե կատարվել է
սրտանոթային ռիսկի բավարար
գնահատում (տե՛ս Գ ենթամասի 9-րդ
հավելվածի 1-ին պարբերությունը):

ՋԱՌ-ՖՍԼ 3.300 Հեմատոլոգիա

ա) 2-րդ դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա հեմատոլոգիական ախտահարումներ, որոնք կարող են խոչընդոտել սովյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Ըստ կլինիկական ցուցումների և առաջին անգամ բժշկական սերտիֆիկատ ստանալիս հեմոգլոբինը պետք է ստուգվի: [][Պաթոլոգիական հեմոգլոբին ունեցող դիմողները պետք է հետազոտվեն: 32%-ից ցածր հեմատոկրիտ ունեցող դիմողները] պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի (տե՛ս Գ ենթամասի 5-րդ հավելվածի 1-ին պարբերությունը):

գ) Էրիտրոցիտների մանգաղաձև փոփոխման հիվանդությամբ տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի (տե՛ս Գ ենթամասի 5-րդ հավելվածի 1-ին պարբերությունը):

դ) Լիմֆատիկ գեղձերի տեղայնացված և ընդհանուր զգալի մեծացմամբ ու արյան հիվանդություններով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի (տե՛ս Գ ենթամասի 2-րդ հավելվածի 5-րդ պարբերությունը):

ե) Սուր լեյկեմիայով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Հաստատված ռեմիսիայից հետո [][դիմողները] կարող են ԱԲԲ-ի կողմից [][ճանաչվել թոխչքային աշխատանքի համար պիտանի]: Քրոնիկ լեյկեմիայով տառապող [][դիմողները] պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի: [][Ակնհայտ կայուն վիճակից հետո ԱԲԲ-ն կարող է քննարկել պիտանիության գնահատման հարցը: [][(S)ե՛ս Գ ենթամասի 5-րդ հավելվածի 3-րդ պարբերությունը]:

զ) Փայծաղի զգալի մեծացմամբ դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի (տե՛ս Գ ենթամասի 5-րդ հավելվածի 4-րդ պարբերությունը):

է) Սուր պոլիցիտեմիայով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի՝ տե՛ս Գ ենթամասի 5-րդ հավելվածի 5-րդ պարբերությունը:

զ) Կոագուլյացիայի խանգարմամբ դիմողները պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի (տե՛ս Գ ենթամասի 5-րդ հավելվածի 6-րդ պարբերությունը):

[Փոփոխություն 1, 2000 թվականի դեկտեմբերի 1, փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ-ՖՍԼ 3.305 Միզային համակարգ

ա) 2-րդ դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա միզային համակարգի օրգանների կամ դրանց հավելումների որևէ ֆունկցիոնալ կամ կառուցվածքային խանգարում, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Երիկամների օրգանական ախտահարման որևէ ախտանիշ ունեցող դիմողները պետք է ճանաչվեն թոփչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Մեզի անալիզը պետք է կազմի յուրաքանչյուր բժշկական հետազոտման անբաժանելի մասը: Մեզի մեջ չպետք է լինի որևէ ախտածին տարր: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել միզուղիների և սեռական օրգանների վրա ազդող հիվանդություններին: (տե՛ս Գ ենթամասի 6-րդ հավելվածի 1-ին պարբերությունը):

գ) Միզաքարային հիվանդությամբ տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոփչքային աշխատանքի համար ոչ պիտանի (տե՛ս Գ ենթամասի 6-րդ հավելվածի 2-րդ պարբերությունը):

դ) Այն դիմողները, ում մոտ առկա են երիկամների և միզային տրակտի հիվանդության մնացորդային երևույթներ կամ ովքեր անցել են վիրահատական

պրոցեդուրա, մասնավորապես, միզուկի նեղացման կամ ճնշման պատճառով ցանկացած օբստրուկցիա, որոնք կարող են հանգեցնել անաշխատունակության, պետք է ճանաչվեն թոփչքային աշխատանքի համար ոչ պիտանի: Առանց հիպերտենզիայի կամ միզարյունության (ուրեմիայի) փոխհատուցվող երիկամի հեռացմամբ (նեֆրեկտոմիայով) դիմողները կարող են ԱԲԲ-ի կողմից ճանաչվել թոփչքային աշխատանքի համար պիտանի՝ Գ ենթամասի 6-րդ հավելվածի 3-րդ պարբերության համաձայն:

ե) Միզային տրակտի կամ միզային օրգանների արմատական վիրահատության, այդ թվում՝ այդ օրգաններից որևէ մեկի ամբողջական կամ մասնակի հեռացման կամ առանձնացման վիրահատության ենթարկված դիմողները պետք է ճանաչվեն թոփչքային աշխատանքի համար ոչ պիտանի առնվազն երեք ամիս ժամկետով և մինչև այն ժամանակահատվածը, երբ հետվիրահատական հետևանքներն այլևս չեն կարող խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը (տե՛ս Գ ենթամասի 6-րդ հավելվածի 4-րդ պարբերությունը):

[փոփոխություն 5, 2000 թվականի դեկտեմբերի 1]

**ՋԱՌ-ՖՍԼ 3.310 Սեռական ճանապարհով
փոխանցվող և վարակիչ այլ
հիվանդություններ**

ա) 2-րդ դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդության կամ այլ վարակիչ հիվանդության հաստատված անամնեզ կամ կլինիկական հետազոտության արդյունքում հայտնաբերված կլինիկական ախտորոշում, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Առանձնակի ուշադրություն պետք է դարձնել, Գ ենթամասի 7-րդ հավելվածի համաձայն, հիվանդության պատմությանը կամ կլինիկական նշաններին, որոնք ցույց են տալիս`

- 1) ՄԻԱՎ-ի դրական կարգավիճակը,
- 2) իմունային համակարգի թուլացումը,
- 3) վարակիչ հեպատիտը,
- 4) սիֆիլիսը:

**ՋԱՌ- ՖՍԼ 3.315 Գինեկոլոգիա և
մանկաբարձություն**

ա) 2-ին դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է

ունենա որևէ մանկաբարձա-գինեկոլոգիական ֆունկցիոնալ կամ կառուցվածքային խանգարում, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Դաշտանային ցիկլի անբուժելի սուր խանգարումներ ունեցող դիմողը պետք է ճանաչվի թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի:

գ) Հղիության շրջանում դիմողը համարվում է աշխատանքի համար ոչ պիտանի: Եթե մանկաբարձական հետազոտության արդյունքում հաստատվում է ամբողջությամբ կանոնավոր ընթացող հղիություն, դիմողը կարող է ճանաչվել թոխչքային աշխատանքի համար պիտանի մինչև հղիության 26-րդ շաբաթվա վերջը՝ Գ ենթամասի 8-րդ հավելվածի 1-ին պարբերության համաձայն [ԱԲԲ-ի, ԱԲԿ-ի կամ ԲԶԻԼԱ-ի կողմից]: Վկայականներով մասնագիտական պարտականությունների կատարումը կարող է վերականգնվել լիարժեք ապաքինումը հիմնավորապես հաստատվելուց հետո՝ հղիությունը պահպանելուց կամ այն ընդհատելուց հետո:

դ) Ռադիկալ գինեկոլոգիական վիրահատության ենթարկված դիմողը պետք է ճանաչվի թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի [] երեք ամիս ժամանակահատվածով [] կամ [] մինչև այն ժամանակահատվածը, երբ հետվիրահատական հետևանքներն այլևս չեն կարող խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական

պարտականությունների անվտանգ կատարումը (տե՛ս Գ ենթամասի 8-րդ հավելվածի 2-րդ պարբերությունը):

[Փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ-ՖՍԼ 3.320 Հենաշարժական ապարատին ներկայացվող պահանջներ

ա) 2-րդ դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա ոսկորների, հոդերի, մկանների և ջլերի բնածին կամ ձեռքբերովի արատ, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Դիմողը պետք է ունենա բավականաչափ հասակ՝ նստած վիճակում, ձեռքերի երկարություն ու ոտքերի երկարություն և մկանային ուժ՝ տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականություններն անվտանգ կատարելու նպատակով (տե՛ս Գ ենթամասի 9-րդ հավելվածի 1-ին պարբերությունը):

գ) Դիմողը պետք է ունենա բավականաչափ զարգացած հենաշարժական ապարատ: Ախտահարման, վնասվածքի կամ ոսկրերի, հոդերի, մկանների կամ ջլերի զգալի բարդություններով վիրահատության ենթարկված կամ

չենթարկված դիմողների պիտանիությունը պետք է գնահատվի Գ ենթամասի 9-րդ հավելվածի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն:

ՋԱՌ-ՖՍԼ 3.325 Հոգեկան վիճակին ներկայացվող պահանջներ

ա) 2-րդ դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա սուր կամ քրոնիկ, բնածին կամ ձեռքբերովի որևէ հոգեկան հիվանդության կամ ֆունկցիոնալ խանգարումների, համախտանիշների կամ խախտումների վերաբերյալ հավաքված անամնեզ կամ կլինիկական հետազոտության արդյունքում կայացված ախտորոշում, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ստորև նշվածին (տե՛ս Գ ենթամասի 10-րդ հավելվածը)՝

- 1) շիզոֆրենիա, շիզոիդային բնույթի խանգարումներ և զառանցանքներով ուղեկցվող խանգարումներ,
- 2) տրամադրության խանգարումներ,
- 3) ներոտիկ և սթրեսների հետ կապված ու սոմատոֆորմ խանգարումներ,
- 4) անձի և վարքի խանգարումներ,
- 5) օրգանական հոգեկան խանգարումներ,

6) ակոնհոլիզմի հետևանքով հոգեկան խանգարումներ և վարքի խանգարումներ,

7) հոգեմետ նյութերի օգտագործում կամ չարաշահում:

[Փոփոխություն 5, 2003 թվականի հունիսի 1]

ՋԱՌ-ՖՍԼ 3.330 Նյարդաբանական համակարգին ներկայացվող պահանջներ

ա) 2-րդ դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա նյարդաբանական վիճակի մասին հաստատված անամնեզ կամ կլինիկական հետազոտության արդյունքում կայացված ախտորոշում, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ստորև նշվածին (տե՛ս Գ ենթամասի 11-րդ հավելվածը)՝

- 1) նյարդային համակարգի պրոգրեսիվ զարգացող հիվանդություն,
- 2) էպիլեպսիա և գիտակցության խանգարման այլ պատճառներ,
- 3) ցերեքրալ դիսֆունկցիա՝ ֆունկցիոնալ խանգարման նախատրամադրվածությամբ վիճակներ,
- 4) գլխի վնասվածք,
- 5) ողնուղեղային կամ պերիֆերիկ նյարդի վնասվածք:

[Փոփոխություն 5, 2002 թվականի հունիսի 1]

**ՋԱՌ-ՏՄԼ 3.335 Ակնաբուժական
պահանջներ**

(տե՛ս Գ ենթամասի 12-րդ հավելվածը)

ա) 2-րդ դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա աչքերի կամ դրանց հավելումների ֆունկցիոնալ որևէ խանգարում կամ որևէ ակտիվ ախտաբանական վիճակ՝ բնածին կամ ձեռքբերովի, սուր կամ քրոնիկ, կամ էլ աչքի հետվիրահատական բարդություն կամ տրավմա, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Պահանջվում է [ԱԲԲ–ի պահանջները բավարարող ակնաբույժի կամ աչքի խնամքի մասնագետի կողմից (բոլոր խանգարումները և կասկածելի դեպքերը պետք է ներկայացվեն ԱԲԲ–ի

պահանջները բավարարող ակնաբույժին)՝
ակնաբուժական հետազոտություն՝
նախնական զննության ժամանակ [] և այն
պետք է ներառի.

1) հիվանդության պատմությունը,

2) տեսողության սրությունը, հեռու,
մոտ և միջին տարածության վրա
տեսողություն՝ չշտկված,
անհրաժեշտության դեպքում, լավագույն
օպտիկական շտկմամբ,

3) աչքի շարժունակությունն ու
բինոկուլյար տեսողությունը,

4) գունային տեսողությունը,

5) տեսողական դաշտը,

6) արտաքին աչքի, դրա կառուցվածքի,
միջավայրի և աչքի հատակի
հետազոտությունը:

գ) Աչքի պարբերական հետազոտություն
[կարող է կատարվել ԲԶԻԼԱ-ի կողմից:
Այն] պետք է կազմի բժշկական
սերտիֆիկատի նորացման կամ դրա
գործողության ժամկետի երկարաձգման
նպատակով բոլոր բժշկական զննումների
մի մասը (տե՛ս Գ ենթամասի 12-րդ
հավելվածի 2-րդ պարբերությունը) և պետք
է ներառի.

1) հիվանդության պատմությունը,

2) տեսողության սրությունը, հեռու,
մոտ և միջին տարածության վրա
տեսողություն՝ չշտկված, անհրաժեշտու-
թյան դեպքում, լավագույն օպտիկական
շտկմամբ,

3) արտաքին աչքի, դրա կառուցվածքի,
միջավայրի և աչքի հատակի
հետազոտությունը,

4) լրացուցիչ հետազոտություն՝ ըստ
կլինիկական ցուցումների (տե՛ս Գ
ենթամասի 12-րդ հավելվածի 4-րդ
պարբերությունը):

[Փոփոխություն 3, 2003 թվականի հունիսի 1,
փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ԶԱՌ-ՖՍԼ 3.340 Տեսողությանը ներկայացվող պահանջներ

ա) *Հեռատեսության սրություն.*
տեսողության շտկմամբ կամ առանց
շտկելու՝ յուրաքանչյուր աչքի
հեռատեսության սրությունը պետք է լինի
6/9 (0,7) և երկու աչքի տեսողության
սրությունը պետք է լինի 6/6 (1,0) կամ
ավելին (տե՛ս ստորև ԶԱՌ-ՖՍԼ 3.340(է)):
Ոչ մի սահմանափակում չի կիրառվում
չշտկված տեսողության սրության
նկատմամբ:

բ) *Ռեֆրակցիայի անոմալիաներ.*
ռեֆրակցիայի անոմալիան սահմանվում է
որպես ամենասամետրոպիկ
միջօրեականում դիօպտրիաներով
չափվող նորմալ տեսողությունից շեղում:
Ռեֆրակցիան պետք է չափվի ստանդարտ
մեթոդներով (տե՛ս Գ ենթամասի 13-րդ
հավելվածի 1-ին պարբերությունը):
Դիմողները պետք է [] [ճանաչվեն
թոյնաչափի աշխատանքի համար] պիտանի
ռեֆրակցիայի անոմալիայի մասով, եթե

նրանք բավարարում են հետևյալ պահանջները՝

1) *Ռեֆրակցիայի անոմալիաներ*

i) Առաջին անգամ բժշկական սերտիֆիկատ ստանալիս ռեֆրակցիայի անոմալիան չպետք է գերազանցի [](+5-ից -8) դիօպտրիայի միջակայքը (տե՛ս Գ ենթամասի 13-րդ հավելվածի 2 (գ) պարբերությունը):

ii) Բժշկական սերտիֆիկատի նորացման կամ դրա գործողության ժամկետի երկարաձգման նպատակով բոլոր բժշկական զննումների ժամանակ այն դիմողը, ով արդեն բավարարել է ավիացիոն մարմնի կողմից սահմանված [](+5) դիօպտրիան չգերազանցող [ա] ռեֆրակտիվ [](անոմալիայով [կամ -6 դիօպտրիան գերազանցող ռեֆրակտիվ անոմալիայի բարձր կարճատեսությամբ]պահանջը, ԱԲԲ-ի կողմից կարող է [](ճանաչվել) թռիչքային աշխատանքի համար պիտանի (տե՛ս Գ ենթամասի 13-րդ հավելվածի 2 (բ) պարբերությունը):

[iii] Բարձր ռեֆրակտիվ անոմալիայով տառապող դիմողները պետք է կրեն կոնտակտային լինզաներ կամ բեկման բարձր գործակցով ակնոցներ:]

2) Աստիգմատիզմ

i) Աստիգմատիզմի բաղադրիչով ռեֆրակցիայի անոմալիայով տառապող՝ առաջին անգամ բժշկական զննում անցնող դիմողի մոտ աստիգմատիզմը չպետք է գերազանցի [](3.0) դիօպտրիան:

ii) Բժշկական սերտիֆիկատի [](նորացման) կամ դրա գործողության ժամկետի երկարաձգման նպատակով բժշկական զննումների ժամանակ այն դիմողը, ով արդեն բավարարել է ավիացիոն մարմնի կողմից սահմանված [](3.0) դիօպտրիան չգերազանցող [ա] ռեֆրակտիվ [](անոմալիայի տարբերությամբ պահանջը, կարող է ԱԲԲ-ի կողմից [](ճանաչվել) թռիչքային աշխատանքի համար պիտանի:

3) Կոնսձև եղջերաթաղանթը հիմք է՝ թռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի ճանաչելու համար: ԱԲԲ-ն կարող է քննարկել [](բժշկական սերտիֆիկատի նորացման կամ դրա գործողության ժամկետի երկարաձգման նպատակով բժշկական զննումների հարցը), եթե դիմողը բավարարում է առողջական վիճակի պիտանիության [] պահանջները [տեսողության սրության նկատմամբ ներկայացվող պահանջները] (տե՛ս Բ ենթամասի 13-րդ հավելվածի 3-րդ պարբերությունը):

4) Անիզոմետրոպիա

i) Նախնական բժշկական հետազոտության ժամանակ ռեֆրակցիայի անոմալիաների տարբերությունը երկու աչքի միջև (անիզոմետրոպիա) չպետք է գերազանցի [](2.0) դիօպտրիան:

ii) Բժշկական սերտիֆիկատի [](նորացման) կամ գործողության ժամկետի երկարաձգման նպատակով բժշկական

զննումների ժամանակ այն դիմողը, ով արդեն բավարարել է ավիացիոն մարմնի կողմից սահմանված երկու աչքի միջև [] [3.0] դիօպտրիան [գերազանցող] [(անիզոմետրոպիա)] [] ռեֆրակտիվ անոմալիայի տարբերությամբ պահանջները, կարող է ԱԲԲ-ի կողմից [] [ճանաչվել] թռիչքային աշխատանքի համար պիտանի:

3) Կոնաձև եղջերաթաղանթը հիմք է՝ թռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի ճանաչելու համար: ԱԲԲ-ն կարող է քննարկել [] [պիտանիության գնահատման հարցը], եթե դիմողը բավարարում է [տեսողության սրության նկատմամբ ներկայացվող] [] պահանջները (տե՛ս Գ ենթամասի 13-րդ հավելվածի 3-րդ պարբերությունը):

4) Ամբլիոպիայով տառապող դիմողի մոտ ամբլիոպիայով տեսողության սրությունը պետք է լինի 6/18 [] [(0,3)] կամ ավելի լավ վիճակում: Դիմողը կարող է [ճանաչվել] թռիչքային աշխատանքի համար պիտանի, եթե մյուս աչքի տեսողության սրությունը 6/6 [(1,0)] կամ դրանից ավելի բարձր է՝ շտկմամբ կամ առանց դրա], և ոչ մի [լուրջ] պաթոլոգիա [] չկա:

5) Անիզոմետրոպիա

i) Նախնական բժշկական հետազոտության ժամանակ ռեֆրակցիայի անոմալիաների տարբերությունը երկու

աչքի միջև (անիզոմետրոպիա) չպետք է գերազանցի [] [3.0] դիօպտրիան:

ii) Բժշկական սերտիֆիկատի [] [նորացման] կամ դրա գործողության ժամկետի երկարաձգման նպատակով բժշկական զննումների ժամանակ այն դիմողը, ով արդեն բավարարել է ավիացիոն մարմնի կողմից սահմանված երկու աչքի միջև [] [3.0] դիօպտրիան [գերազանցող] (անիզոմետրոպիա) ռեֆրակտիվ անոմալիայի տարբերությամբ պահանջները, կարող է ԱԲԲ-ի կողմից [] [ճանաչվել] թռիչքային աշխատանքի համար պիտանի:

Եթե անիզոմետրոպիան գերազանցում է [] [3,0] դիօպտրիան, ապա պետք է կրել կոնտակտային լինզաներ:

6) Ծերունական հեռատեսության զարգացմանը պետք է հետևել բժշկական սերտիֆիկատի գործողության ժամկետը երկարաձգելու նպատակով՝ ավիաբժշկական զննումների ամբողջ ընթացքում:

7) Դիմողը պետք է կարողանա ընթերցել տեսողության ստուգման թիվ 5 աղյուսակը (կամ դրան համարժեքը) 30-50 [] [սանտիմետր] հեռավորության վրա և թիվ 14 աղյուսակը (կամ դրան համարժեքը) 100 [] [սանտիմետր] հեռավորության վրա շտկմամբ, եթե այն նշանակված է (տե՛ս ստորև ՋԱՌ-ՖՍՄ 3.340(է)):

զ) Բինոկուլյար տեսողության էական արատներով դիմողը պետք է ճանաչվի թռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի: [] (տե՛ս Գ ենթամասի 13-րդ հավելվածի 4-րդ պարբերությունը):

դ) Դիպլոպիայով տառապող դիմողը պետք է ճանաչվի թռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի:

ե) Տեսողական դաշտի [խանգարումներով] դիմողը պետք է ճանաչվի թռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի (տե՛ս Գ ենթամասի 13-րդ հավելվածի 4-րդ պարբերությունը):

զ) 1) Եթե տեսողության նկատմամբ ներկայացվող պահանջը բավարարվում է միայն շտկման կիրառմամբ, ապա ակնոցը կամ կոնտակտային լինզաները պետք է ապահովեն օպտիմալ տեսողական ֆունկցիա և ավիացիոն նպատակների համար [անհարմարություն չառաջացնեն և] հարմար լինեն: [Կոնտակտային լինզաներ կրելու դեպքում դրանք պետք է լինեն մոնոֆոկալ և հեռատեսության համար: Օրթոկերաթոլոգիական լինզաներ չպետք է օգտագործվեն:]

2) Ավիացիոն նպատակներով կրելու դեպքում շտկիչ լինզաները պետք է թույլ տան վկայական ունեցողին բոլոր հեռավորությունների վրա բավարարել տեսողության նկատմամբ ներկայացվող պահանջները: Տվյալ պահանջը բավարարելու համար պետք է օգտագործվի ոչ ավելի, քան մեկ ակնոց:

[3) Ավիացիոն նպատակներով կրելու դեպքում, կոնտակտային լինզաները պետք է լինեն մոնոֆոկալ և չմգեցված:]

[] [4) Տեսողության շտկման ևս մեկ ակնոց պետք է ունենալ՝ վկայականով իրեն ընձեռված իրավունքներն իրականացնելու համար:

է) Աչքի վիրահատություն՝

1) Վիրաբուժական միջամտությամբ տեսողության շտկումից հետո դիմողը ճանաչվում է թռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի: [] [Պիտանիության գնահատման հարցը] կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից (տե՛ս Գ ենթամասի 13-րդ հավելվածի 6-րդ պարբերությունը):

2) Կատարակտայի (ոսպնյակի պղտորում), ցանցաթաղանթի և գլաուկոմայի վիրահատությունից հետո դիմողը ճանաչվում է թռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի: [] [Պիտանիության գնահատման հարցը] կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից [բժշկական սերտիֆիկատի նորացման կամ գործողության ժամկետի երկարաձգման նպատակով բոլոր

բժշկական զննումների ժամանակ] (տե՛ս Գ ենթամասի 13-րդ հավելվածի 7-րդ պարբերությունը):

[Փոփոխություն 3, 2003 թվականի հունիսի 1, փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ-ՖՍԼ 3.345 Գունազգացողություն

(տե՛ս Գ ենթամասի 14-րդ հավելվածը)

ա) Նորմալ գունազգացողությունը սահմանվում է որպես Իշիհարա թեստն անցնելուց կամ Նագելի՝ գունային տեսողության հետազոտման սարքով հետազոտվելուց հետո նորմալ եռաքրոմատ տեսողության բժշկական եզրակացության կայացում (տե՛ս Գ ենթամասի 14-րդ հավելվածի 1-ին պարբերությունը):

բ) Դիմողը պետք է ունենա նորմալ գունազգացողություն կամ գունաճանաչություն: [Նախնական զննության ժամանակ դիմողները պետք է անցնեն Իշիհարա թեստը:] Այն դիմողները, ովքեր ձախողում են Իշիհարա թեստը, պետք է ճանաչվեն որպես նորմալ գունազգացողություն ունեցող, եթե նրանք անցնում են ԱԲԲ-ի կողմից ընդունելի մեթոդներով բազմակողմանի հետազոտություն (անոմալոսկոպիա կամ տեսողության ստուգման համար լապտերիկ (տե՛ս Գ ենթամասի 14-րդ հավելվածի 2-րդ պարբերությունը): [Բժշկական սերտիֆիկատի նորացման կամ դրա գործողության ժամկետի

երկարաձգման նպատակով բժշկական զննումների ժամանակ գունային տեսողությունը պետք է ստուգվի միայն ըստ կլինիկական ցուցումների:]

գ) Այն դիմողի մոտ, ով ձախողում է ընդունված գունազգացողության թեստերը, պետք է ախտորոշվի գունային տեսողության խախտում, և նա պետք է ճանաչվի թռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի:

դ) Գունաճանաչության հետ կապված խնդիրներ ունեցող դիմողը կարող է ճանաչվել [] թռիչքային աշխատանքի համար պիտանի միայն ցերեկային ժամերին թռիչքներ իրականացնելու համար:

[Փոփոխություն 3, 2003 թվականի հունիսի 1, փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ-ՖՍԼ 3.350 Օտորինոլարինգոլոգիական պահանջներ

ա) 2-րդ դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա ականջների, քթի խոռոչի կամ կոկորդի (այդ թվում՝ բերանի խոռոչի, ատամների և ըմպանի) ֆունկցիոնալ խանգարում կամ որևէ ակտիվ ախտաբանական վիճակ՝ ձեռքբերովի կամ բնածին, սուր կամ խրոնիկ, կամ հետվիրահատական որևէ բարդություն կամ տրավմա, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով)

նախատեսված մասնագիտական
պարտականությունների անվտանգ
կատարումը:

[]

[][բ)] Քիթ-կոկորդ-ականջի հերթական
հետազոտությունը պետք է կազմի
բժշկական սերտիֆիկատ [առաջին անգամ
ստանալու] կամ դրա գործողության
ժամկետը երկարաձգելու նպատակով
բոլոր բժշկական զննումների մի մասը
(տե՛ս Գ ենթամասի 15-րդ հավելվածի 2-րդ
պարբերությունը):

[][գ)] Դիմողի մոտ հետևյալ
խանգարումների առկայության դեպքում
վերջինս պետք է ճանաչվի թոփչբային
աշխատանքի համար ոչ պիտանի.

1) ներքին կամ միջին ականջի սուր
կամ քրոնիկ ակտիվ ախտաբանական
գործընթաց,

2) թմբկաթաղանթի չբուժված
պերֆորացիա կամ դիսֆունկցիա (տե՛ս Գ
ենթամասի 15-րդ հավելվածի 3-րդ
պարբերությունը),

3) վեստիբուլյար ապարատի
ֆունկցիոնալ խանգարումներ (տե՛ս Գ
ենթամասի 15-րդ հավելվածի 4-րդ
պարբերությունը),

4) դեպի երկու քթանցք օդի մուտքի
զգալի սահմանափակում կամ քթի խոռոչի
որևէ դիսֆունկցիա,

(5) բերանի խոռոչի կամ վերին
շնչուղիների խոշոր արատ կամ խոշոր,
սուր կամ քրոնիկ ինֆեկցիա:

6) Խոսքի և ձայնի զգալի խանգարում:

[Փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ-ՖՍԼ 3.335 Լսողությանը ներկայացվող պահանջներ

ա) Լսողությունը պետք է հետազոտել բժշկական բոլոր գննումների ժամանակ: Դիմողը պետք է ճիշտ ընկալի բանավոր խոսքը միմյանց հետ զրույցի տեսքով թեստի ժամանակ՝ երկու մետր հեռավորության վրա և մեջքով կանգնած ԲԶԻԼԱ-ին:

բ) Եթե վկայականով (վկայականներով) նախատեսվում է նաև սարքերով թռիչքների իրականացում, ապա պահանջվում է մաքուր տոնային լսաչափությամբ լսողության հետազոտություն (տե՛ս Գ ենթամասի 16-րդ հավելվածի 1-ին պարբերությունը)՝ առաջին հետազոտության ժամանակ չափման համար և պետք է կրկնվի յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ՝ մինչև 40 տարին լրանալը և դրանից հետո՝ յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ:

[]

[][1)][] Յուրաքանչյուր ականջն առանձին հետազոտելիս [][չպետք է] լինի երկու ականջի լսողության կորուստ ավելի քան [][35դցբ(HL) 500, 1 000, և 2 000 հերց հաճախականությունների դեպքում կամ

ավելի քան 50 դցբ(HL)՝ 3 000 հերց հաճախականության դեպքում:] [:]

[][2)] Բժշկական սերտիֆիկատի նորացման կամ դրա գործողության ժամկետի երկարաձգման նպատակով բժշկական գննումների ժամանակ մասնակի խլությամբ տառապող դիմողները ԱԲԲ-ի կողմից կարող են ճանաչվել թռիչքային աշխատանքի համար պիտանի, եթե բանավոր խոսքի տարբերակման թեստի արդյունքում պարզվում է, որ դիմողն ունի բավարար լսողություն (տե՛ս Գ ենթամասի 16-րդ հավելվածի 2-րդ պարբերությունը):

[Փոփոխություն 1, 2003 թվականի հունիսի 1, փոփոխություն 4, 2005 թվականի օգոստոսի 1, փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

ՋԱՌ-ՖՍԼ 3.360 Հոգեբանական վիճակին ներկայացվող պահանջներ

ա) 2-րդ դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա կայուն հոգեբանական արատներ, մասնավորապես՝ մասնագիտական կարողությունների կամ համապատասխան անհատական գործոնի հետ կապված, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

Հոգեբանական գնահատումը (տե՛ս Գ ենթամասի 17-րդ հավելվածի 1-ին

պարբերությունը) կարող է պահանջվել ԱԲԲ-ի կողմից, եթե այն նշված է որպես մասնագետ հոգեբույժի կողմից կամ նյարդաբանական հետազոտման մի մաս կամ լրացում (տե՛ս Գ ենթամասի 17-րդ հավելվածի 2-րդ պարբերությունը):

բ) Եթե նշանակվում է հոգեբանական գնահատում, ապա պետք է դիմել ավիացիոն մարմնի կողմից ներկայացվող պահանջները բավարարող հոգեբանի ծառայություններին:

գ) Հոգեբանը պետք է ԱԲԲ ներկայացնի գրավոր հաշվետվություն՝ մանրամասն ներկայացնելով իր եզրակացությունը և առաջարկությունը:

ՁԱՌ-ՏՍԼ 3.365 Մաշկաբանական պահանջներ

ա) 2-րդ դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա ախտորոշված դերմատոլոգիական խնդիր, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Առաջարկվում է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ստորև նշված խանգարումներին (տե՛ս Գ ենթամասի 18-րդ հավելվածը)՝

- 1) Էկզեմա (էկզոզեմ և էնդոզեմ),
- 2) ծանր փսորիազ,

- 3) բակտերիալ ինֆեկցիաներ,
- 4) դեղորայքային ցանավորում,
- 5) բուլյոզային ցան,
- 6) մաշկի չարորակ նորագոյացություններ,
- 7) եղջերատենդ:

Դիմողը պետք է ուղեգրվի ԱԲԲ-ի մոտ՝ առողջական վիճակի հետ կապված որևէ խնդրի առաջացման դեպքում:

ՁԱՌ-ՏՍԼ 3.370 Ուռուցքաբանություն

ա) 2-րդ դասի բժշկական սերտիֆիկատ ստանալու համար դիմողը կամ այն ունեցող ավիացիոն մասնագետը չպետք է ունենա առաջին կամ երկրորդ շրջանի հաստատված չարորակ հիվանդություն, որը կարող է խոչընդոտել տվյալ վկայականով (վկայականներով) նախատեսված մասնագիտական պարտականությունների անվտանգ կատարումը:

բ) Չարորակ հիվանդությունից բուժվելուց հետո դիմողները կարող են ճանաչվել թոփչքային աշխատանքի համար պիտանի՝ Գ ենթամասի 19-րդ հավելվածի համաձայն:

ՄԻՏՈՒՄՆԱՎՈՐ ԴԱՏԱՐԿ ԹՈՂՆՎԱԾ ՏԱՐԱԾՔ

Բ և Գ ենթամասերի 1-ին հավելված

Սրտանոթային համակարգ

(Տե՛ս ԶԱՌ–ՖՍԼ 3.130–ից մինչև 3.150–ը և 3.250–ից մինչև 3.270–ը)

1. Պետք է կատարել էլեկտրասրտագրություն՝ ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ.
 - ա) երբ նշանները կամ ախտանիշները վկայում են սրտանոթային հիվանդության մասին,
 - բ) հանգստի վիճակում կատարված էլեկտրասրտագրությունը պարզաբանելու համար,
 - գ) ԱԲԲ–ի պահանջները բավարարող ավիաբժշկության մասնագետի հայեցողությամբ,
 - դ) 65 տարեկան հասակում և, 1–ին դասի բժշկական սերտիֆիկատի [] [նորացման կամ դրա գործողության ժամկետի երկարաձգման] դեպքում՝ յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ:
2. ա) Արյան շիճուկի մեջ լիպիդների մակարդակի որոշումը էպիդեմիոլոգիական հետազոտություն է, և լիպիդային փոխանակության արտահայտված խանգարումները պետք է ուսումնասիրվեն, հետազոտվեն և հսկվեն ԱԲԲ–ի կողմից [ԱԲԿ–ի կամ ԲԶԻԼԱ–ի հետ համատեղ]:
 - բ) Ռիսկի գործոնների առկայության դեպքում (ծխելը, գենետիկ նախատրամադրվածությունը, լիպիդային փոխանակության խանգարումները և այլն) ԱԲԲ–ն [ԱԲԿ–ի կամ ԲԶԻԼԱ–ի հետ համատեղ] պետք է կատարի սրտանոթային համակարգի հետազոտություն:
3. Զարկերակային հիպերտենզիայի ախտորոշման դեպքում պետք է կատարել անոթների հետ կապված պոտենցիալ ռիսկի մյուս գործոնների հետազոտություն: Միստոլիկ զարկերակային ճնշումը պետք է ֆիքսվի՝ սրտի ձայներն ի հայտ գալուն (1–ին փուլ) պես, մինչդեռ դիաստոլիկ ճնշումը՝ դրանց անհետանալուն պես (5–րդ փուլ): Առաջարկվում է զարկերակային ճնշումը չափել երկու անգամ: Եթե զարկերակային ճնշումը և (կամ) սրտի ռիթմը հանգստի վիճակում բարձրանում է, ապա առողջական վիճակի գնահատման ժամանակ պետք է կատարվի առավել խորը հետազոտություն:

4. Հակահիպերտենզիվ բուժում անցկացնելու համար պետք է ստանալ ԱԲԲ-ի համաձայնությունը: ԱԲԲ-ի կողմից թույլատրելի դեղորայքները կարող են ներառել.

- ա) ոչ գալարային միզամուղային միջոցները,
- բ) որոշ (ընդհանուր առմամբ հիդրոֆիլ) բետա-բլոկատորները,
- գ) անգիոտենզինկոնվերտային ֆերմենտների ինգիբիտորները,
- դ) անգիոտենզին II ընկալիչների բլոկատորները (սարտաններ),
- ե) կալցիումական խողովակների դանդաղ բլոկատորները:

1-ին դասի համար [] [դեղորայքով] բուժվող զարկերակային հիպերտենզիայի դեպքում կարող է անհրաժեշտություն առաջանալ կիրառելու [] [] բազմանդամ անձնակազմի օդաչուի [] [] («ԲԱԱՆՍ»՝ 1-ին դասի համար) կամ [] [] 2-րդ դասի համար փոխարինող օդաչուի [] [] («ՓՕԱՆՍ»՝ 2-րդ դասի համար) [] [] [աշխատանքային ներգրավվածության [սահմանափակում]:

5. Առանց ախտանիշի կորոնար անոթների հիվանդության [կամ ծայրամասային անոթային հիվանդության] դեպքում պետք է կատարել Էլեկտրասրտագրություն՝ ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ և, հարկ եղած դեպքում, կատարել այլ հետազոտություններ (սրտամկանի պերֆուզիայի սկանավորում, սթրեսային վիճակում սրտի էխոսկոպիկ հետազոտում, կորոնարոգրաֆիա կամ ԱԲԲ-ի համար ընդունելի համարժեք այլ հետազոտություններ), որոնց արդյունքում կբացատվի սրտամկանի իշեմիան կամ կորոնար անոթի նեղացումը:

6. Սրտի իշեմիկ նոպայից և ռեվասկուլյարիզացիայից (վերաանոթավորում) [կամ ծայրամասային անոթային հիվանդությունից] հետո ախտանիշներ չունեցող դիմողի մոտ պետք է նվազի անոթների հետ կապված ցանկացած ռիսկի գործոն՝ հասնելով անհրաժեշտ մակարդակի: Չի թույլատրվում [] [այն դեղամիջոցների] օգտագործումը, որոնք նախատեսված են միայն վերահսկելու սրտի ախտանիշները: Առաջարկվում է, որ բոլոր դիմողները ստանան լիարժեք բուժում՝ բացառելով հիվանդության կրկնությունը:

Իշեմիկ սրտանոթային նոպայի ժամանակ կամ դրա ընթացքում կատարված կորոնարոգրաֆիան պետք է մատչելի լինի: Իշեմիկ սրտանոթային նոպայի, կորոնարոգրաֆիայի և կատարված ցանկացած վիրահատական միջամտության վերաբերյալ կլինիկական ուսումնասիրությունների համապարփակ և մանրամասն հաշվետվությունները պետք է մատչելի լինեն ԱԲԲ-ի համար:

Բուժման չենթարկված ցանկացած արմատական անոթում, ցանկացած երակում կամ զարկերակային շունտում կամ անգիոպլաստիկայի (լայնացողի) տեղում նեղացումը, բացառությամբ ինֆարկտի հանգեցնող անոթի, չպետք է լինի 50%-ից ավելի: Անոթային ցանցում 30%-ից 50%-ի միջակայքում գտնվող երկուսից ավելի նեղացումները չպետք է ընդունելի լինեն:

ԱԲԲ-ի պահանջները բավարարող սրտաբանը պետք է բավարար գնահատի կորոնար անոթների ամբողջ ցանցը, և առաջարկվում է հատուկ ուշադրություն դարձնել բազմակի նեղացումներին և (կամ) բազմակի ռեվասկուլյարիզացիաներին:

Կորոնար զարկերակ իջնող ձախ հիմնական կամ մոտակա ձախ անտերիորում 30%-ից ավելի չբուժված նեղացումը չպետք է ընդունելի լինի:

Սրտի իշեմիկ նոպայից և ռեվասկուլյարիզացիայից (վերաանոթավորում) վեց ամիս հետո պետք է կատարվեն հետևյալ հետազոտությունները՝

ա) էլեկտրասարտագրություն՝ ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ (ախտանիշների բացահայտման նպատակով իրականացվող թեստեր, Բրյուսի կողմից մշակված վարժությունների 4-րդ փուլ կամ մյուս համարժեք հետազոտություններ), որը ցույց չի տալիս ոչ սրտամկանի իշեմիա և ոչ էլ սրտի ռիթմի խանգարումներ:

բ) էխոսարտագրություն (ԱԲԲ-ի կողմից ընդունելի համարժեք հետազոտություն), որը ցույց է տալիս, որ ձախ փորոքի ֆունկցիան՝ սրտամկանի պատի շարժի չնչին խանգարումով (ինչպես օրինակ՝ դիսկինեզիան (շարժումախանգարում) կամ ակինեզիան (սրտի կծկվողականության անկում), ինչպես նաև 50% և ավելի՝ ձախ փորոքի արտամղման ֆրակցիան բավարար է:

գ) սրտամկանի պերֆուզիայի սկանավորում կամ սթրեսային վիճակում սրտի էխոսկոպիկ հետազոտում (ԱԲԲ-ի կողմից ընդունելի համարժեք հետազոտություն) անգիոպլաստիկայի (ստենտավորման) դեպքում, որը պետք է ցույց տա, որ սրտամկանի իշեմիան չի կրկնվի: Եթե այլ դեպքերում առկա են սրտամկանի պերֆուզիայի կասկածներ (ինֆարկտ կամ շունտավորում), ապա կպահանջվի նաև պերֆուզիայի սկանավորում:

դ) սրտի ռիթմի ցանկացած արտահայտված խանգարման վտանգը գնահատելու համար կարող է հետագա հետազոտություններ կատարելու անհրաժեշտություն առաջանալ, ինչպես օրինակ՝ շուրջօրյա էլեկտրասարտագրություն:

Հետազոտությունները պետք է անցկացվեն ամեն տարի (կամ, հարկ եղած դեպքում, ավելի հաճախ)՝ բացառելու համար սրտանոթի վիճակի վատթարացումը: Այն պետք է ներառի նաև ԱԲԲ-ի պահանջները բավարարող մասնագետի կողմից կատարվող հետազոտումը, ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ էլեկտրասարտագրությունը և սրտանոթային ռիսկի գնահատումը: ԱԲԲ-ն կարող է պահանջել՝ լրացուցիչ հետազոտություններ կատարել:

Կորոնար զարկերակի շունտավորումից հետո պետք է կատարվի սրտամկանի պերֆուզիայի սկանավորում (կամ ԱԲԲ-ի համար ընդունելի համարժեք հետազոտություն), եթե առկա է որևէ ցուցում, ինչպես նաև վիրահատությունից հետո հինգ տարիների ընթացքում ի հայտ եկող բոլոր դեպքերում:

Բոլոր դեպքերում պետք է քննարկել կորոնարոգրաֆիա կամ ԱԲԲ-ի համար ընդունելի համարժեք այլ հետազոտություն իրականացնելու հարցը, եթե ախտանիշները, նշանները կամ ոչ ինվազիվ ճանապարհով (առանց միջամտության) հետազոտությունները վկայում են սրտանոթային իշեմիայի մասին:

ԱԲԲ-ից կողմից դիմողների առողջական վիճակի գնահատում

Վեցամսյա հետազոտությունների հաջող ավարտից հետո կարող է քննարկվել [պիտանիության գնահատման հարցը՝ կիրառելով բազմանդամ անձնակազմի օդաչուի («ԲԱԱՆՍ»՝ 1-ին դասի համար) աշխատանքային ներգրավվածության սահմանափակում 1-ին դասի դիմողների [համար]:

6-րդ պարբերությունում նշված չափորոշիչները բավարարող 2-րդ դասի դիմողները կարող են թռիչքներ իրականացնել [] [առանց փոխարինող օդաչուի («ՓՕԱՆՍ»՝ 2-րդ դասի համար) աշխատանքային ներգրավվածության սահմանափակման], սակայն ԱԲԲ-ն կարող է պահանջել, որպեսզի դիմողը թռիչքն իրականացնի փոխարինող օդաչուի հետ՝ նախքան կրթույլատրվի նրան թռիչքն իրականացնել ինքնուրույն: 2-րդ դասի դիմողները, [] [Բժշկական սերտիֆիկատի նորացման [կամ դրա գործողության ժամկետի երկարաձգման] [] [համար], կարող են, ԱԲԲ-ի հայեցողությամբ և միայն 6(ա)-ում նշված ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ էլեկտրասրտագրություն անցնելուց հետո թռիչք իրականացնել՝ փոխարինող օդաչուի («ՓՕԱՆՍ»՝ 2-րդ դասի համար) աշխատանքային ներգրավվածության սահմանափակմամբ]:

7. Սրտի ռիթմի կամ անոթների հաղորդականության ցանկացած արտահայտված խանգարման դեպքում ԱԲԲ-ի պահանջները բավարարող սրտաբանը պետք է հետազոտի դիմողին և առողջական վիճակի պիտանիության գնահատման դեպքում իրականացնի համապատասխան հսկողություն:

ա) Հետազոտությունը պետք է ներառի՝

1) ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ էլեկտրասրտագրությունից մինչև Բրյուսի կողմից մշակված արձանագրությունը կամ համարժեք այլ հետազոտություններ: Առաջարկվում է հետազոտությունը կատարել առավելագույն ջանքերի ներդրմամբ կամ համաձայն առկա ախտանիշների: Պետք է հասնել Բրյուսի կողմից մշակված վարժությունների 4-րդ փուլին և չպետք է հայտնաբերվի սրտի ռիթմի կամ անոթների հաղորդականության արտահայտված խանգարումներ և սրտամկանի իշեմիա: Առաջարկվում է հետազոտությունից առաջ քննարկել սրտի աշխատանքը խթանող դեղերի օգտագործումը դադարեցնելու հարցը.

2) շուրջօրյա ամբուլատոր ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ էլեկտրասրտագրություն, որի ընթացքում չպետք է հայտնաբերվի ռիթմի կամ անոթների հաղորդականության էական խանգարում.

3) երկչափ դոպլերովյան էխոսրտագրություն, որի արդյունքում չպետք է հայտնաբերվի սրտի սելեկտիվ խորշի զգալի լայնացում կամ ֆունկցիոնալ կամ կառուցվածքային խանգարումներ և ձախ փորոքի առնվազն 50%-ի արտամղման ֆրակցիա:

բ) Հետագա հետազոտությունը կարող է ներառել.

1) [] [կրկնվող] շուրջօրյա էլեկտրասրտագրություն,

2) էլեկտրաֆիզիոլոգիական ուսումնասիրություն,

3) սրտամկանի պերֆուզիայի սկանավորումը կամ համարժեք այլ հետազոտություն,

4) մագնիսա-ռեզոնանսային հետազոտություն կամ համարժեք այլ հետազոտություն,

5) կորոնարոգրաֆիան կամ համարժեք այլ հետազոտություն (տե՛ս 6-րդ պարբերության 1-ին հավելվածը):

գ) ԱԲԲ-ն 1-ին դասի դիմողների դեպքում գնահատում է հետևյալը.

1) նախասրտերի շողացումը (թրթռումը),

i) [] [առաջին անգամ բժշկական սերտիֆիկատ ստանալիս] [] 1-ին դասի []

դիմողներից [պետք է գնահատվեն այնպիսի առիթմիայի մեկ նույն ունեցած դիմողները], որը, ըստ ԱԲԲ-ի, կարող է կրկնվել:

ii) 1-ին դասի բժշկական սերտիֆիկատի նորացման (դրա գործողության ժամկետի երկարաձգման) հարցը պետք է որոշվի ԱԲԲ-ի կողմից,

2) հիսի խրճի աջ ոտիկների լրիվ բլոկադան.

i) [[առաջին անգամ բժշկական սերտիֆիկատ ստանալիս] [] 1-ին դասի [[դիմողների [առողջական վիճակի պիտանիության գնահատման հարցը] կարող է քննարկվել ԱԲԲ-ի կողմից, եթե դիմողը մինչև 40 տարեկան է:

Եթե դիմողի տարիքը 40 տարեկանից բարձր է, ապա առաջին անգամ բժշկական սերտիֆիկատ ստացող 1-ին դասի դիմողների առողջական վիճակը պետք է, որպես կանոն, 12 ամիս կայուն լինի:

ii) 1-ին դասի բժշկական սերտիֆիկատի նորացման (գործողության ժամկետի երկարաձգման) [[համար] կարող է քննարկվել [առողջական վիճակի պիտանիության գնահատման] հարցը՝ չկիրառելով բազմանդամ անձնակազմում օդաչուի («ԲԱԱՆՍ»)՝ 1-ին դասի համար) աշխատանքային ներգրավվածության սահմանափակում, եթե դիմողը մինչև 40 տարեկան է: Առաջարկվում է [[բազմանդամ անձնակազմում օդաչուի («ԲԱԱՆՍ»)՝ 1-ին դասի համար) աշխատանքային ներգրավվածության սահմանափակում] կիրառել 12 ամսով՝ 40 տարեկանից բարձր դիմողների համար,

3) հիսի խրճի ձախ ոտիկների լրիվ բլոկադան.

կորոնար զարկերակների հետազոտություն անհրաժեշտ է կատարել 40 տարեկանից բարձր դիմողների մոտ:

i) Առաջին անգամ բժշկական սերտիֆիկատ ստանալիս 1-ին դասի դիմողների առողջական վիճակը պետք է երեք տարի կայուն լինի:

ii) 1-ին դասի բժշկական սերտիֆիկատի նորացման (դրա գործողության ժամկետի երկարաձգման) [[համար] [երեք տարի հետո, որի ընթացքում կիրառվել է բազմանդամ անձնակազմում օդաչուի («ԲԱԱՆՍ»)՝ 1-ին դասի համար) աշխատանքային ներգրավվածության սահմանափակում, կարող է քննարկվել [] [առողջական վիճակի պիտանիության գնահատման հարցը՝ չկիրառելով բազմանդամ անձնակազմում օդաչուի («ԲԱԱՆՍ»)՝ 1-ին դասի համար) աշխատանքային ներգրավվածության սահմանափակում],

4) փորոքների նախազրգոման համախտանիշը

[առաջին անգամ բժշկական սերտիֆիկատ ստանալիս ախտանիշներ չունեցող 1-ին դասի այն դիմողները, ում մոտ առկա է նախազրգոման համախտանիշ, կարող են ԱԲԲ-ի կողմից [[ճանաչվել թռիչքային աշխատանքի համար պիտանի, եթե

Էլեկտրաֆիզիոլոգիական ուսումնասիրության, այդ թվում՝ դեղորայքի ազդեցությամբ պայմանավորված վեգետատիվ նյարդային համակարգի համապատասխան խթանման արդյունքում չի բացահայտվում կրկնվող տախիկարդիա, և եթե բազմաթիվ ուղիների առկայությունը բացառվում է:

[][(ii)] Ախտանիշներ չունեցող 1-ին դասի այն դիմողները, ում մոտ առկա է նախագրգռման համախտանիշ, կարող են, բժշկական սերտիֆիկատի նորացման (գործողության ժամկետի երկարաձգման) ժամանակ, ԱԲԲ-ի կողմից [][ճանաչվել թռիչքային աշխատանքի համար պիտանի]՝ նրանց նկատմամբ կիրառելով բազմանդամ անձնակազմում օդաչուի («ԲԱԱՆՍ»՝ 1-ին դասի համար) աշխատանքային ներգրավվածության սահմանափակում:

5) սրտի ռիթմի կարգավորման սարքը.

սրտի ռիթմի կարգավորման ենթաէնդոկարդիալ սարքի մշտական տեղադրումից հետո առողջական վիճակի գնահատումը, որը պետք է կատարվի տեղադրումից հետո ոչ շուտ, քան երեք ամիս հետո, պահանջում է.

[][(i)] այնպիսի պայմանների բացառում, որոնք հիմք են՝ թռիչքային աշխատանքի համար ոչ պիտանի ճանաչվելու համար,

[][(ii)] գատման երկչափ համակարգ,

[][(iii)] որ դիմողը կախվածություն չունենա սրտի ռիթմի կարգավորման սարքից,

[][(iv)] կանոնավոր հսկողություն՝ ներառյալ սրտի ռիթմի կարգավորման սարքի գործունեության ստուգումը և

[][(v)] [][1-ին դասի բժշկական սերտիֆիկատի նորացման (գործողության ժամկետի երկարաձգման) ժամանակ] [][առողջական վիճակի պիտանիության գնահատումը պահանջում է բազմանդամ անձնակազմում օդաչուի («ԲԱԱՆՍ»՝ 1-ին դասի համար) աշխատանքային ներգրավվածության սահմանափակման կիրառում,

6) արլացիան.

կաթետերի տեղափոխման նպատակով հաջող արլացիայի ենթարկված 1-ին դասի դիմողների [առողջական վիճակի պիտանիության գնահատումը] [][պետք է պահանջվի բազմանդամ անձնակազմում օդաչուի («ԲԱԱՆՍ»՝ 1-ին դասի համար) աշխատանքային ներգրավվածության սահմանափակում առնվազն մեկ տարով, քանի դեռ արլացիայից առնվազն երկու ամիս հետո իրականացվող էլեկտրաֆիզիոլոգիական ուսումնասիրությունը ցույց չի տվել բավարար արդյունք: Եթե դիմողների մոտ ինվազիվ կամ ոչ ինվազիվ հետազոտությամբ անհնար է լինում երկարաժամկետ արդյունք ապահովել, ապա կարող է անհրաժեշտ լինել լրացուցիչ ժամկետ և (կամ) հսկողություն՝ նրանց նկատմամբ կիրառելով [

][բազմանդամ անձնակազմում օդաչուի («ԲԱԱՆՍ»՝ 1-ին դասի համար) աշխատանքային ներգրավվածության սահմանափակում:

դ) ԱԲԲ-ի կողմից 2-րդ դասի դիմողների առողջական վիճակի գնահատում.

Առաջարկվում է ԱԲԲ-ի կողմից 2-րդ դասի դիմողների առողջական վիճակի գնահատումն իրականացնել 1-ին դասի համար դիմողների առողջական վիճակի պիտանիության գնահատումից հետո: Կարող է քննարկվել [] [փոխարինող օդաչուի («ՓՕԱՆՍ»՝ 2-րդ դասի համար) աշխատանքային ներգրավվածության սահմանափակման կամ ՈԻՓԻՍ («վավեր է միայն առանց ուղևորափոխադրումների» սահմանափակման)][] կիրառումը:

8. [] [Վիրահատության չենթարկված] ինֆրարենալ որովայնային աորտայի անևրիզմա ունեցող դիմողները կարող են ԱԲԲ-ի կողմից 1-ին դասի համար [] [ճանաչվել թոփչքային աշխատանքի համար պիտանի]՝ նրանց նկատմամբ կիրառելով բազմանդամ անձնակազմում օդաչուի («ԲԱԱՆՍ»՝ 1-ին դասի համար) աշխատանքային ներգրավվածության սահմանափակում կամ 2-րդ դասի [համար]՝ կիրառելով փոխարինող օդաչուի («ՓՕԱՆՍ»՝ 2-րդ դասի համար) աշխատանքային ներգրավվածության սահմանափակում: [Հարկ եղած դեպքում, ուլտրաձայնային սկանավորմամբ հսկողություն իրականացնելու հարցը կորոշի ԱԲԲ-ն]: Առանց բարդությունների ինֆրարենալ որովայնային աորտայի անևրիզմայի կապակցությամբ վիրահատական միջամտությունից և սրտանոթային համակարգի գնահատումից հետո [] 1-ին դասի [] [դիմողները] կարող են ԱԲԲ-ի կողմից [] [ճանաչվել թոփչքային աշխատանքի համար պիտանի] [] [բազմանդամ անձնակազմում օդաչուի աշխատանքային ներգրավվածության սահմանափակման կիրառմամբ («ԲԱԱՆՍ»՝ 1-ին դասի համար), ինչպես նաև] ԱԲԲ-ի կողմից հաստատված հսկողությունից հետո, [2-րդ դասի դիմողների առողջական վիճակի պիտանիության գնահատումը կարող է պահանջել

փոխարինող օդաչուի («ՓՕԱՆՍ»՝ 2-րդ դասի համար) աշխատանքային ներգրավվածության սահմանափակման կիրառում:

9. ա) [] [Այն դիմողները, ում մոտ նախկինում չեն արձանագրվել սրտի աղմուկներ, պետք է զննվեն ԱԲԲ-ի պահանջները բավարարող սրտաբանի կողմից, ինչպես նաև ԱԲԲ-ի կողմից պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար պիտանի: Եթե սրտի աղմուկներն ուժգին են, ապա առնվազն պետք է կատարել երկչափ դոպլերոլյան էխոսրտագրություն:

բ) *Փականի ֆունկցիայի խանգարումներ*

1. [] [Այն դիմողները, ում մոտ առկա է երկփեղկ] աորտալ փական, [] [կարող են ճանաչվել թոխչքային աշխատանքի համար պիտանի՝ նրանց նկատմամբ չկիրառելով [] [բազմանդամ անձնակազմում օդաչուի («ԲԱԱՆՍ»՝ 1-ին դասի համար) կամ փոխարինող օդաչուի («ՓՕԱՆՍ»՝ 2-րդ դասի համար) աշխատանքային ներգրավվածության սահմանափակում, եթե չկան սրտի ֆունկցիայի կամ աորտայի խանգարումներ []: [Էխոսրտագրությամբ հսկողություն իրականացնելու հարցը, հարկ եղած դեպքում, կորոշի ԱԲԲ-ն]:

2) [] [Այն դիմողները, ում մոտ առկա է աորտալ փականի] նեղացում [] [պետք է ԱԲԲ-ի կողմից անցնեն հետազոտություն] [] [մինչդեռ ձախ փորոքի ֆունկցիան պետք է մնա ինտակտ: Կրծքային աորտայի սիստեմային էմբոլիան կամ արտահայտված դիլատացիան հիմք է՝ թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի ճանաչվելու համար: Այն դիմողները, ում մոտ առկա է մինչև 20մմ սնդ.ա. միջին ճնշում], կարող են ճանաչվել թոխչքային աշխատանքի համար պիտանի [] []: Այն դիմողները, ում մոտ առկա է 20մմ սնդ.ա.-ից բարձր, բայց 40մմ սնդ.ա.-ից ոչ բարձր միջին ճնշում, կարող են ճանաչվել թոխչքային աշխատանքի համար պիտանի 2-րդ դասի կամ 1-ին դասի համար, սակայն բազմանդամ անձնակազմում օդաչուի աշխատանքային ներգրավվածության սահմանափակման կիրառմամբ («ԲԱԱՆՍ»՝ 1-ին դասի համար): Մինչև 50մմ սնդ.ա. միջին ճնշումը կարող է լինել ընդունելի՝ ԱԲԲ-ի հայեցողությամբ: [] [Երկչափ դոպլերոլյան էխոսրտագրությամբ հսկողություն իրականացնելու հարցը, հարկ եղած դեպքում, կորոշի ԱԲԲ-ն]:

3) [] [Այն դիմողները, ում մոտ առկա է աորտալ փականի անբավարարություն, [] [կարող են ճանաչվել թոխչքային աշխատանքի համար պիտանի՝ նրանց նկատմամբ չկիրառելով բազմանդամ անձնակազմում օդաչուի («ԲԱԱՆՍ»՝ 1-ին դասի համար) կամ փոխարինող օդաչուի աշխատանքային ներգրավվածության սահմանափակում («ՓՕԱՆՍ»՝ 2-րդ դասի համար), եթե այն արտահայտված չէ: Երկչափ դոպլերոլյան էխոսրտագրությունը չպետք է ցույց տա վեր բարձրացող աորտայի արտահայտված խանգարում: [] [Բժշկական հսկողություն իրականացնելու հարցը, հարկ եղած դեպքում, կորոշի ԱԲԲ-ն]:

4) [] [Ռեմատիկ միտրալ փականի հիվանդությամբ տառապող դիմողները [] [] սովորաբար [պետք] է [] [ճանաչվեն թոխչբային աշխատանքի համար ոչ պիտանի]:

5) Միտրալ փականի արտանկում (աորտալ փականի անբավարարություն): Միջսիստոլիկ չիկոցից տառապող, ախտանիշ չունեցող դիմողների դեպքում կարող է բազմանդամ անձնակազմում օդաչուի («ԲԱԱՆՍ»՝ 1-ին դասի համար) կամ փոխարինող օդաչուի աշխատանքային ներգրավվածության սահմանափակում («ՓՕԱՆՍ»՝ 2-րդ դասի համար) կիրառելու անհրաժեշտություն չլինել: [] [Չբարդացած փոքր անբավարարություն ունեցող [] [1-ին դասի դիմողների համար] [] [ԱԲԲ-ի կողմից որոշված բազմանդամ անձնակազմում օդաչուի («ԲԱԱՆՍ»՝ 1-ին դասի համար) աշխատանքային ներգրավվածության սահմանափակման անհրաժեշտություն կարող է առաջանալ: Ձախ փորոքի վերջնական դիաստոլիկ տրամագծի արդյունքում բարձրացած ձախ փորոքի ծավալի ծանրաբեռնվածություն ունեցող դիմողները պետք է ճանաչվեն թոխչբային աշխատանքի համար ոչ պիտանի: Անհրաժեշտ է կատարել ԱԲԲ-ի կողմից սահմանված պարբերաբար հետազոտություն և առողջական վիճակի գնահատում:

գ) *Սրտի փականի վիրահատություն*

1) Այն դիմողները, ում սրտում տեղադրված է փականի արհեստական պրոթեզ, պետք է ճանաչվեն թոխչբային աշխատանքի համար ոչ պիտանի:

2) ԱԲԲ-ն, ելնելով ստորն նշվածից, կարող է քննարկել հիվանդության ախտանիշ չունեցող այն դիմողների առողջական վիճակի պիտանիության գնահատման հարցը, ում սրտում տեղադրվել է փականի բիոպրոթեզ և վիրահատությունից առնվազն վեց ամիս պետք է հաջողությամբ անցած լինեին անհրաժեշտ հետազոտությունները, որոնք ցույց են տվել փականի և փորոքային նորմալ կոնֆիգուրացիա ու ֆունկցիա՝

i) ախտանիշների բացահայտման նպատակով էլեկտրասրտագրություն՝ ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ, ինչպես նաև Բրյուսի կողմից մշակված վարժությունների 4-րդ փուլը կամ մյուս համարժեք հետազոտությունները, որոնք ԱԲԲ-ի պահանջները բավարարող սրտաբանը մեկնաբանում է որպես ոչ արտահայտված խանգարում: Պետք է կատարել սրտամկանի սցինտիգրաֆիա (սթրեսային վիճակում սրտի էխոսկոպիկ հետազոտում), եթե հանգստի վիճակում կատարված էլեկտրասրտագրությունն անկանոն է և ցույց է տվել կորոնար զարկերակի որևէ հիվանդություն: Տե՛ս նաև Բ և Գ ենթամասերի 1-ին հավելվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ պարբերությունները:

ii) երկչափ դոպլերոլյան էխոսրտագրությունը, որը ցույց չի տալիս սրտի սելեկտիվ խոռոչի զգալի լայնացում, փականի բիոպրոթեզ՝ նվազագույն կառուցվածքային

փոփոխություններով և Դոպլերովյան արյան նորմալ հոսքով, ոչ էլ սրտի մյուս փականների ֆունկցիոնալ խանգարումներ: Ձախ փորոքի ֆրակցիայի կրճատումը պետք է նորմալ լինի.

iii) կորոնար զարկերակի հիվանդության ակնհայտ բացակայություն, քանի դեռ չի կատարվել ռեվասկուլյարիզացիա, տե՛ս վերը նշված 7-րդ պարբերությունը.

iv) սրտի աշխատանքը խթանող դեղեր ընդունելու պահանջի բացակայություն.

v) [] [Ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ էլեկտրասրտագրությամբ և երկչափ էխոսրտագրությամբ հսկողություն իրականացնելու հարցը, հարկ եղած դեպքում, կորոշի ԱԲԲ-ն]:

[1-ին դասի] դիմողների պիտանիության գնահատման ժամանակ [] [պետք է քննարկվի] բազմանդամ անձնակազմում օդաչուի [] ([] [«ԲԱԱՆՍ»՝ 1-ին դասի համար) աշխատանքային ներգրավվածության սահմանափակման հարցը: [] [2-րդ դասի դիմողների] պիտանիության գնահատման դեպքում [փոխարինող օդաչուի («ՓՕԱՆՍ»՝ 2-րդ դասի համար)] աշխատանքային ներգրավվածության սահմանափակումը] կարող է չկիրառվել:

10. Հակամակարդիչներով բուժում անցած դիմողները պետք է հետազոտվեն ԱԲԲ-ի կողմից: Երակների տրոմբոզը կամ թոքային զարկերակի էմբոլիան հիմք է՝ թոնիչքային աշխատանքի համար ոչ պիտանի ճանաչելու համար, քանի դեռ չի դադարեցվել հակամակարդիչների օգտագործումը: Թոքային էմբոլը պահանջում է մանրակրկիտ զննում: Հակամակարդիչները, որոնք օգտագործվում են թոքային զարկերակի հունի հնարավոր թրոմբոէմբոլիկ խցանումը վերացնելու համար, հիմք են՝ թոնիչքային աշխատանքի համար ոչ պիտանի ճանաչելու համար:

11. Էպիկարդի (միոկարդի) և (կամ) թե՛ առաջնային կամ թե՛ երկրորդային էնդոկարդի խանգարումներով տառապող դիմողները պետք է ճանաչվեն թոնիչքային աշխատանքի համար ոչ պիտանի, քանի դեռ չի ստացվել բժշկի եզրակացությունը: ԱԲԲ-ն սրտանոթային համակարգը գնահատելու համար կարող է կատարել երկչափ դոպլերոլյան էխոսրտագրություն, ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ էլեկտրասրտագրություն և (կամ) սրտամկանի սցինտիգրաֆիա (սթրեսային վիճակում սրտի էխոսկոպիկ հետազոտում) և շուրջօրյա ամբուլատոր ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ էլեկտրասրտագրություն: Հնարավոր է կորոնարոգրաֆիա կատարելու ցուցում առաջանա: Առողջական վիճակի գնահատում կատարելուց հետո անհրաժեշտ է հաճախ կատարել հետազոտություն [] և կիրառել բազմանդամ անձնակազմում օդաչուի [] («ԲԱԱՆՍ»՝ 1-ին դասի համար) կամ փոխարինող օդաչուի աշխատանքային ներգրավվածության սահմանափակում [] («ՓՕԱՆՍ»՝ 2-րդ դասի համար):

12. Սրտի բնածին արատով տառապող՝ ներառյալ վիրահատական միջամտության ենթարկված դիմողները պետք է, որպես կանոն, ճանաչվեն թոնիչքային աշխատանքի համար ոչ պիտանի, քանի դեռ ֆունկցիոնալ առումով պիտանի չեն և չեն դադարեցրել դեղորայքի օգտագործումը: ԱԲԲ-ն պետք է կատարի սրտանոթային համակարգի հետազոտում: Կարող է կատարվել երկչափ դոպլերոլյան էխոսրտագրություն, ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ էլեկտրասրտագրություն և շուրջօրյա ամբուլատոր ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ էլեկտրասրտագրություն: Պետք է պարբերաբար կատարել սրտանոթային համակարգի զննում: Կարող է պահանջվել [] [բազմանդամ անձնակազմում օդաչուի] («ԲԱԱՆՍ»՝ 1-ին դասի համար) և փոխարինող օդաչուի աշխատանքային ներգրավվածության [] [սահմանափակում] կիրառել («ՓՕԱՆՍ»՝ 2-րդ դասի համար):

13. Այն դիմողները, ովքեր տառապել են հաճախ կրկնվող սինկոպային վիճակներից, պետք է ենթարկվեն հետևյալ հետազոտությունների՝

i) ախտանիշների բացահայտման նպատակով, ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ, 12 արտածումով էլեկտրասրտագրության, ինչպես նաև Բրյուսի կողմից մշակված

վարժությունների 4-րդ փուլը կամ համարժեք մյուս հետազոտությունները, որոնք ԱԲԲ-ի պահանջները բավարարող սրտաբանը չի մեկնաբանում որպես խանգարում: Եթե հանգստի վիճակում կատարված էլեկտրասրտագրությունն անկանոն է, պետք է կատարել սրտամկանի սցինտիգրաֆիա (սթրեսային վիճակում սրտի էխոսկոպիկ հետազոտում):

բ) երկչափ դոպլերովյան էխոսրտագրության, որը ցույց չի տալիս սրտի սելեկտիվ խոռոչի զգալի լայնացում, ոչ էլ սրտի, փականների և միոկարդի կառուցվածքային կամ ֆունկցիոնալ խանգարում:

գ) շուրջօրյա ամբուլատոր ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ էլեկտրասրտագրության, որը ցույց չի տալիս հաղորդականության խանգարում, ռիթմի բարդ և կայուն խանգարում, սրտամկանի իշեմիա:

դ) և կարող է ներառել ստանդարտ ձևաթղթի հիման վրա իրականացվող օրթոստատիկ հետազոտություն, որը, ԱԲԲ-ի պահանջները բավարարող սրտաբանի կարծիքով, ցույց չի տալիս անոթաշարժական համակարգի անկայունություն:

Այն դիմողները, ովքեր անցնում են նշված հետազոտությունները, կարող են ճանաչվել թոխչքային աշխատանքի համար պիտանի՝ նրանց նկատմամբ կիրառելով բազմանդամ անձնակազմում օդաչուի («ԲԱԱՆՍ»՝ 1-ին դասի համար) կամ փոխարինող օդաչուի աշխատանքներին ներգրավվածության սահմանափակում («ՓՕԱՆՍ»՝ 2-րդ դասի համար), հիվանդությունից հետո ոչ պակաս, քան վեց ամիս, եթե այն չկրկնվի: Անհրաժեշտ է, որպես կանոն, կատարել նյարդաբանական հետազոտություն: [] [Նախքան թոխչքային աշխատանքի համար պիտանիության գնահատումը՝ դիմողը հինգ տարի պետք է նույա ունեցած չլինի՝ նրա նկատմամբ չկիրառելով բազմանդամ անձնակազմում օդաչուի («ԲԱԱՆՍ»՝ 1-ին դասի համար) կամ փոխարինող օդաչուի աշխատանքային ներգրավվածության սահմանափակում («ՓՕԱՆՍ»՝ 2-րդ դասի համար):] Կախված կոնկրետ գործի հանգամանքներից՝ ԱԲԲ-ն կարող է հարցի քննարկման համար սահմանել ավելի կարճ կամ ավելի երկար ժամկետ: Այն դիմողները, ում մոտ եղել է գիտակցության կորուստ՝ առանց արտահայտված նախանշանների, պետք է ճանաչվեն թոխչքային աշխատանքի համար ոչ պիտանի:

14. Սրտանոթային համակարգում վտանգավոր վիճակների գնահատումը բացատրվում է նաև Ձեռնարկի «Ուռուցքաբանության մասին» գլխում, որտեղ ներկայացվում են [] [գնահատմանը] վերաբերող տեղեկություններ: Առաջարկվում է այն դիտարկել այս համակարգին վերաբերող գլխի հետ միասին:

(Տե՛ս 2-րդ բաժինը, «Ավիացիոն կարդիոլոգիա» գլուխ)

[Փոփոխություն 1, 2000 թվականի դեկտեմբերի 1, փոփոխություն 4, 2005 թվականի օգոստոսի 1, փոփոխություն 5, 2006 թվականի դեկտեմբերի 1]

Բ և Գ ենթամասերի 2-րդ հավելված (շարունակություն)

Բ և Գ ենթամասերի 2-րդ հավելված

Շնչառական համակարգ

(Տե՛ս ՋԱՌ–ՖՍԼ 3.155, 3.160, 3.275 և 3.280)

